Azg Ազգ

1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007 ՇԱԲԱԹ 158 (3810)

ԼՂՀ-ի ճանաչումը դեռ շո՞ւտ է

Հայաստանի արգտրծանախարարությունը արձագանքելով «Ժառանգություն» կուսակցության հայտարարությանը, իր խոսնակի միջոցով հաղորդում է, որ «Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի ճանաչումը մշտապես եղել է եւ շարունակում է լինել ՀՀ արտաքին քաղաքականության գինանոցում: Այն պետք է լինի այնպիսի պահի, որը կունենա առավելագույն արդյունավետություն եւ կնպաստի հարցի վերջնական հանգուցալուծմանը: Այդ պահը դեռեւս չի եկել», նշում է Վլադիմիր Կարապետյանը:

Մութաֆյան պատրիարքը պահանջում է

Թուրքական «Հուրիեթ» թերթին տված հարցազրույցում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը անաբեկչական է համարել Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաչօղլուի ձեռքում 100 հազարավոր հավատափոխ եղած հայերի անուններն ու հասցեները լինելու մասին վերջինիս արած հայտարարությունը եւ պահանջել նրանից հրապարակել դրանք: Հալաչօղլուի այն պնդմանը, թե ինքը պատրիարքի բարեկամն է, Մութաֆյանը պատասխանել է, որ բարեկամությունը նման ռասիստական հայտարարությունների հետ կապ ունենալ չի կարող:

Տես նաեւ էջ 5

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՈՒՅՑ ՍՈՒՐԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական մեր օրհնությունն ենք հղում կրթության ասպարեզի սպասավորներին, ուսանողներին, աշակերտներին՝ Գիտելիքի, գրի եւ դպրության տոնի եւ ուսումնական նոր տարվա վերաբացման առիթով:

Այսօր ողջույնի խոսքերով, ուրախ սրտերով վերսին բացվում են ուսումնական հաստատությունների դռները: Սկսվում է նոր ուսումնական տարին՝ նոր տեսիլքներով, երազներով ու հույսերով: Մեր աղոթքն է, որ այն լինի եռանդով եւ ջանասիրությամբ լեցուն ու արգասաբեր:

Գիտության եւ կրթության լույսով պիտի կերտենք մեր երկրի եւ ազգի նոր կյանքը եւ առաջընթացը: Երիտասարդ սերնդի ազգային ոգով կրթությունը եւ հայրենի սրբազան արժեքներով դաստիարակությունն է գրավականը մեր ժողովրդի գոյության հարատեւության:

Սիրելի զավակներ, կրթության ճանփան դժվարին է, բայց օրհնյալ եւ շնորհաբեր: Այն երջանիկ ու ստեղծարար կյանքի ուղին պիտի հարթի ձեզ՝ դեպի արդարի լուսավոր հորիզոններ:

Բարի ընթացք ձեզ 2007-2008 ուսումնական տարում:

Թող Հիսուս Քրիստոսի աստվածային ամենաառաս սերն ու շնորհները միշտ ձեզ հետ լինեն. ամեն:

Մեծարգո ուսուցիչներ Սիրելի աշակերտներ Հարգելի ծնողներ

Սրտանց շնորհավորում եմ Գիտելիքի օրվա կարակցությամբ, բոլորիդ մաղթում եմ առողջություն, հաջողություն աշխատանքում եւ ուման մեջ, նվիրական իղձերի իրականացում:

Ահա սկսվեց նոր ուսումնական տարին, որը հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում եւ բուհերում գիտելիքների, մասնագիտական հմտությունների ձեռքբերման, քաղաքացիական կեցվածքի ձեւավորման հերթական փուլն է:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը քաղաքական ասպարեզ է մտել այն հաստատ համոզմամբ, որ մեր պետության առջեւ ծառացած գլխավոր խնդիրներից մեկը գիտելիքի վրա հիմնված հանրային կառավարման համակարգի ձեւավորումն է: Իսկ դա նշանակում է, որ միայն համակողմանի զարգացած, գիտելիքներով հարուստ քաղաքացին է ի վիճակի իր գործունեությամբ նպաստել մեր հայրենիքի առաջընթացին:

Մենք աշխատելու ենք հանուն այդ նպատակի, մեր համախոհների ու համակիրների սվար բանակի մտավոր ներուժը ծառայեցնելու ենք այդ լուսավոր նպատակի իրականացմանը:

Հավատացած եմ, որ բարության, գեղեցիկի եւ լույսի սերմնացան մանկավարժներն այստեղ եւս կշարունակեն ազգապահպան իրենց գործը, որովհետեւ դպրոցը մեր պետության հիմնասյուներից մեկն է:

Հաջողություն եմ մաղթում ձեզ ձեր շնորհակալ աշխատանքում:

ԳԱՐԵԳԻՆ ԾԱՌՈՒԿՅԱՆ

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ

ՀԱՄԱՌՈՏ

Ալիեւն օգնում է հանցագործին

Ըստ ռուսական ինտերֆաքս կայքերի, Ռուսաստանի կողմից հետախուզվող ռուս օլիգարխ Միխայիլ Գուցերիեւը Բրիտանիա է մեկնել նախապես լինելով Ադրբեջանում եւ Թուրքիայում: Հաղորդվում է, որ այդ ողջ ընթացքում նրա անվտանգությունն ապահովել է Իլհամ Ալիեւի թիկնազորի ղեկավար Բեյլար Էյուբովը:

Իրաքը լրագրողների տեղը չէ

«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը հաղորդում է, որ իրական պատերազմի ընթացքում զոհվել է 200 լրագրող: Վերջին նման դեպքը գրանցվել էր օգոստոսի 25-ին, երբ առեւանգվել եւ սպանվել էր CBS-ի թարգմանիչը: Հաղորդվում է, որ զոհվածների 88 տոկոսը իրաքցիներ են:

Ցույց Գազայի հատվածում

Պաղեստինի այս հատվածը համասականների գրավելուց հետո այստեղ առաջին անգամ բազմահազարանոց ցույց է տեղի ունեցել ընդդեմ «Համասի»: Ըստ Բի-Բի-Սի-ի, բախում է տեղի ունեցել ցուցարարների եւ համասականների միջեւ, կան վիրավորներ: Գազան վերահսկող «Համաս» շարժման ղեկավարները զգուշացրել են բնակիչներին չմասնակցել նմանատիպ հավաքներին:

Գաղտնիքները բացահայտված

Ըստ ՌԻԱ-Նովոստի գործակալության, շվեդ հակերը ինտերնետ ցանցում տեղակայել է մի շարք երկրների դեսպանատների էլեկտրոնային փոստի գաղտնաբառերը: Հակերին հաջողվել է բացահայտել Շվեդիայում Ռուսաստանի, Հնդկաստանում ԱՄՆ-ի եւ մի շարք այլ երկրների դեսպանատների էլեկտրոնային փոստերի գաղտնաբառերը: Գաղտնազերծված կոդերի թիվը անցնում է 100-ը:

Խզում

27 տարվա համագործակցությունից հետո ամերիկյան CNN հեռուստաընկերությունը դադարեցրել է իր համագործակցությունը բրիտանական Reuters գործակալության հետ: Կողմերը հավաստիացնում են, որ խզումը պայմանավորված է ֆինանսական խնդիրներով:

Հերթական հանցագործությունը Ինգուշիայում

Երեկ երեկոյան պայթյուն է որոտացել Նազրան քաղաքի կենտրոնում: Ըստ նախնական տվյալների, պայթել է քաղաքի կենտրոնում տեղակայած մեքենան, զոհվել է 4 ոստիկան: Սկսված է հետաքննություն:

Հայկական մատուռ Մոսկվայում

Մոսկվայում, Հայրենական պատերազմում զոհված մարտիկներին նվիրված, «Պակլոննայա գառա» կոչվող վայրում կառուցվելու է հայկական մատուռ: Հաղորդվում է, որ մատուռի կառուցման ֆինանսավորումն իր վրա է վերցրել «Կրթություն» հիմնադրամը: Ըստ հիմնադրամի նախագահ Հրանտ Պողոսյանի, Մոսկվայի քաղաքապետարանն արդեն հաստատել է նշված ծրագիրը:

18 նոր տրոլեյբուսներ Երեւանի փողոցներում

Երեւանի քաղաքապետարանը շգտում է քարելավել տրանսպորտային սպասարկումը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վերջին 15 տարիների ընթացքում առաջին անգամը լինելով, Երեւանը ստացավ 18 նոր՝ 2007 թ.-ի արտադրության «ԼԻԱԶ» տրոլեյբուսներ: Դրանք արտադրվել են Ռուսաստանի Դաշնության Լիկենսկի ավտոգործարանում եւ Հայաստան բերվել Վոլգոգրադ քաղաքից: Ի տարբերություն շահագործվող հին տրոլեյբուսների, նորերն ունեն ժամանակակից հարմարություններ եւ մեծ տեղատարողություն: Դրանք նախատեսված են 116 ուղեւորի համար: Ռուսաստանյան արտադրության նոր տրոլեյբուսներից մեկը հարմարեցված է հաշմանդամների համար: Նրա վրա տեղադրված է հատուկ շարժական հարթակ, որը հնարավորություն է տալիս հաշմանդամներին սայլակներով բարձրանալու եւ իջնելու:

Տրոլեյբուսների ձեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 600 մլն դրամ: Դրանք կշահագործվեն չորս՝ թ. 1, թ. 2, թ.15 եւ թ. 5 երթուղիներում: Ուղեւորափոխադրումների արժեքը կմնա անփոփոխ՝ 50 դրամ, քանի որ ուղեվարձի մի մասը փոխհատուցվում է պետական բյուջեից տրվող լրավճարից:

Ինչպես տրոլեյբուսների երթուղիներ մուտք գործելու կարակցությամբ տեղի ունեցած արարողության ժամանակ լրագրողներին ասաց Երեւանի քաղաքապետ **Երվանդ Զախարյանը,** յոտաանչյոտ տարի նախատեսված է մոտ 20 նոր տրոլեյբուս ներկրել եւ այս 18 նոր տրոլեյբուսների ներկրումն այդ ծրագրի բաղկացուցիչ մասն է: Մոտակա մի քանի տարիներին տարեկան առնվազն 20 տրոլեյբուսներ ներկրելու դեպքում դրանց թիվը նախատեսվում է հասցնել 120-ի:

Տես էջ 2

Սեպտեմբերյան զրնգուն եւ հուսադրող դողանշներ

Հանրապետության բոլոր դպրոցներում այսօր սկիզբ կառնի նոր ուսումնական տարին՝ առաջին անգամ դպրոց գնող 35 հազար առաջին դասարանցիների ջինջ ժպիտներով, անմեղ հայացքներով, արտասովոր պատկերացումներով, որոնք, երանի թե, միշտ պահպանվեն ու չդպրվեն հուսալքության ու հիասթափության շղարշով, մանավանդ որ առաջին դասարանցիների թիվը վերջին 3 տարիներին նվազել է ավելի քան 4 հազարով: Դպրոցը գիտելիքի աղբյուր տեսնելու նրանց ծնողների ու բոլորիս հույսերը, ո՞վ գիտի, գուցե արդարանան 12-ամյա կրթության բերած փոփոխություններով՝ գունագեղ նոր դասագրքերով, վերապատրաստվող ուսուցիչներով, թեստային նոր համակարգով, համակարգչային դասարաններով: Նախորդ տարվա համեմատ, այս սեպտեմբերը կարծես ավելի հանգիստ է գալիս՝ չկա նախկին իրարանցումը, 6 տարեկանների համար հարմար պայմաններ ստեղծելու պահանջը, 12-ամյա կրթության անցնելու անհանգստությունը: Այս օրերին ամենից շատ խոսվում է դպրոցական համազգեստ կրել-չկրելու եւ դրանից ծագած խնդիրների մասին, որոնք վաղուց արդեն պետք է պեսականորեն լուծված լինեին, եթե, իհարկե, պահպանվեր խորհրդային դպրոցում եղած դրականն ու լավը: Բայց, ավաղ, բազում հարցեր նորից դնում ենք շրջապտույտի մեջ, առաջ բերում նորանոր բարդություններ ու տառապում դրանց բովում: Օրինակ, դպրոցների տնօրեններին «անկախություն» տալու հետեւանքները տեսնելուց հետո միայն կրթության նախարարությունը հասկացավ ու համոզվեց, որ պետք է ստեղծել վերահսկող տեսչություն: Կրթության նախարարության հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը «Ուրբաթ» ակումբում ընդգծեց, որ այդ մարմինը գործում է անցած տարվանից եւ մեկ տարվա ընթացքում պետք է 40 դպրոցի տնօրենների, թե ինչ ձեւով, կարելի է տեղեկանալ միայն տեսչությունից, եթե, իհարկե, վերջինս պատշաճ համարի մանրամասներ հաղորդելը:

Տնօրենների, մասնավորապես Արմավիրի մարզի դպրոցների, մենաշնորհական կեցվածքի մասին նա նշեց, որ իրենց տվյալ մարզից դժգոհություններ չեն հասել: Իսկ դպրոցական համազգեստ կրելու որոշումը, իրոք, ներին հարց է, լուծելի տնօրենների ու ծնողների համաձայնությամբ: Նախարարությունը չի միջամտում, քանի որ վաղուց ընդունել է դպրոցական ազատ հագուստի մասին որոշումը: Դպրոցներում որոշակի լարվածություն է առաջացրել նաեւ այս տարվա հունվարի մեկից ուժի մեջ մտած կառավարության որոշումը, համաձայն որի դպրոցները ֆինանսավորվում են ըստ աշակերտների թվի: Լուրջ խնդիրներ են առաջացել հատկապես մարզային դպրոցներում, որտեղ աշակերտների թիվը պահանջվող 400-ից փոքր է: Ասպիսիսից հետո Նարինե Հովհաննիսյանը պատրաստվում էր մեկնել Սյունիք, նշյալ եւ կրթական այլ հարցերը քննելու համար: Թե՛ մարզերի, թե՛ մայրաքաղաքի դպրոցների առաջին դասարանցիներին կնվիրվեն բոլոր դասագրքերը, բացի երգեցողության եւ օտար լեզվի դասագրքերից: Միջին դպրոցի աշակերտները 12 անուն նոր դասագրքերից յուրաքանչյուրի համար կվճարեն 300-400 դրամ, որեւէ աշակերտ առանց դասագրքի չի մնա եւ ստիպված չի լինի ձեռք բերել շուկայական գնով: Ի դեպ, միջին դպրոցի նոր դասագրքերի ամբողջական փաթեթը գրքի շուկայում վաճառվում է մոտ 20 հազար դրամով, իսկ դպրոցում՝ 4-5 հազարով:

Առաջիկայում կսկսվի ավագ դպրոցի դասագրքերի նախապատրաստումը, իսկ հոկտեմբերին բոլոր դպրոցներին կբաժանվեն հայոց լեզու եւ գրականության, մաթեմատիկայի եւ օտար լեզվի քննությունների համար մշակված թեստերի ուղեցույցները, որպեսզի ամբողջ տարվա ընթացքում աշակերտները վարժվեն եւ պատրաստ լինեն տարեվերջյան ավարտական եւ միասնական քննություններին:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

18 նոր տրոլեյբուսներ Երեւանի փողոցներում

1-ին էջից

Քաղաքապետն անդրադարձավ Երեւանում տրանսպորտային սպասարկումը բարելավելու մյուս ծրագրերին եւս: Նա մասնավորապես հայտնեց, որ քաղաքապետարանի պատվերով ստեղծված նոր երթուղային ցանցով, ի թիվս տրոլեյբուսների եւ մետրոյի գործունեության աշխուժացման, նախատեսվում է էապես ավելացնել ավտոբուսների եւ նվազեցնել միկրոավտոբուսների թիվը: Արդեն այս տարի պետական միջոցներով ներկրվել են 40, իսկ մասնավորների կողմից՝ 20 նոր ավտոբուսներ: Նախատեսվում է մինչեւ տարեվերջ ներկրված ավտոբուսների թիվը հասցնել 120-ի, իսկ առաջիկա տարիներին յուրաքանչյուր տարի պետական եւ մասնավոր ներդրողների միջոցներով ներկրել 150 ավտոբուս:

Այսպիսով, երեք-չորս տարի հետո, շահագործվող 3200-ի փոխարեն ծրագրվում է միկրոավտոբուսների թիվը կրճատել, հասցնելով մինչեւ 1500-ի, իսկ ավտոբուսների թիվը ներկայիս 230-ի փոխարեն հասցնել 700-ի: Հիշեցնենք, որ 181 «Բոգդան» եւ 50 «ՊԱԶ» նոր ավտոբուսները քաղաքապետի նախաձեռնությամբ եւ պետական բյուջեի, միջպետական վարկի, մասամբ նաեւ մասնավորների միջոցներով Հայաստան են ներկրվել վերջին երեք-չորս տարիներին: Ավտոբուսներով սպասարկումը խթանելու համար քաղաքապետարանը որոշել է դրանց սպասարկումը նույնպես հանձնել մասնավորին: Կառավարության որոշմամբ արդեն այդ կարգը սահմանվել է: Ենթադրվում է, որ դա մրցակցություն կառաջացնի երթուղիները սպասարկող կազմակերպությունների միջեւ եւ կդդի նրանց ոչ թե աղավնել պետության ներկրած ավտոբուսներին, այլ սեփական միջոցներով ավտոբուսներ ներկրել:

Ի դեպ, Երեւանի քաղաքապետի որոշմամբ, երեկ «Ռենո» մակնիշի ավտոբուսներից մեկն անհաստույց հասկացվեց Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության հասարակական բարեգործական կազմակերպությանը: Այն վերանորոգվել է եւ վերասարքավորվել հաշմանդամների համար: Նրանում եւս տեղադրվել է հաշմանդամների սայլակները բարձրացնելուն հարմարեցված հատուկ շարժական սանդուղք: Հաշմանդամները եւ նրանց ներկայացնող կազմակերպությունը երախտագիտությամբ ընդունեցին քաղաքապետի նվերը:

Վերադառնալով տրոլեյբուսների խնդրին, նշենք, որ «Երեւանի էլեկտրատրանսպորտ» ընկերության տնօրեն Հարություն Երեմյանը, ի պատասխան մեր հարցի, հայտնեց, որ դեռ շահագործվում են 72 հին տրոլեյբուսներ, որոնցից այլեւս չեն արտադրվում եւ մեծ դժվարություն է նրանց նորոգելը: Այս առումով եւս 18 նոր տրոլեյբուսների ներկրումն անհրաժեշտ էր եւ նպատակային:

Զուցեցինք նաեւ տրոլեյբուսները մասակարարած «Ռուսական ավտոբուսներ» խմբի արտադրական տնտեսական գործունեության գծով տնօրեն **Անդրեյ Ժբանինիկովի** հետ: Վերջինս հայտնեց, որ խմբի կազմի մեջ մտնող Լիկենսկի ավտոգործարանն այս տարի արտադրել է 100 տրոլեյբուս: Սակայն ընկերությունը հիմնականում զբաղված է ավտոբուսների արտադրությամբ, որոնք մատակարարվում են Ռուսաստանի եւ ԱՊՀ այլ երկրների քաղաքներին: Տնօրենն իր ուրախությունը հայտնեց Երեւանի տրանսպորտային սպասարկման բարելավման ծրագրին ընկերության մասնակցության համար եւ հույս հայտնեց, որ համագործակցությունը կշարունակվի:

Մնում է միայն հուսալ, որ տրանսպորտային սպասարկման բարելավման քաղաքապետարանի ծրագրերն ու ձեռնարկումները, ի վերջո, կլուծեն անլուծելի թվացող տրանսպորտի խնդիրը մայրաքաղաքում եւ կազատեն երեւանցիներին գերբեռնված միկրոավտոբուսներով երթեւեկելու ամենօրյա պարադոքսից:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բացվեց «Հրաչ և Սյուզան Թուֆայան» հայորդյաց տունը

Օգոստոսի 31-ին հանդիսաքեռությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տեղի ունեցավ էջմիածին քաղաքի հայորդյաց տան բացման արարողությունը: Հայորդյաց տան մուտքին Նորին սրբությունը եւ Թուֆայան ընտանիքի անդամները, կտրելով կարմիր ժապավենը, բացեցին հաստատությունը: Ներսում հանդիսաքեռությամբ Նորին սրբության կատարվեց վերանորոգված հայորդյաց տան օրհնության կարգ, որից հետո դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ պատրաստված Սուրբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող Երեւանի Նորքի, Մալաթիայի, Արաբկիրի, ինչպես նաեւ Էջմիածնի հայորդյաց տների սաների ջանքերով:

ԱՆՎԱՎԵՐ ԵԱՄԱԿԱՆԻՇՆԵՐ

«Հայփոստն» այժմ էլ վնասներ է կրում անօրինական նամականիշների պատճառով

«Հայփոստ» ընկերությունից տեղեկանում ենք, որ 2007 թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում եւ նրա տարածքից դուրս անօրինական տպագրվել, թողարկվել եւ վաճառվել են 51 տեսակի նամականիշեր, ինչի պատճառով ընկերությունը կրել է վնասներ: Այդ նամականիշները կրում են «Հայաստան» մակագրությունը եւ փոստափոխանակման օրինական վճարամիջոց չեն: Այդ առթիվ «Հայփոստը» դիմել է Միջազգային փոստային միությանը՝ տվյալ նամականիշներն անվավեր ճանաչելու խնդրանքով:

Ընկերության հաղորդագրության մեջ մանրամասներ չեն նշվում եւ խորհուրդ է տրվում դրանց ծանոթանալ «Հայփոստի» կայքէջում: Սակայն տվյալ կայքէջը, բացի նրանից, որ չունեն հայկական տարբերակ, որեւէ այլ մանրամասն վերոնշյալ նամականիշների մասին չէր պարունակում: Ձեռեղված էր միայն հայերեն նույն տեքստի անգլերեն տարբերակը:

Ա. Մ.

Խոզերը սատկում են

Ըստ գյուղնախարարության, Հայաստանի մի քանի շրջաններում աֆրիկյան ժանտախտին զոհ է գնացել 953 խոզ: Հիվանդության դեպքերը հիմնականում գրանցվել են Լոռու եւ Տավուշի մարզերում:

ԼՈՉ-ՊՊԻՐՈՅ ԵՎ ԲԱՆԱԿ

Տոների խորհուրդն իբրեւ դրոշ

Աշնան առաջին ամիսն Արցախում սկսվում է տոներով՝ Գիտելիքի օրով եւ ԼՂՀ անկախության հռչակման հերթական տարեդարձով: Բնույթով իրարից տարբեր այս տոները, սակայն, մի ընդհանուր խորհուրդ ունեն՝ հայրենապաշտության խորհուրդը: Պատահական չէ, որ սեպտեմբերի մեկին Արցախի բոլոր դպրոցներում պետական ու քաղաքական գործիչների անմիջական մասնակցությամբ անցկացվում է անկախության դասը, որտեղ արժեւորվում է մեր գոյապայքարի իրական նշանակությունը:

Մեծահամբավ զորավարներով փառաբանված Ղարաբաղը նաեւ անվանի շատ գիտնականներ ունի, որոնց անունները լայնորեն հայտնի են Հայաստանում ու նրա սահմաններից դուրս: Ասել է թե՝ Մեծ Հայքի անխախտելի մասը կազմող Արցախը դարերի մեջ գոյատեւել է նաեւ գիր ու գիտությամբ, իր մեջ մշտապես պահպանելով գիտելիքի պաշտամունքը:

Ղարաբաղյան գոյամարտի տարիներին Արցախում տղամարդ ուսուցիչների հիմնական մասը, ով ի վիճակի էր զենք բռնելու, դասամատյանը փոխարինել էր զենքով, եւ դա կենդանի դաս էր մատաղ սերնդի համար: Նրանց թվում, ավաղ, քիչ չեն նահատակվածները: Միեւնույն ժամանակ, հպարտանալու առիթ է, որ այսօր ԼՂՀ պաշտպանական գերատեսչությունում իրենց զինծառայությունը շարունակող մի շարք բարձրաստիճան սպաներ նախկին մանկավարժ-ազատամարտիկներ են: Այսինքն՝ հերոսության դասը շարունակվում է, ինչը նշանակում է, որ երկրի ապագան հուսալի ձեռքերում է: Այս նկատառմամբ Արցախում խիստ կարեւորվում է պետական անկախության նշանակությունը:

Իսկ ԼՂՀ անկախությունն արդեն 16 տարեկան է: Նորանկախ երկրի համար սա միանգամայն լուրջ տարիք է: Անցած 16 տարիները հագեցած են եղել կորստի ցավերով ու հաղթանակի բերկրանքներով: Արցախահայությունը ստիպված էր բազում զրկանքների գնով հաղթահարել պատերազմական եւ հետպատերազմյա բոլոր դժվարությունները: Ղարաբաղի նորօրյա պատմությամբ հետաքրքրվող օտարերկրացիներն անգամ զարմացած են այս մի բուռ ժողովրդի անօրինակ հերոսությամբ ու ոգու անպարտելիությամբ:

Արցախցու ընդվզող ոգին խոր արմատներ ունի, նրան չի կարողացել նվաճել նույնիսկ շեղաչ աշխարհակալը: Անգամ խորհրդային ազգային խտրականության մտրակն ունենալով՝ ազերին չկարողացավ տեր դառնալ Ղարաբաղի հպարտ լեռներին: Արցախում լավ են հիշում սաֆոնովյան ժամանակները, երբ հսկա գերտերության՝ խորհրդային Միության ներքին զորքերը ազերական զինված կազմավորումների օժանդակությամբ փորձում էին բռնատեղահանել էթնիկ հայերին: Ուշագրավ է, որ հենց պոլյանիչկո-սաֆոնովյան ռեժիմի մոլեգնումի պայմաններում, 1991-ի սեպտեմբերի 2-ին, հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը դեմհանդիման կանգնեց կայսրապետությանը: Կանգնեց ու հաղթեց, որովհետեւ փլուզվեց կեղծ կայսրությունը, փլատակվեց «ժողովուրդների բարեկամության» ավազե տաճարը: ԼՂՀ-ն այսօր իրավամբ պնդում է իր անկախ գոյության իրավունքը՝ պարտադրելով նաեւ հարգել իրեն:

Դպրոց եւ բանակ. սա է թերեւ ԼՂՀ մշտագոյության անփոփոխ առհավատյան: Եվ սեպտեմբերյան սկզբնօրերի տոների խորհուրդն իբրեւ դրոշ բռնած արցախցին այսուհետեւ եւս շարունակելու է հպարտ պարել իր պապենական հողում: Եվ այս դրոշի ներքո նրան երբեք հաղթող չի լինի, քանզի Արցախն ուժեղ է իր անցյալով ու ներկայով, հետեւաբար եւ՝ ապագայով:

ԿԻՄ ՉԱՔԱՐՅԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեջ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010 Հանրապետության 47
Հասցե 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՀՈՒԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՀՈՒԲՅԱՆ / հեռ 529221

Լուսագրների սենյակ / հեռ 581841

Հանձնարարությունների բաժին / հեռ 582483

Շտաբարեալ լուսանկարների բաժին / հեռ 529353

Հանձնարարությունների բաժնի «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AXA-ն իրավահաջորդն է Օսմանյան կայսրությունում գործող 3 ապահովագրական ընկերությունների

Իսկ դիմելու ժամկետը երկարաձգվել է

«Վարդգես Եղիայան» փաստաբանական գրասենյակի վարիչ-տնօրեն Արման Բաղդասարյանը երեկ ժուռնալիստների միությունում մի քանի նոր-ություն հայտնեց ֆրանսիական ապահովագրական ընկերություններից Ցեղասպանության զոհերի ժառանգներին տվող փոխհատուցումների գործընթացի վերաբերյալ: Նախ երակարաձգվել է դիմումների ընդունման ժամկետը, քանի որ առաջին երեք ամիսներին դիմածների թիվը բոլորովին գոհացուցիչ չէ, մանավանդ՝ «Նյու Յորք Լայֆի» հետ համաձայնած, մանավանդ՝ Հայաստանից դիմողների դեպքում: Փաստաբանական գրասենյակը, հայցվորներին ներկայացնող մյուս փաստաբանական գրասենյակների հետ խորհրդակցելով, դիմել է ֆրանսիական դատարան եւ դատարանի արտոնությամբ երկարաձգել դիմելու ժամկետը մինչեւ 2008-ի հունվարի 7-ը: Այդ-միսով՝ խուճապ չի լինի դիմել չհասցնելու առումով: Դատարանի որոշմամբ այն հանձնաժողովը, որը քննելու է հայցերը եւ որոշումներ է կայացնելու, կազմված է երեք ֆրանսահայերից, որովհետեւ ֆրանսիական ընկերության դեմ է դատը՝ Զավեն Գաբրիելյանը Մարսելից, Հիլդա Ցոբոյանը Լիոնից, Սեմ Շնորոյանը Փարիզից: Ա. Բաղդասարյանը ուղղեց մամուլի այն տեղեկությունը, թե 100 տարի առաջ AXA-ն ապահովագրական պոլիսներ է վաճառել Օսմանյան կայսրության մեջ. այն ժամանակ AXA-ն գոյություն չի ունեցել՝ 20-25 տարվա ընկերություն է եւ իրավահաջորդն է այն երեք ընկերությունների, որոնք գործել են այն ժամանակ Օսմանյան կայսրությունում՝ L'UNION VIE, CAISSE PATERNELLE, LA CONFIANCE.... Հիմնական դատն այդ ընկերություններից ամենամեծի՝ L'UNION VIE -ի դեմ է՝ բայց ապահովագրություն ստանալու են բոլոր երեք ընկերությունների ապահովադիրների ժառանգները: Երկու կարգի՝ կյանքի ապահովագրություն եւ հրդեհի դեմ ապահովագրություն է եղել, բնականաբար վերադարձվելու են կյանքի ապահովագրությունների գումարները: Արխիվները չեն պահպանվել, ինչպես «Նյու Յորք Լայֆի» դեպքում էր, բայց բարեբախտաբար գումարները պահպանված են: Ապահովադիրների մեջ եղել են թուրքեր, հույներ նաեւ, ընտրվել են միայն հայերի 7 հազար ազգանունները: Ընդ որում՝ հնարավոր է, որ այդ 7 հազարից եղել են շատ հայորդիներ, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մահացել են, եւ նրանց ժառանգները ստացել են ապահովագրությունը, կամ որոշ մարդիկ ընդհատել են ապահովագրությունը՝ այդ մասին արխիվային փաստաթղթեր չկան, այնպես որ բոլոր 7 հազար ազգանունն էլ հրապարակված է: Ա. Բաղդասարյանն ասում է, որ ցանկի հետ էլ որոշ դժվարություններ ունեցան՝ հիմնականում ֆրանսիական օրենքով հասուցումներ տվեն բարեսիրական կազմակերպություններին: Փաստաբանական այս եւ մյուս գրասենյակները ուզադիր են լինելու, որ այդ գումարները միայն ֆրանսիական կազմակերպություններին չտվեն, այլ նաեւ հասկացվեն տարբեր երկրների՝ ներառյալ Հայաստանի բարեսիրական կազմակերպություններին:



ԱՐԱՐԱՏՅԱՆ

Ա. Բաղդասարյանն առիթից օգտվեց եւ կրկին ի մի բերեց «Նյու Յորք Լայֆի» գործի մանրամասները. այն ավարտին հասցնելուց հետո ավելացել էր մոտ 4 մլն դոլար անժառանգ գումար, որը եւս հանձնվել էր ԱՄՆ հայկական բարեսիրական կազմակերպություններին:

«Նյու Յորք Լայֆի» դեպքում՝ Հայաստանից 2000-ից ավելի դիմում էր եղել ընդհանուր առմամբ, վավերացվել են դրանցից 1254-ը, ում տրվեց 3 մլն 675 հազար դոլար: Ամենից շատ Հայաստանից էին դիմել, Միացյալ Նահանգներից՝ 896 հոգի եւ նրանց տրվել է 2 մլն 600 հազարից ավելի, մյուս երկրներից եւ դիմողների եւ փոխհատուցումների թիվն ավելի փոքր է եղել: Օրինակ՝ Թուրքիայից 8 հոգի ստացել է 14 հազար դոլար:

Վերադառնալով ֆրանսիական ապահովագրական ընկերություններից ներկա փոխհատուցումներին՝ Ա. Բաղդասարյանը նկատեց. «Մեր ցանկությունն է, որ Հայաստանից առավելագույն չափով դիմեն»: Նա շնորհակալություն հայտնեց արարդատության նախարարությանը, որն իր վրա է վերցրել դիմողներին տեխնիկապես աջակցելու եւ իրազեկելու խնդիրը, ավելացնելով, որ իրազեկման գործն այժմ ավելի է կարեւորվում՝ նոր ժամկետներում բոլոր դիմողներին ներառելու համար:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեխայից բռնի զրկված մոր միակ հույսը արդարադատության նախարարն է

«Ազգի» խմբագրություն է դիմել Տավուշի մարզի Ջինարի գյուղի բնակչուհի Ռուզան Մակարյանը եւ խնդրում է արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանի աջակցությունը, որպեսզի հարկադիր կատարողները կատարեն դատարանի վճռով վերցված կատարողական թերթի պահանջը: Բանն այն է, որ դատարանի վճռով Ռուզան Մակարյանի 6-ամյա դուստրը՝ Ազնիվը, պետք է պարեր իր մոր մոտ, սակայն հարկադիր կատարողները մինչ օրս դատարանի վճիռը չեն իրականացրել՝ պատճառաբանելով, թե իբր երեխան չի ցանկանում մոր մոտ գնալ: Սակայն իրականությունը բոլորովին այլ է: Երեխայի հայրը՝ Անդրանիկ Մակարյանը, ամեն անգամ «լեզու է գտնում» հարկադիրների հետ, եւ վերջիններս էլ հարցը լուծում են հօգուտ նրա: Այսպես, հարկադիր կատարողները Ռուզան Մակարյանի հետ գնացել են Անդրանիկ Մակարյանի տուն, ուր վերջինս ամուր գրկել է աղջկան ու նստել: Հարկադիրները ոչինչ չեն արել ու Ռուզան Մակարյանին պարզապես ասել են՝ գնա, աղջկադ վերցրու: Սակայն Անդրանիկ Մակարյանը նույնիսկ թույլ չի տվել, որ մայրը մոտենա երեխային, եւ ձեռնափայտով անընդհատ ցանկացել է նրան հարվածել: Այս լարված մթնոլորտում երեխան անընդհատ լաց է եղել: Այնուհետեւ հարկադիր կատարողները, օգտվելով Ռուզան Մակարյանի անտեղյակությունից, նրան համոզել են, որ ինչ-որ թուղթ ստորագրի, խաբելով, թե հաջորդ անգամ կգան եւ երեխային իրեն կտան: Սակայն հաջորդ անգամ հարկադիրները գնալով Անդրանիկ Մակարյանի տուն, դարձյալ ոչինչ չեն արել ու մի բան էլ Ռուզան Մակարյանին կոտրել են, թե երեխան չի ուզում մոր մոտ արդարել, չնայած ակնհայտ է եղել, որ նա պարզապես հորից վախենում է: Ի դեպ, այս ամբողջ ժամանակում երեխան հոր տանը գտնվում է վախի ու սպառնալիքների մթնոլորտում, հայրը նույնիսկ թույլ չի տալիս, որ մայրը երեխային տեսնի: Մոր եւ դստեր համար նախատեսված տեսակցությունները նույնպես Անդրանիկ Մակարյանը կարողացել է արգելել:

«Ազգը» հարցարակելով Ռուզան Մակարյանի խնդրանքը, հույս ունի, որ արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանը կմիջամտի եւ դատարանի վճռով վերցված կատարողական թերթի պահանջը կկատարվի:

Ա. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՅՈՐՍՎԱՐԻ ՄՍՀՎՍՆ 80-ՄՅԱԿԸ

«Մենք պարտավոր ենք անդրանիկյան գաղափարախոսությամբ ապրել», վստահ է Նորայր Մուշեղյանը

Երեկ Անդրանիկի եւ նրա գաղափարների ոգեկոչման օրն էր

80 տարի առաջ երկնքի հավերժությանը միացավ աշխարհի նշանավոր հայերից մեկը՝ Անդրանիկ զորավարը: (Նրա գործերից մի քանիսի մասին կարդացեք նաեւ «Ազգի» երեկվա համարում): Զորավար Անդրանիկի հիշատակը հարգելու համար ծաղիկներ ու ծաղկեպսակներ դրվեցին նրա բոլոր հուշարձանների եւ հուշաքարերի առջեւ: Երեւանի ընտրատարածքի օլիմպիական հերթափոխի դպրոցի սաները, հետեւելով իրենց դպրոցի տնօրենն, ընտրատարածքի աշխարհի նախկին չեմպիոն Նորայր Մուշեղյանի պատգամին, ծաղիկներ դրեցին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն հարակից տարածքում տեղադրված հուշարձանին, իսկ նրանց տնօրենը Անդրանիկի նվիրյալների խմբի հետ շարժվեց դեպի Եռաբլուր:

Իրականում անդրանիկագետներին է միայն պարզ երեւում շաքինգարահիսարցի հայդուկ արծվի ճախրանքի ողջ ազդեցիկությունն ու հզորությունը: Նա պայքարել է Առաջին աշխարհամարտից առաջ, պատերազմի տարիներին ու դրանից հետո եւ անհասանելի թվացող բարձունքներ գրավել, հազար ու մի փակ ճանապարհ բացել, կյանքը վտանգելով հաղթանակներ տարել՝ մի նպատակով, իսկապես ազատ եւ անվտանգ տեսնել հայոց լեռները, հայ հասարակ մարդուն: Լեգենդար Անդրանիկ Օզանյանը, նույն ինքն Անդրանիկ փաշան այնպիսի փառավոր կենսագրություն ունի, որ կարող է ողջ հասարակություններ եւ սերունդներ կրթել, նվիրումի եւ անշահախնդիր սիրո պատմական դաս լինել:

«Անդրանիկապատցներին» (նրանք իրենց այդպես են անվանում), մասնավորապես «Զորավար Անդրանիկ» միության անդամների եւ լրագրողների Եռաբլուր այցելած խումբը եկել էր խոնարհվելու զորավարի շիրմին եւ եւս մեկ անգամ երախտագիտություն հայտնելու հայրենիքն ու հայի արժանապատվությունը բարձր պահելու համար: «Զորավար Անդրանիկ» միության հիմնադիր նախագահ Նորայր Մուշեղյանը իր խոնարհումի խոսքից հետո նաեւ դժգոհություն հայտնեց, որ որեւէ հեռուստատեսություն նախորդ օրը եւ նույն օրն առավոտյան ծանուցում չարեց եւ չանդրադարձավ Անդրանիկի մահվան 80-ամյա տարելիցին: «Ազգի» հարցին ի պատասխան, թե ինչու են Անդրանիկի շիրմաքարին այցելածներն այսքան սակավաթիվ (մոտ երեք տասնյակ ներկաներ), մեկն արձագանքեց, որ թիվը կարեւոր չունի, ինչպես Անդրանիկն էր փոքրաթիվ ջոկատով հաղթանակներ տոնում, այնպես էլ իրենք գաղափարապես այնքան լիքն են, որ Անդրանիկի ոգին կարողանալու են կրել եւ փոխանցել ազգի սերունդին:

«Զորավար Անդրանիկ» միության հիմնադիր նախագահ Նորայր Մուշեղյանը զորավարի պատկերով շքանշաններ, միության անդամատոմսեր եւ թռածել հուշանվեր-կոնյակներ բաժանեց Եռաբլուրի պարտեզային խմբի անդամներին, ովքեր հսկում են զորավարի եւ մեր մյուս հերոսների խաղաղ հանգիստը: Կոմիտաս Արբակ Խաչատրյանը Եռաբլուր պանթեոնի պարեսն է: Իր եւ ընկերների զգացողությունների մասին մեզ պատմելիս նշում է. «Միշտ հպարտ ենք, որ մեր ազգի արծիվների իսկն ենք հսկում, հպարտ ենք, որ մեր ձեռքերով ենք Անդրանիկի աճյունը մայր հողին հանձնել: Եվ այսօր էլ՝ ստանալով Զորավար Անդրանիկի հուշամեդալը, կրկնակի հպարտ ենք: Սա մեզ պարտավորեցնում է հետագայում եւս ապրել անդրանիկավարի»:

Ընտիր կոնյակով ոգեկոչման կենաց ասացին նաեւ ներկաները, մասնավորապես սփյուռքահայ ինժեներ, ակադեմիկոս Ժակ (Հակոբ) Փանոսյանը նշեց. «Մի հայը չի խոնարհիր զորավար Անդրանիկին առջեւ, ոչ հայը չի հարգեր անոնք, որ նրա հիշատակը վառ կպահեն»: Նա նաեւ բոլոր հայերի կողմից շնորհակալություն հայտնեց հիշատակի օրվա կազմակերպիչ Ն. Մուշեղյանին եւ համեստորեն խոսքը փոխանցեց նրան, պատճառաբանելով, որ նա ավելին գիտե Անդրանիկի մասին, քան որեւէ մեկը:

Անդրանիկի հիշատակին խոնարհվելու համար Իջեւանից եկել էր նաեւ Ռուբեն Սիմոնյանը, որ անցյալ տարի գրել է մի գիրք-ուսումնասիրություն՝ «Անդրանիկ. Սիբիրական վաշտի ոդիսականը» վերնագրով: Գրքի հեղինակը իր երախտագիտությունն ու սերն առ Անդրանիկ արտահայտել է իր 25 տարիների ուսումնասիրությամբ: «Այս գրքով կարեւոր չորս հարցի պատասխան եմ տվել, ասաց Ռ. Սիմոնյանը: Ի՞նչ է նշանակում Անդրանիկի սիբիրական վաշտ, ինչո՞ւ Անդրանիկը չմասնակցեց Ղարաքիլիսայի ճակատամարտին, ինչո՞ւ եւ ո՞նմ մեղավորությամբ Անդրանիկն այս սուրբ հողից բացակայեց եւ, վերջապես, ի՞նչ կլիներ, եթե Անդրանիկը թուրքական արշավանքի վայրագ շրջանում չհայտնվեր հանկարծ Սյունիքում, կունենայի՞նք արդեն նրանից հետո եկած Նժդեհի պահպանած Լեռնահայաստանը, թե՞ ոչ»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Քննիչին բացարկ հայտնեցին

«Ազգը» բազմիցս անդրադարձել է մայիսի 12-ին ՀՀ ոստիկանության քննչական վարչության շենքում վիճահարույց հանգամանքներում մահացած, երկու զավակների հայր Լեւոն Գուլյանի դեպքին:

Լեւոն Գուլյանի հարազատները, ինչպես նաեւ իրավահաջորդի ներկայացուցիչը չորեքշաբթի օրը միջնորդագիր են ուղարկել ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, որով բացարկ են հայտնում Երեւանի դատախազության քննիչ Հրանտ Չախոյանին, որը քննում է Գուլյանի մահվան առիթով հարուցված քրեական գործը:

ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացանք, որ այդ դիմումին ընթացք է տրվել եւ հետաքննության եւ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունում նյութեր են նախապատրաստվում:

Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նուռնուսցինե՞րն են ավստրիացի դառնալու, թե՞ ավստրիացիք նուռնուսցի

Նուռնուս գեղեցիկ անունով գյուղը Կոտայքի մարզում է, հայտնի է իր ընկույզով, ծիրանով ու գազարով, իսկ նրա անասնաբուծական արտադրանքը՝ մածունը, կաթն ու պանիրը նուռնուսցի կանանց ձեռքով ամեն առավոտ հասնում են Երևանի՝ Կոտայքի մարզին մերձ թաղամասերը, իրենց մշական գնորդներին: Ճիշտ է, այս տարի Նուռնուսում ծիրանը եղանակի խմահաճույքների պատճառով փչացավ, եւ բերքի առումով նուռնուսցին մնաց միայն ընկույզի հույսին, բայց դե եղանակի հետ վիճել մարդը դեռեւս անկարող է, եւ գյուղացին փորձում է իր ընտանեկան բյուջեն լրացնելու հնարներ մտածել: Գյուղ է՝ ինչպես Արարատյան դաշտի ու նրան մերձ բարեբեր շրջանների մյուս գյուղերը, այստեղ հյուր կած մարդուն նուռնուսցիք իրենց կյանքից բողոքում են, ինչպես Հայաստանի բոլոր գյուղերում՝ բողոքելն այժմ արդեւոր ձեւ է, ու ուզում ես տեսնել տարբերությունն, ասենք, Գեղարքունիքի մարզի Սեւանի արեւելյան ափի գյուղացու եւ ասվածահաճո-արեւ տարածքի գյուղի գյուղացիների բողոքների միջեւ: Այնտեղ, Սեւանի արեւելյան ափին 7-8 ամիս ձմեռ է, ու երեք-չորս ամսում գյուղացին պետք է ամբողջ տարվա իր արդուտի մասին հոգա, այստեղ Նուռնուսում ու նրա շրջապատի գյուղերում, ընդհակառակը, 7-8 ամիս տաք է, հանգիստ կարելի է ձմեռվա մասին մտածել: Բայց արի ու տես, որ այստեղ էլ գյուղացին նույնքան դժգոհ է իր կյանքից, տարբեր խանգարող հանգամանքներից՝ տնտեսությունն ընդլայնելու եւ չարքաշ վիճակից դուրս գալու համար դրամի պակասից: Երեւում է՝ վաղուց արդեն ժամանակն է մտայնությունը փոխելու, չսպասելով այս ու այն միջազգային կազմակերպության, այս ու այն բարի հեռիների օգնությանը, բայց ինչպե՞ս դուրս գալ մոգական շրջանակից. այ էդ դուրս գալու համար արժե մտածել: Ու կոնկրետ այս գյուղի մտածելն արժե ներկայացնել: Կարող էինք մեկիկ-մեկիկ պատմել գյուղի ունեցած-չունեցածի մասին, խորանալ նրա պրոբլեմների մեջ, ու դա մի թեթեւ անելու ենք, բայց նաեւ մի փոքր այլ կողմից ենք ուզում մոտենալ դրանց, քանի որ Նուռնուսն, իսկապես, հետաքրքիր ունի զարգանալու:

Նուռնուսը հող ունի, բայց չի մշակում

Պատկերացրեք մի գյուղ, որը գյուղապետ **Գրիշա Մկրտչյանի** իսկ վկայությամբ ունի 250 հեկտար վարելահող, 220 հեկտարը՝ ջրովի, 130-ը՝ անջրդի, սակայն այս պահին հացահատիկ է ցանված միայն 6 հեկտարի վրա: Պատկերացրի՞ք: Սա աբսուրդ է թվում, բայց միայն առաջին հայացքից: Իրականում պատճառներն ավելի քան հիմնավոր են. ժողովուրդը չի ցանկանում ցանել, տարիներ շարունակ ցանել է, բերք չի ստացել, հիմա էլ չի ցանում. այդ տարածքների վրա բնական խոտ է աճում, այդ խոտը բերում-անասնակեր են անում, եթե կարողանում են: 2 բեռնատար մեքենա ունեն գյուղում, մեկ տրակտոր՝ մասնավորի ձեռքին, նրանցից էլ վարձում են, մի կերպ խոտին տիրություն անում: Բայց... պատկերացրեք աբսուրդի աստիճանը՝ 250 հեկտար հարստության վրա... աճում է խոտը: Չէ, կամ ես բան չեմ հասկանում գյուղատնտեսությունից, կամ էլ մեր գյուղացին այնքան է հեռացել նախաձեռնողականությունից, այնքան հեռու է բիզնեսի ոգուց, այնքան խեղճ, չարքաշ ու անփող, որ հաշտվում է այս վիճակի հետ ու պատճառաբանում. «Մի տրակտոր կա գյուղում. հող մշակելը մեր գյուղում շատ դժվար է, օգուտ չի մնում. 50 հազար դրամ մի հեկտարի վրա ծախսում ես՝ սերմացուն չհաշված, մի հեկտարին կիլոն 100 դրամով սերմացուն անում է 50-70 հազար դրամ, 100 հազար դրամն անցնում է՝ վարելցանելը: Մի տոննա բերք ես ստանում՝ էլի 100 հազար է անում, ոչ մի օգուտ. կարող ես, իհարկե, կերակրվել, բայց այդ 100 հազարով 10 պարկից ավելի ալյուր կգնես ու ողջ տարին լիուբոլ հաց կթխես, էլ ո՞ւր ես իզուր տանջվում», պատճառաբանում են գյուղապետարանի մոտ հավաքված ամենաարբեր ունեցվածքի տեր գյուղացիները՝ միաբերան եզրահանգմամբ: Ուրեմն՝ ցորեն-գարի ցանելն անարդյունավետ է: Այդ դեպքում ինչո՞ւ ուշացնել, եւ ունեցած 250 հեկտարի գոնե կեսը այգիների չվերածել կամ մի այլ բան չմտածել, ախր աշխարհը գյուղի ու գյուղատնտեսության վրա է հիմնվում, ո՞վ կփոխի մեր գյուղացու մտածողությունը՝ որ մի քիչ արագաշարժ լինի, արագ հաշվարկի՝ ինչից ու ինչ ցանելուց եկամուտն ավելի է, իսկ մնացած ամեն ինչն այդ եկամուտով կգնի :

Այս գյուղը նաեւ մարդկային ռեսուրսից դժգոհելու պատճառ չունի, այստեղ ծերերն այնքան շատ չեն, 625 բնակչից միայն 77-ն են թոշակառու, էլի ի տարբերություն Գեղարքունիքի՝ Սեւանի արեւելյան ափերի ծերացող բնակչության, Նուռնուսցիների գերակշիռ մասը միջին տարիքի աշխատունակ մարդիկ են, երիտասարդությունն էլ առանձնապես չի հեռանում, թեեւ աշխատանքի որոնում է գյուղից դուրս՝ Աբովյանում, Երեւանում եւ այլուր: Անցած շաբաթ ամուսնացած եւ Աբովյանում մինչեւ այժմ մասնաճյուղ աշխատած **Արայիկ Պետրոսյանը** մեղրամիսը պրծնելուց հետո շինարարության վրա է աշխատելու, քանի որ մասնաճյուղությունից մի օգուտ չեղավ, իսկ անասնապահությունից էլ մեծ եկամուտ դուրս չի գալիս. 2 կով, 5 ոչխար ունեն, 27-ամյա քույրը դպրոցում ուսուցիչ է: Նա հեռանկարը տեսնում է աշխատելու, աշխատավարձ ստանալու մեջ: Նույն կերպ մտածում են մյուս երիտասարդները, մեզ հանդիպած երիտասարդ մարդկանցից միայն 25-ամյա **Հայկն** էր որոշել էր անասունների քանակը մեծացնել:

Ենթակառուցվածքներ իսկապես պետք են

Գյուղացիներից մեկի (ափսոսում եմ՝ ձայնագրիչս դավաճանել է ինձ, անունը հիշատակել չեմ կարող, բայց այս դեպքում դա այնքան էլ կարեւոր չէ) ասածը մնաց հիշողությանս մեջ. ասաց՝ մեր կանայք հոգնել են թեւով կաթ ու մածուն քաղաք կրելուց ու վաճառելուց: Եթե այստեղ, գյուղում կաթի վերամշակման մի փոքրիկ ձեռնարկություն մեկը հիմներ, կաթը կհանձնեինք ու առանց կորուստների մեր ընտանիքը կպահեինք: Գյուղի ընտանիքների գլխավոր կերակրողներից մեկն անասնապահությունն է, ու այստեղ էլ գյուղացիք չեն կարող ծավալվել, որովհետեւ նախ արդյունքն առանց փոխադրականների հնարավոր չէ բավարար քանակությամբ իրացնել, եւ էլի՝ խոտի ինքնարժեքն է շատ բարձր դուրս գալիս, եւ անասունին կերակրելու ու նրանից ստացված արդյունքի գները հավասարվում են: Անցած տարի խոտի մեկ տուկի գինը հասավ 1200 դրամի, այս տարի դեռ 700-800 դրամ է, բայց ձմեռվա մոտենալու հետ կբարձրանա. « Հիմա տրամադրված ենք անասնապահության վրա, ուրիշ ոչ մի բան՝ սալյարկան-բենզինը շատ թանկ են, մենք չենք կարողանում վարուցանք անենք: Հողերը 5-6-րդ կարգի են, բայց դրել են երկրորդ կարգի, 4-րդ կարգի, մենակ հարկն ենք շատ տալիս, բերք չենք ստանում», ասում են գյուղացիք: «Երկու հեկտար հող ունեմ՝ 40 տուկ խոտ եմ ստացել, ես ինչ անեմ, մնացած խոտն առնում եմ, 200 տուկ էլ պետք է», խոսակցությունն առարկայացնում է գյուղացիներից մեկը: Ու այստեղ է, որ ուզում ենք պատմել գյուղին հյուր եկած ավստրիացիների մասին, որոնք ուզում են կոնկրետ այս գյուղին օգտակար լինել՝ ստեղծել ենթակառուցվածքներ, փոքր ձեռնարկություններ, որոնց օգնությամբ գյուղացու վաստակը եկամտաբեր կդառնա: Սակայն մինչ այդ տեղական մասշտաբի 5-6 հաջողված տնտեսություն վարողներից մեկի օրինակով կարելի է ներկայացնել այլընտրանքը, իհարկե վախենալով «ձայնը տաք տեղից է գալիս»-ով մտածող չարպահովված գյուղացիների քննադատությունից: Մեղվաբույծ **Էդիկ Դավթյանն**, օրինակ, գտնում է, որ ձեռնտու չէ կաթի վերամշակման գործարան հիմնելը, շատ մեծ ներդրում է պահանջում. «Անասնապահությունը թույլ է, գյուղացին չի կարողանում 1-ի տեղ 5 կով պահի՝ հողերի, անասնակերի հարցն է, եկամտաբեր չէ, ես իմ բիզնեսն ունեմ», եւ հարցնում է, որ փեթակից 50 կգ մեղր է ստանում, իսկ 50 եւ ավելի փեթակի դեպքում սա կարող է դառնալ բիզնես: «Եթե մի քիչ ջահել լինեի՝ ռիսկով ողջ գյուղը կշինեի մեղվաբուծական տնտեսություն. հիմա 50-100 հատով փեթակ ունեն մի 6 տնտեսություն, մեղվաբուծությունն իմ մասնագիտությունն է՝ ես հասկանում եմ, որ հնարավոր է տեղափոխող մեքենաներով, ձմեռանոցներով-բանով մեղվաբուծություն ունենալ, եկամուտ ստանալ, շատ մարդ աշխատեցնել՝ վարորդներ, շինարարներ՝ էդ ռիսկ անողը պետք է գտնվի, մի քանի մլն դրամ է պետք»: Իսկ գյուղացիներից շատերը խոսում են սեզոնին ստացած միայն 300-400 հազար դրամ եկամուտի մասին ու վերջ:

«Մեծ վարկ վերցնել չի լինում, էնքիսի բան են գրավ ուզում, որ չես կարողանա՝ տուն են ուզում, իսկ փոքր վարկը մի 300 հազար դրամ է, որից 20 հազարը պահում են: Ճիշտ է, գյուղում այդ փոքր վարկերից վերցնողներ կան, բայց դրանց տոկոսն է բարձր, ու էլի մի բան դուրս չի գալիս», լրացնում են զրույցը լսող գյուղացիք: Մի խոսքով, եթե իսկապես այնպես նայենք գործին, որ ամեն մի գյուղացիական տնտեսություն ունեցող փոքր բիզնեսով է զբաղվում, պիտի ուրեմն նախ գյուղացին փոխվի, գործարարի պես մտածի, արագ կողմնորոշվի՝ եթե եկամտաբեր չէ, արագ փոխի գործունեության ոլորտը, եւ զբաղվի եկամտաբեր գործ զարգացնելով. բայց մեր գյուղացուն այդպես տեսնելու համար դեռ շատ ժամանակներ պետք է հոսեն, որպեսզի անխոս-անփաստարկ դարձնող ու համոզող «փող չկա» երկրորդ տեղում լինի՝ նախ բան փոխելու, անընդհատ նույն տեղում չդոփելու ցանկությունից հետո:

Իսկ կոնկրետ Նուռնուսի դեպքում՝ ուրիշ այլընտրանք էլ կա. այստեղ ավազի եւ բազալտի լիքած հանքեր կան, առաջներում մարմարի գործարան կար, ո՞նց կարելի է այդ հնարավորությունը չօգտագործել, երբ Նուռնուսը նաեւ կայարան է՝ իր նուռնուսցի կայարանապետով-բանով:

Հասանք ավստրացիներին

Երկու անուշիկ տիկին՝ Եվան եւ Քրիստինան, ովքեր կապ ունեն Հայաստանում ավստրիացիների կողմից հաջողությամբ հիմնված Քինդերդորֆի հետ, հիմա էլ կուզեին Հայաստանի գյուղերում ծրագիր իրականացնել եւ այդպիսի հնարավորությունը նախ եկել էին ուսումնասիրելու Նուռնուս գյուղում: Իհարկե, նրանց ուղղորդում եւ աջակցում են հայ մարդիկ՝ Վիեննայից Մխիթարյան միաբանության վարդապետ հայր Ներսես Զաքարյանը, ծրագրի տեղական պատասխանատու Հրանտ Իսաջանյանը, որոնցից առաջինը հատկապես սիրով կուզենար հայրենիքին օգուտ բերող ծրագրին նպաստել. «Եթե կարենամ նաեւ ավստրիացիներու օգնությամբ Հայաստանին օգտակար ըլլալ», փափագում է նա:

Հրանտ Իսաջանյանի խոսքով՝ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակառուցվածքների զարգացման ծրագիր ունի Վիեննայի քաղաքապետարանի «Քաղաքների խորհուրդ» կազմակերպությունը՝ Մխիթարյան միաբանության հետ համատեղ, եւ Հայաստանում առաջինն այն ուզում են իրականացնել Նուռնուս գյուղում: Այդ ծրագրերի մեջ կան ջրատարների, գազատարների, դպրոցների նորոգում, գյուղացիներին անհատական օգնություն՝ իրենց տնտեսությունը զարգացնելու համար, ասֆալտապատում, իսկ հեռահար նպատակը երիտասարդությանն իր հող ու ջրի վրա պահելն է: Այժմ ուսումնասիրվում են Նուռնուսի կարիքները, ծրագրի պատասխանատուները զրուցել են համայնքի բնակիչների, գյուղապետի, նրա տեղակալի եւ ավագանու անդամների հետ, երկու օր առաջ էլ մեծ հանդիպում էր համայնքի բնակիչների հետ: Իսկ գյուղի կարիքները շատ են. սա Կոտայքի 67 գյուղերից այն 7-ի մեջ է մտնում, որոնք չեն գազիֆիկացվել, 60-ամյա դպրոցը խարխուլ է, ընդամենը մի քանի դասասենյակով՝ պետք կառուցվի, ծայրահեղ դեպքում՝ գոնե հիմնանորոգվի, ճանապարհները կարգին չեն, երիտասարդությունը զբաղմունք չունի: Երկու ավստրիացի տիկնայք ցուցադրում էին Քրիստինայի՝ Եվրոպայում լավագույնը դարձած գյուղը, պատմում՝ ինչպե՞ս կարելի է սեփական ուժերով ամեն ինչ անել, գեղեցկացնել, խոսում էին կանանց իրավունքներից...խեղճ Նուռնուսցի կանայք, որոնց իրավունքն այն կլիներ, որ օրվա արդուսը հոգալու համար օրական 20-30 լիտր կաթ ու մածուն ձեռքով չկրեին Երեւան ու Աբովյան, մի կարգին աշխատատեղում մաքուր աշխատեին ու տուն գնային...

Երեւի վերջը ավստրիացիք կհասկանան Նուռնուսցիներին ու մի փոքր վայր կիջնեն, իսկ Նուռնուսցիք էլ ընդառաջ կգնան ավստրիացիներին ու մի փոքր կնմանվեն նրանց:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007 ԷՋ Ա

ՀԱՅԵԼԱՅԱՏ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Տունդարձ

ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ

Պատմական բացառիկ օր մըն էր յոլիս 17ը, Ս. Էջմիածին, Վաղարշապատ: Այդ օր, առաւօտեան ժամը 10-ին, Ս. Էջմիածնի սուրբ հողին մէջ գացին յատիենապէս իրենց հանգիստը գտնելու ազգային հերոս, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան ցկեանս նախագահ, ազգային մեծանուն բարեսիր Ալեք Մանուկեանը եւ իր ազնիւ կողակիցը՝ Մարին:

Բարեսիր ամուլին աճիւններուն ամփոփման նախաձեռնութիւնը ի Ս. Էջմիածին՝ Ամենայն հայոց հայրապետ ՆՍՈՏՍ Գարեգին Բ հեռաստես հայրապետինն էր:

Տիկին Մարի Մանուկեան իր մահկանացուն կնքած էր 1993-ին, իսկ Ալեք Մանուկեան՝ 1996-ին: Անոնք կարծես ժամանակատրապէս տեղադրուած էին Դեսրոյթի գերեզմանատունը, սպասելով կարծես այն պատմական պահուն, երբ պիտի երթային յատիենապէս հանգչելու մեր պաղեստինական հողին ընդերքը:

Ալեք եւ Մարի Մանուկեանները Ամերիկա եկած էին անցեալ դարասկիզբին: Մարի Մանուկեան կուգար Պոլսէն, իսկ Ալեք Մանուկեան՝ Քասապա, Իզմիրի մօտակայքէն: Ամերիկա հաստատուած առաջին իսկ օրէն անոնք իրենց աղուտի աշխատանքի կողքին, անմիջապէս զբաղուած են իրենց եւ իրենց շրջապատին հայկականութիւնը պահպանելու սրբազան գործով, մնալով Հայ եկեղեցւոյ եւ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան միջոցով բարեսիրական համազգային բազմազան ծրագիրներու կողքին, անոնցմէ շատ շատերը իրականութիւն դարձնելով շնորհիւ իրենց կամաւոր աշխատանքին եւ աղբ՝ երբ բարեկեցիկ պայմաններու տիրացած՝ նաեւ իշխանական բազմաթիւ նուիրատուութիւններով:

Ալեք Մանուկեան իր ամբողջ կեանքը աղուած էր Ս. Էջմիածնի բարոյական հովանիին ներքեւ, եւ այսօր, իր կողակիցին՝ Մարիին հետ, կուգար ֆիզիկապէս ալ վերջնականապէս հանգչելու անոր իսկական շուքին ներքեւ:

Ու մենք, բախտաւորներս, ականատես կ'ըլլայինք Ալեք եւ Մարի Մանուկեաններու ՏՈՒՆԴԱՐՁԻՆ:

Ու տակաւ, երբ կը մտաբերեմ այդ պեսական բացառիկ թաղման անջնջելի պատկերը, կը մտածեմ անոր պատմական հսկայ նշանակութեան վրայ: Կարծես մենք կը մասնակցէինք հայոց թագաւորի հողին յանձնման: Ամենայն հայոց հայրապետը, շրջապատուած բազմաթիւ բարձրաստիճան հոգեւորականներով, կը նախագահէր թաղման արարողութեան ի ներկայութեան հայոց ազգանիին: Հոն էին հանրապետութեան նախագահը, վարչապետը, գիտարէս ալ վերջնականապէս հանգչելու անոր իսկական շուքին ներքեւ:

Ու մենք, բախտաւորներս, ականատես կ'ըլլայինք Ալեք եւ Մարի Մանուկեաններու ՏՈՒՆԴԱՐՁԻՆ:

Ու տակաւ, երբ կը մտաբերեմ այդ պեսական բացառիկ թաղման անջնջելի պատկերը, կը մտածեմ անոր պատմական հսկայ նշանակութեան վրայ: Կարծես մենք կը մասնակցէինք հայոց թագաւորի հողին յանձնման: Ամենայն հայոց հայրապետը, շրջապատուած բազմաթիւ բարձրաստիճան հոգեւորականներով, կը նախագահէր թաղման արարողութեան ի ներկայութեան հայոց ազգանիին: Հոն էին հանրապետութեան նախագահը, վարչապետը, խորհրդարանի նախագահը, սահմանադրական դատարանի նախագահը, նախարարներ, ակադեմիայի նախագահն ու ակադեմականներ, բարձրաստիճան իշխանաւորներ:

Հոն էին Ալեք եւ Մարի Մանուկեանի զաւակները՝ Լուիզը եւ Ռիչարդը, թոռները, ծոռները, ՀԲԸՄ-ի նախագահը, Կեդրոնական վարչական ժողովի անդամներ, հիւրեր:

Ուրիշ գործով Հայաստան գացած էի 10օրեայ այցելութեամբ: Ու այնքան շնորհակալ էի նախախնամութեան, որ Վեհափառ հայրապետի հրաւէրով կարողացայ ներկայ ըլլալ եւ հրաժեշտ տալ ՄԵԾ ՀԱՅՈՒՆ ու իր ազնիւ տիկնոջ, որոնց հոգածութիւնը եւ վստահութիւնը վայելած էի ամբողջ քառորդ դար: Կարծես ես կը ներկայացնէի երախտագէտ այն հսկայ փաղանգը, այն երախտագէտ սերունդը, որուն համար մեծ կարելիութիւններ ստեղծած էր Ալեք Մանուկեան, աշխարհի չորս ծագերուն կերտելով հայկական վարժարաններ, հայրապահպանման անթիւ կեդրոններ, հաստատելով կրթաթոշակներ, իր բարիքն բարիք հանելով հայուն անխտիր:

Յաւարտ թաղման, պաշտօնական բացառիկ ընդունելութիւն մը սարքուած էր Վեհարանի գահաստահին մէջ: Ու պահ մը թուեցաւ ինձ, թէ Գրիգոր Խանճեանի երկու հսկայական գրելէրներուն՝ ԱՅԲՈՒԲԵՆ-ին եւ ՎԱՐԴԱՆԱՆՔ-ին միջեւ Վազգէն Ա հոգելոյս հայրապետին կերպարն էր, որ Ալեք Մանուկեանի հետ, ձեռ ձեռի, ժպտուն ման կուգային: Իր բազմաթիւ լուսանկարներուն ընդմէջէն այդ մէկը, ուր Ալեք Մանուկեան խանդաղատանքով սեղմած է ափը Ամենայն հայոց հայրապետ Վազգէն Ա.ին, ինձ տպաւորած է բացառապէս: Վերջապէս երկուքն ալ, առաջինը Վազգէն Ա., երկրորդը՝ Ալեք Մանուկեան, «Ազգային հերոս» կոչումին արժանացած էին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի հրամանագրով ու այս պահուս ճակատագրակարօրէն կուգային յատիենապէս հանգչելու Ս. Էջմիածնի հովանիին ներքեւ, իրարմէ ոչ շատ հեռու, մին որպէս Ամենայն հայոց հայրապետ, միւսը որպէս Ամենայն հայոց բարեսիր: Տարակոյս չունիմ, որ անոնք անդենականին մէջ անմիջապէս իրարու մօտ եկան կրկին, խորհրդակցելու, միասնաբար կառուցելու նոր աղօթատեղի մը, նոր ընծայարան մը, նոր գանձատուն մը, վերջապէս հայրապահպանման հոգեւոր, մշակութային նոր կառոյց մը:

Ու այս բացառիկ ու պատմական իրականացման համար, որպիսակն ակնածանօք կը մատչիմ Ամենայն հայոց հայրապետ ՆՍՈՏՍ Գարեգին Բ.ի Ս. Աջոյնն մոմնջալով. «Շնորհակալութիւն, Վեհափառ տէր»:

Լոս Անջելես

Դեսրոյթի (Սաութֆիլդ) Սբ. Յովհաննէս Մկրտիչ ոսկեգմբէթ եկեղեցին, որի շինարարութեան գումարի հանգանակութիւնը կազմակերպել է Ա. Մանուկյանը: Նոյն եկեղեցական համալիրում է գտնվում «Ալեք Մանուկյան» թանգարանն ու պատկերասրահը, նաեւ՝ Ալեք եւ Մարի Մանուկյան միջնակարգ վարժարանը:

Ալեք Մանուկյանը իմ հուշերում

ԼԵՎՈՆ ՉՈՒՂԱՍԶՅԱՆ

Սոսկալիորէն 40 օր առաջ Հայաստանում վերահուշարկաւորուեցին ՀԲԸՄ նախկին ղեկավար, մեծ բարեգործ Ալեք Մանուկյանի ու նրա տիկնոջ Մարի Մանուկյանի աճիւնները եւ հայոց հողն իր մեջ ամփոփեց երկու պայծառ ոգիների մարմինները: Հայրենի հողն ուժեղացաւ իր երկու ընտիր զաւակների մասնակցութեամբ եւ աւելի հարուստացաւ, քանի որ երկիրն արժեւորւում է ոչ միայն վրան քայլող ու գործող, այլեւ իր գրկում հանգչող նշանաւոր, ընտիր մարդկանցով:

Մտորելով հայրենիին մինչեւ վերջին շունչը ծառայած տեր եւ տիկին Մանուկյանների կյանքի եւ գործունեության մասին, ուզում եմ անդրադառնալ ճակատագրի ինձ ընծայած բարեբաստիկ, եզակի այն մի քանի առիթներին, երբ հանդիպել եմ նրանց: Դրանք բացառիկ ու անմոռանալի տեղ են գրաւեցնում իմ ճամփորդական բազմաթիւ այլ հանդիպումների մեջ:

Առաջին անգամ Ալեք Մանուկյանին հանդիպել եմ ԱՄՆ-ում՝ Դեսրոյթում 1992 դեկտեմբերին Ալեք եւ Մարի Մանուկյանների անունը կրող թանգարանի բացման կարգակցությամբ կազմակերպած գիտաժողովում, որը նվիրված էր աշխարհի զանազան թանգարանների հայկական արվեստի ու ձեռագրերի հավաքածուներին:

Այդ տարվա օգոստոսից, առաջին անգամ լինելով, գտնվում էի ԱՄՆ-ում՝ Ռաշինգտոնի Ազգային պատկերասրահում, որի Տեսողական արվեստների կատարելագործված ուսումնասիրության կենտրոնի (Centre on Advanced Study of Visual Arts) կողմից արժանացել էի Ջորջ Սորոսի գիտաթոշակին հայ մեծանուն մանրանկարիչ Թորոս Ռոսլինի արվեստի հետազոտման նպատակով: Այդ գիտաթոշակը ինձ հատկացված էր ԱՄՆ-ի զանազան քաղաքներն այցելելու եւ այդտեղի թանգարաններում ու գրադարաններում գտնվող հայկական, հատկապէս Ռոսլինի ձեռագրերը ուսումնասիրելու համար իմ ներկայացրած աշխատանքային նախագիծն իրականացնելու նպատակով: Հետս ԱՄՆ եկան նաեւ կինս ու երկու տարեկան դուստրս, որոնց ճամփորդական ծախսն իմ խնդրանքով հոգացել էր Ալեք Մանուկյանի դուստրը՝ Լուիզ Սիմոն-Մանուկյանը, որն եւ հայրս՝ Մատենադարանի երկամյա փոխ-տնօրեն, բանասեր Բաբկեն Չուղասզյանը վաղեմի բարեկամներ էին:

Ռաշինգտոնի Ազգային պատկերասրահը ԱՄՆ-ում իր կարեւորությամբ այդ կարգի առաջին հաստատությունն է, քանի որ վայելում է Համաշխարհային բանկի հովանաւորությունը, իսկ իր ունեցած գանձերի հարստությամբ թերեւս զիջում է միայն Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանին: Ամեն օր աշխատանքի գալով Ռաշինգտոնի Ազգային պատկերասրահը, առանձնահատուկ մի զգացում էի ապրում, տեսնելով նրա ներսում պատերից մեկի վրա մեծ տառերով փորագրված նվիրատուների անունների շարքում նաեւ տեր եւ տիկին Ռիչարդ (Ալեք Մանուկյանի որդու) Մանուկյանների անունը:

Ռաշինգտոն հասնելուն պես, հեռախոսեցի Դեսրոյթ՝ Ալեք Մանուկյան մշակութային ֆոնդի տնօրեն, սփյուռքահայ նշանաւոր հասարակական գործիչ, եւ գրականագետ Եվանդ Ազատյանին, որին հանդիպել ու ծանոթացել դեռեւս Երեւանում: Դեռեւս 1986-1988 թվականներին պատրոն Եվանդ Ազատյանը Օհայոյի նահանգի Քլիվլենդի համալսարանի պրոֆեսոր, ճանաչված լեզվաբան, հայագետ Տոն Գրեփինի հետ որոշակի ջանքեր էին գործադրել՝ այդ համալսարանում հայ եւ բյուզանդական արվեստներ դասավանդելու նպատակով իմ այցելությունը կազմակերպելու համար եւ Ալեք Մանուկյան մշակութային ֆոնդի միջոցներից գումարներ էր փոխանցվել այդ համալսարանին: Սակայն, խորհրդային երկրի վարչական մեքենայի կամայականություններին համապատասխան, դասերը սկսելուց մի քանի օր առաջ այցս արգելվեց եւ իմ ու բազմաթիվ մարդկանց երկու տարի տեւած նախապատրաստությունները ջուրն ընկան:

Ինչեւէ, Ռաշինգտոնից հեռախոսեցի պարոն Ազատյանին եւ հայտնեցի, որ վերջապէս հասել եմ ԱՄՆ, բայց այս անգամ առեն Ռաշինգտոնի Ազգային պատկերասրահի հրավերով եւ դեռ երկար ժամանակով գտնվելու եմ այդտեղ: Նա ինձ հայտնեց դեկտեմբերին Ալեք եւ Մարի Մանուկյանների անունը կրող թանգարանի բացման առթիվ նախատեսվող գիտաժողովի մասին ու խնդրեց, որ հավանական մասնակիցների ու նրանց զեկուցումների մի ցանկ պատրաստեմ եւ ուղարկեմ իրեն: Անմիջապէս կատարեցի նրա խնդրանքը եւ շարունակեցի հեռախոսային կապ պահել նրա հետ առաջիկա հնարաւոր հարցերի վերաբերյալ: Ըստ երեւույթին, կազմակոչ ցանկը հիմնականում բավարարեց պարոն Ազատյանին, քանի որ հետո իմացա, որ շատ քիչ փոփոխություններ էր արել:

Նախապէս Ռաշինգտոնի Ազգային պատկերասրահին իմ ուղարկած աշխատանքային ծրագրի համաձայն, ինչպէս եւ նախատեսել էի, դեռեւս նոյեմբերի վերջին ընտանիքով եկանք Դեսրոյթ ու հանգրվանեցինք իմ ուսանողական տարիների վաղեմի ընկերոջ՝ Տիգրան Թումաճանի հարկի ներքո: Տիգրանը՝ մեծ Կոմիտասի ամենամտերիմ չորս սաներից մեկի՝ երաժշտագետ եւ բանահավաք Միհրան Թումաճանի եղբորորդին է եւ տեղի Ուեյն համալսարանի հայագիտության դասախոս: Երեւանի Պետական համալսարանում Տիգրանի եւ իմ ուսումնառության տարիներին դասընկերներով սովորություն ունեինք հաճախ այցելելու ԱՄՆ-ից ու Հայաստան հանգրվանած Միհրան Թումաճանին՝ պետության կողմից «Երեւան» հյուրանոցի նրան հատկացված ժամանակավոր կացարանում եւ վայելելու Տիգրանի հորեղբոր իմաստուն զրույցներն ու պայծառ հումորը: Տիգրան Թումաճանի հետ երկար տարիների ընդմիջումից հետո հանդիպելը երկուստեք խաղցր հուզեր արթնացրեց: Տիգրանն ու իր հյուրասեր կինը՝ Անահիտը, բարեկամական հարաբերություններ ունեն պարոն Ազատյանի ու նրա տիկնոջ՝ Նորայի հետ եւ հաջ ծանոթ են նաեւ Դեսրոյթի հայ գաղթօջախում հարգված ու սիրված Ալեք եւ Մարի Մանուկյանների հետ: Առհասարակ տեր եւ տիկին Մանուկյանները որ որ հայտնվում էին, իրենց ներկայությամբ հատուկ մի մթնոլորտ էին ստեղծում, դառնալով բոլորի ուշադրության կենտրոն: Բոլորն անպայման նշում էին, թե որքան արթուն է պարոն Մանուկյանի միտքը իր տարիքի համեմատ եւ որքան միմյանց կապված են ծերունազարդ ամուսինները: Տեղի ողջ հայ գաղութը մի առանձնահատուկ ակնածանք ուներ ծերունազարդ զույգի հանդեպ: Պարոն Ալեք Մանուկյանը հիրավի

Շարունակությունը՝ էջ Բ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Տունդարձ

Ալեք Մանուկյանը իմ հուշերում

Ս էջից

ամենայն դեսոյթահայոց Հայրիկն էր եւ ոչ միայն դեսոյթահայոց:

Դեկտեմբերի 4-5-ին տեղի ունեցավ նախատեսված գիտաժողովը եւ բացվեց Ալեք եւ Մարի Մանուկյանների անունը կրող թանգարանը: Այս հանդիսություններին ԱՄՆ-ի տարբեր ծայրերից եւ Կանադայից հազարավոր մարդիկ էին եկել: Նրանց համար նախատեսված հյուրասիրությունների մի մասը տեղի ունեցավ Ալեք Մանուկյանի հիմնադրած «Մասկո» կորպորացիայի սրահներում: «Մասկոն» առաջին անգամ տեսնելիս ապշեցնում է իր մեծությամբ՝ այն ասես խաղաղային մի առանձին թաղամասի չափերն ունի: Մեզ տանող մեքենան սլանում էր «Մասկո» ընկերության շենքերին զուգահեռ մայրուղիով եւ այդ շենքերին կարծես վերջ չկար:

Ժամանած հյուրերին հաստատության մուտքի մոտ, ներսում, դիմավորում էր Ալեք Մանուկյանի սպասարկողից դասակարգված ժպտացող մարդասակ կերպարանքը: Այստեղ մի շարք սրահներում տեղավորված է նաեւ մեծ բարեարի որդու՝ Ռիչարդ Մանուկյանի ավեստի անձնական հավաքածուն, ուր հիմնականում տեղ էին գտել ամերիկյան 19-20-դ դարերի կերպարվեստի գործեր: Հանդիսությունների կարգակցությամբ հավաքվել էր Մանուկյանների ողջ ընտանիքը՝ Ալեք, Մարի, Ռիչարդ, Լուիզ Սիմոն Մանուկյանները, նրանց զավակները եւ մեծաավորները: Այդ օրերին խոտնեռան բազմության մեջ ես առաջին անգամ առիթ ունեցա տեսնելու Ալեք եւ Մարի Մանուկյաններին, որոնք միշտ շրջապատված էին բարեկամներով ու ծանոթներով: Այդ ժամանակ պարոն Ալեք Մանուկյանը 91 տարեկան էր: Նա քայլում էր առանց ձեռնափայտի, առանց որեւէ մեկի օգնության եւ, երբ որեւէ տեղ էր գնում, նրան սովորաբար ուղեկցում էր վարորդը:

Առաջին օրվա վերջում մի բացառիկ առիթ ներկայացավ, երբ պարոն Ալեք Մանուկյանը եկավ թանգարանի գրադարանը ու եղբայրս՝ Գարեգինը, որը երջանիկ պատահականությամբ նույնպես այդ օրերին այդտեղ էր, սկսեց մեծ բարեարին ցուցադրել այդտեղ դրված համակարգչի գործածման բացառիկ հնարավորությունները: Գարեգինը, որն անկախության շրջանի Հայաստանում համակարգչային գործի հիմնադրման նախակարապետներից է, դրանից մեկ տարի առաջ Լուիզ Սիմոն Մանուկյանի աջակցությամբ մասնակցել էր բարձր տեխնոլոգիաների գծով ԱՄՆ-ի բազմաթիվ քաղաքների մեջ գտնվող գիտաժողովներին, անգամ հանդիպել բարձր տեխնոլոգիաների չթագադրված արքային, աշխարհի ամենահարուստ մարդուն՝ Բիլ Գեյթսին ու զրուցել հետը, այցելել համակարգչային զանազան աշխատանքներ իրականացնող հոչակավոր կենտրոններ ու ծանոթացել այդտեղ կատարվող աշխատանքներին, ուստի տեղյակ էր այդ ոլորտներում եղած վերջին նորություններին:

Պարոն Մանուկյանը կարծես կտրվեց բոլոր մնացած անցուդարձից ու սկսեց ոգեւորված հարցումներ ուղղել եղբորս: Դրանից ընդամենը կես տարի առաջ եղբորս աշխատած հիմնարկում էլեկտրոնային ինժեներների մի խմբի հետ պատրաստել էինք «Հայ ավեստի տարածական թանգարան» խորագիրը կրող եւ անգլերեն տեքստով ուղեկցվող հայ ավեստի թվանշայնացված առաջին երեք նախագծերը: Գարեգինը պարոն Մանուկյանին ցույց էր տալիս դրանք եւ բացատրում, թե ինչ հեռանկարներ կարող է ունենալ այդ գործը Սփյուռքի դպրոցներում հայագիտության տեսանկյունից: Մեծ բարեարը, ինքը գյուտարար լինելով, խիստ հետաքրքրված էր եւ կարծես բոլորովին չէր ուզում կտրվել այդ խոսակցությունից: Ես կողքից փորձում էի ինչ-որ բան ավելացնել համակարգչի էկրանին ցուցադրվող հայ ավեստի գործերի պատմական կարեւորության վերաբերյալ:

Գիտաժողովը տեղի ունեցավ թանգարանին կից ոչ շատ մեծ սրահում: Երեւանից որոնես զեկուցողներ հրավիրված էին ավեստագիտության դոկտոր Մանյա Ղազարյանը, ավեստաբան Շահեն Խաչատրյանը, Ս.Պետերբուրգի Էրմիտաժ թանգարանի աշխատակից, ավեստագիտության թեկնածու Ալվիդա Միրզոյանը, Լոնդոնի Բրիտանական գրադարանի աշխատակից Վրեժ Ներսեսյանը, սփյուռքահայ ավեստաբան Գրիգոր Ջրուսեյանը եւ ուրիշներ: Այդտեղ էր նաեւ ազգագրագետ, ներկայումս Հայաստանի ԳԱԱ թղթակից-անդամ Լեւոն Աբրահամյանը, որը գիտաթոշակ էր ստացել ամերիկյան ԱՅՐԵՔՍ կազմակերպությունից եւ մեկ տարով աշխատում էր ԱՄՆ-ի քաղաքներում: Ներկա էին ամերիկահայ մի շարք ճանաչված հայագետներներ՝ պրոֆ.Դենիս Փափազյանը, ներկայումս հանգուցյալ պրոֆ.Ավետիս Սանջյանը, սփյուռքահայ բազմաթիվ հասարակական, եկեղեցական գործիչներ եւ ուրիշներ: Այդտեղ էր նաեւ թանգարանի գլխավոր հիմնադիր եւ հանդիսությունների կազմակերպիչներից, այն ժամանակ Դեթրոյթի հոգեւոր հովիվ, վարդապետ, իսկ այժմ եպիսկոպոս Փառեն Ավետիքյանը: Անշուշտ, պարոն Ալեք Մանուկյանի միջոցներով, բայց հատկապես Փառեն սրբազանի զանազան երկրներ, մանավանդ Թուրքիա կատարած ճամփորդությունների ժամանակ նրա պրոտոնների, ջանքերի շնորհիվ էին այդ թանգարանում հանգրվանել տարբեր դարերի հայկական հիանալի գորգերը, կիրառական արվեստի նմուշները եւ այլ տեսակ-տեսակ գանձերը: Վերջիններիս շարքում կային եւ 19-20-դ դարերի հայ գեղանկարչության եզակի նմուշներ՝ Այվազովսկու եւ Կ.Պոլիս ու Փարիզ ապրած երիտասարդ Սարգիս Տիրանյանի հազվագյուտ կտավները, ֆրանսահայ գրեթե անհայտ մնացած նկարիչ Արշակ Թոլվանյանի մի պատկերը, Էդգար Շահինի գունավոր գրաֆիկական աշխատանքը, դեթրոյթաբնակ հիանալի գեղանկարիչ Զուբել Խաչատրյանի կտավը, մեզանում անծանոթ մնացած այլ հայ հեղինակների վերացական ոճի քանդակներ եւ այլն: Հետաքրքիր հայացք նետելով իմ տեսած հոչակավոր թանգարանների հայկական բաժիններին՝ ԱՄՆ-ի հայկական թանգարանների ցուցադրություններին ու հայ առանձին ավեստաստեղծ-հնահավաքների ստեղծած հավաքածուներին, կարող եմ ասել, որ Դեթրոյթի Ալեք եւ Մարի Մանուկյանների թանգարանը իր ունեցած գանձերի համաստեղությամբ լավագույնն է այդ բոլորի մեջ: Դժբախտաբար այն միչ է ռատմնասիրված եւ առ օրս չունի իր հավաքածուի կատալոգը*:

Իմ զեկուցումը նվիրված էր Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր գանձերին: Միշտ առջեւ, առաջին կարգում կողք կողքի նստած էին պարոն Մանուկյանը եւ Երվանդ Ազատյանը: Այդ օրերին ծնողներիցս ու մյուս հարազատներից շատ անհանգստացնող լուրեր էի առնում Հայաստանում գնալով սաստկացող ձմեռային սառնամանիքների, էլեկտրականության սկսված ճգնաժամի եւ դրանից բխող Մատենադարանում տիրող տագնապալի վիճակի մասին: Զեկուցմանս ընթացքում նայում էի պարոն Մանուկյանի դեմքին եւ որոշեցի օգտվել պահի ընձեռած հնարավորությունից ու բոլորի ներկայությամբ խոսքս ավարտել նրան ուղղված խնդրանքով: Հայացքս չկտրելով նրա դեմքից՝ հուզմունքից կտրվող ձայնով ասացի. «Մատենադարանի ձեռագիր մայրաքների ջերմաստիճանային ռեժիմը խախտվել է, մեր բազմադարյան գանձերը սառչում են եւ սառչում են գիտաշխատողները: Դրա մի աիավոր, անսպասելի անկում եւ կյանքի թանկություն է սկսվել Հայաստանում: Լավ կլիներ, եթե պարոն Ալեք Մանուկյանը օգնության հասներ Մատենադարանին ու մատենադարանցիներին»:

Ես եւ մի-երկու խոսք ասացի որոնես եզրափակում եւ նկատեցի, որ պարոն Մանուկյանն ու Երվանդ Ազատյանը այդ ընթացքում շշնջով խոսում են միմյանց հետ: Անմիջապես, երբ ելույթս վերջացրեցի, ոտքի ելավ Երվանդ Ազատյանը եւ հայտարարեց. «Պարոն Ալեք Մանուկյանը հիմա ինձի ասավ, որ այս վայրկյանին իսկ պատրաստ է հարկ եղած օգնությունը հասցնել Մատենադարանին»: Այդ պահը իրոք պատմական էր եւ հուզմունքն ու խանդավառությունը միանգամից պատեցին բոլոր ներկաներին: Ոգեւորությունից կտրուած, եւ ասես դեռ լրիվ չընկալելով կատարվածը՝ դանդաղ քայլերով գնացի նստեցի տեղս: Չէի կարողանում հավատալ, որ ամեն ինչ սացվեց: Նույն օրն իսկ հեռախոսեցի Երեւան եւ ավետիսը հայտնեցի հորս: Նա այդ լուրը փոխանցեց Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանին: Ջմռան ցուրտ եւ մութ, հոգեբանորեն ընկճող օրերի, հանկարծակի աղետալի վիճակի մեջ Մատենադարանի եւ մատենադարանցիների համար գոյատեւման լուսավոր մի հույս ծագեց:

Շատ շուտով Երեւան գործուղվեց, մի քանի տարի անց Երեւանի պետական համալսարանում ասպետաբանության ֆակուլտետը հիմնադրած ու վերջինիս առաջին դեկան, արդեն հանգուցյալ Շահե արեղիսկոպոս Աճեմյանը, որը ձեռնամուխ եղավ Մատենադարանի համար օգնության կազմակերպմանը: Մատենադարանի համար գնվեց գեներատոր, որը լույս եւ տաքություն արտադրեց ամենայն հայոց գանձարանի համար: Իսկ գիտաշխատողներին ամեն ամիս սկսվեց լրացուցիչ հավելավճարի հատկացումը դոլարներով: Այդպես պարոն Ալեք Մանուկյանը փրկեց Մատենադարանը Հայաստանի համար սկսված այդ աղետալի ժամանակ**:

Ուսումնական Զգալի դիտաթոշակի ժամկետի ավարտից հետո շարունակում էի մնալ ԱՄՆ-ում, մանրանկարիչ Թոմաս Ռուլինի ավեստի հետազոտման նպատակով օգտագործելով այս անգամ արդեն Լոս Անջելեսի Գեթի հիմնադրամից ստացած գիտաթոշակը: Լոս Անջելեսի Գեթի հիմնադրամը եւ Գեթիի անունը կրող ավեստի մյուս հաստատությունները, մանավանդ թանգարանը աշխարհում ավեստի ուսումնասիրությունը եւ վերականգնումը հովանավորող ամենահարուստ հաստատությունն է: Այդ տարի ինձնից բացի զանազան թեմաներ իրականացնելու համար Գեթի հիմնադրամի գիտաթոշակն էին ստացել Արեւելյան Եվրոպայի երկրների խանչորս այլ գիտնականներ:

Մեծ բարեարի հետ հաջորդ հանդիպումս տեղի ունեցավ Կրկին Դեթրոյթում 1993 թվականի մարտի 14-ին: Այդ օրը ՀԲԸՄ հովանավորությամբ տիտի կազմակերպվեր «Բյուզանդական եւ իտալական ավեստների հետ հայ մանրանկարչության հարաբերությունները» խորագիրը կրող զեկուցում: Դրանից մեկ օր առաջ ես նորից վերադարձա Դետրոյթ եւ կրկին հանդիպեցի Տիգրան Թումանյանի տանը: Նա ինձ ասաց, որ այդտեղ է նաեւ Երեւանի պետական համալսարանի դասախոս, ազգագրագետ Յուրա Մկրտումյանը, նույնպես ազգագրագետ մոսկվաբնակ Լեւ Արությունովը եւ մի քանի այլ գիտնականներ, որոնց անունները հիմա չեմ հիշում, որոնք մասնակցում էին Միչիգանի Անն Արբոր համալսարանում գումարված գիտաժողովին: Տիգրանն ինձ տեղեկացրեց, որ այս խումբը, ես եւ նույնպես Դեթրոյթում կարճատեւ այցով գտնվող լոնդոնաբնակ երաժիշտ Լեւոն Չիլինկիրյանի կինը՝ Սյուզան Փաթին, հաջորդ օրը հրավիրված ենք ճաշելու Ալեք եւ Մարի Մանուկյաններին հետ: Նշված ժամին ես եւ Տիգրանը հանդիպման վայրում էինք: Պարզվեց, որ ժամանակին եկել էին միայն Մանուկյան զույգը եւ Սյուզան Փաթին: Ինչպես հայտնի դարձավ, հայկական խումբը ուշանում էր, որովհետեւ գնացել էր դիտելու Ալեք եւ Մարի Մանուկյան թանգարանը: Բախտս բերեց, քանի որ ես հայտնվեցի պարոն Մանուկյանի կողքին, որից աջ նստած էր տիկին Մարին: Հայկական խումբը ուշացավ շուրջ մեկ ժամ եւ այդ ընթացքում մենք նստած զրուցում էինք: Խոսք եղավ այն մասին, որ մարդու անձնական հաջողություններին մեջ որքան մեծ դեր ունի նրա կինը եւ հարցրեցի, թե ինչպես են տեր եւ տիկին Մանուկյանները ծանոթացել միմյանց հետ: Ծերունազարդ ամուսինները սկսեցին հաճույքով հիշել իրենց երիտասարդությունը: Պարոն Մանուկյանը իրոք բացառիկ հիշողություն ուներ եւ խոսելիս անընդհատ ժպտում էր: Նա շատ մեղմ, գեղեցիկ եւ բարի ժպիտ ուներ:

Ես փոխեցի խոսակցության նյութը, անդրադառնալով այն հանգամանքին, որ այլազգի, մանավանդ հրեա եւ այլ ազգի մեծահարուստներից շատերը,օրինակ Տորջ Սորոսը, Ժան Փոլ Գեթին, Արիստոտել Օնասիսը եւ այլք՝ իրենց անունները կրող գիտաթոշակներ են ստեղծել ավեստը ուսումնասիրող գիտնականների համար, իսկ հայերը այդպիսի՞ չեն հիմնել: Եվ ավելացրեցի, որ հայ ավեստը շատ քիչ է ուսումնասիրված, հազարավոր ավեստի գործեր սպասում են իրենց ուսումնասիրողին եւ երիտասարդներին դեռի այդ աարդարեզը բերելու ու խրախուսելու համար շատ կարեւոր է նման գիտաթոշակներ ունենալը:

Անդրադարձա այն փաստին, որ անգամ Գալուստ Գյուլբենկյանի անունով երբեմն գոյություն գիտաթոշակներ կան միայն պորտուգալական արվեստի ուսումնասիրման համար: Այդ խոսքիս վրա պարոն Մանուկյանը հանկարծ մի առանձնահատուկ կրքով վրա բերեց. «Այդ շունչառողի Գյուլբենկյանը ինչո՞ր ամեն դրանը տվավ փորթուգալացիներին»: Այդ մեկ հատիկ նախադասությունը հայ ժողովրդի իսկապես արժանապատիվ զավակի հոգու բուռն ընդվզումն էր: Տեղատարածությունից ու հանգամանքներից հարություն առած ժողովրդի զավակի ընդվզումը աղաղակող անարդարության դեմ: Այդ մեկ հատիկ նախադասության մեջ ուղղակի բացվում ու բացահայտվում էր ինքը՝ Ալեք Մանուկյանը: Պարզ էր, որ մեծ հայրենասերի այս պոռթկումը գալիս էր իր ժողովրդի հանդեպ ունեցած խոր զգացումներից: Կասկած չկար, որ այդ միտքը երկար տարիներ նրան հանգիստ չէր տվել, ինչպես որ անհասկանալի ու անընդունելի էր մնացել բազմաթիվ այլ հայերի համար: Ինձ համար խիստ նշանակալից էր, որ սա ասողը մի մարդ էր, որն անհամար բարիքներ էր գործել իր ժողովրդի համար աշխարհի բազմաթիվ երկրներում:

Ես դատապարտեցի, որ թուրք Գյուլբենկյանի կողքին չկային նրա վստահությունը վայելող, ազգային նկարագիր ունեցող, բանիմաց հայ խորհրդատուներ, որոնք ի վիճակի լինեին նրան բացատրելու հայ իրականության համար առանցքային նշանակություն ունեցող խնդիրները: Խոսք եղավ նաեւ այն ժամանակ Գյուլբենկյանի հանդեպ խորհրդային Միության եւ մասնավորապես խորհրդային Հայաստանի ղեկավարության որոշված բացասական դիրքորոշման մասին, որը սառեցրեց աշխարհահռչակ ֆինանսիստի վերաբերմունքը մայր հայրենիքի հանդեպ***:

Վերջապես եկավ հայկական խումբը եւ սկսվեց ընդհանուր ճաշկերույթը: Ուշացածները կորցրել էին Մանուկյաններին մոտիկից ճանաչելու պատեհությունը: Իսկ մենք շահել էինք մեծ մարդու հետ առնչվելու բացառիկ ու անմոռանալի պահեր:

Հաջորդ օրը ՀԲԸՄ կենտրոնի սրահում պետք է տեղի ունենար իմ զեկուցումը: Ցգում էի, որ տեր եւ տիկին Մանուկյաններն անպայման կգան: Այդպես էլ եղավ: Նրանք եկան, տեղավորվեցին առաջին շարքում եւ ես սկսեցի ելույթս: Խիստ տրամադրված էի նրանց ներկայությամբ եւ առանձնահատուկ ոգեւորությամբ ներկայացրեցի բանախոսության նյութը՝ ցուցադրելով թեմային համապատասխան գունավոր սահիկները (սլայդ): Անպայման ուզում էի, որ ամեն ինչ հստակորեն մատչելի եւ գրավիչ լիներ նրանց համար ու կարծում եմ, որ հաստատես այդ պատճառով ներկաները գոհ մնացին:

ԱՄՆ-ում ընդունված սովորության համաձայն, դասախոսությունից հետո հավաքվածներին մատուցվեց սուրճ եւ խմորեղեն: Դեթրոյթի տարբեր մասերից եկած մարդիկ առանձնացան եւ սկսեցին զրուցել, մի քանիսը մոտեցան ինձ եւ սկսեցին հարցեր տալ: Երբ նրանց հետաքրքրասիրությունը հնարավորին չափով գոհացրեցի, իսկ հետո առիթից օգտվեցի մոտենալու պարոն Մանուկյանին եւ հարցրեցի. «Պարոն Մանուկյան, հավնեցա՞ դասախոսությունը»: Նա նայեց ինձ, ժպտաց եւ դրական պատասխանից հետո ձեռքը տարավ ծոցագրպանը, հանեց մի թուղթ եւ տվեց ինձ: Ես այն վերցրեցի, ծնոտակալություն հայտնեցի հնայիչ ծերունուն եւ գրկելով համբուրեցի նրան: Նա անակնկալի գալով, մի տեսակ ցնցվեց եւ նորից ժպտաց, բայց այս անգամ զարմացած հայացք նետելով վրա: Մտածեցի, որ թերեւ իր շրջանակում ընդունված չէր դա:

Ծոցի մեջ դրած կար եւ նա ինձ պարգեւատրել էր արդյունքներ: Ինձ համար հաստատես նրա ձեռքից այդ դրամը ստանալը մեծ պատիվ էր եւ անչափ շոյված էի: Բազմաթիվ անգամներ զեկուցումներ եմ ունեցել ԱՄՆ-ի, Եվրոպայի, Մերձավոր Արեւելքի զանազան երկրների համալսարաններում եւ սփյուռքահայ կազմակերպությունների ու եկեղեցիների հրավերներով, երբեմն անգամ առանց հոնորարի, իսկ ավելի հաճախ որոշ խորհրդանշական պատվոգինի արժանանալով, սակայն երբեք այն զգացումները չեմ ունեցել, որքան ունեցա այդ մեծ մարդու առաջ: Այդ պարագայում դրանը չէր կարեւորը:

Դրանից հետո Դեթրոյթում, այս անգամ Ալեք եւ Մարի Մանուկյան դպրոցում այլ զեկուցումներ ունեցա նաեւ 1995 թվականի մայիսի 16-ին եւ նոյեմբերի 2-ին, բայց մեծ բարեարին այլեւս չտեսա: Այդ օրերին, ինչպես լսեցի, այնքան էլ առողջ չէր: 1995 թվականի հուլիսի 11-ին նա կնքեց իր մահկանացուն եւ սկսվեց նրա երկնային կյանքը:

Նա արդում է բոլոր այն մարդկանց հուշերում, ովքեր երբեւէ հանդիպել են նրան ու վայելել նրա բարեարությունն ու հովանավորությունը: Թող հայոց հողը թեթեւ լինի նրա եւ իր անգուգական կողակցի մասունքների վրա:

* Այժմ պատրաստության մեջ է: Խմբ.:

** Փաստորեն գնվեց 2 գեներատոր, որոնցից մեկն ամբողջովին հատկացվեց ձեռագրատան պահուստային մասին: Գեներատորները շատ էժան գնով Մատենադարանին հայթայթեց այն ժամանակ Հոգդանոնաի տնօրեն, պետական մեծանուն գործիչ, հանգուցյալ Կարեն Դեմիրճյանը: Խմբ.

*** Այս եւ հարակից հարցերի մասին կարելի է կարդալ Կարեն Դալլաքյանի «Գալուստ Գյուլբենկյանի հուժարակների մասին» գիրքը: Խմբ. ■

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Շվեյցարիայի եւ...

«Ազոռիմնությունների մեջ երախտագիտությունը ոչ միայն ամենամեծն է, այլեւ մայրն է բոլորի»:

Ցիցերոն

«Ազգ» օրաթերթի «Մշակույթ» հավելվածի 2006-ի 25 նոյեմբերի (թիվ 18) համարում տպագրվեց Լեռ Կամսարի սոռագրությունը կրող, 1923 թ. գրված տարօրինակ մի նամակ՝ ուղղված հայ ազգի մեծ բարեկամ Անտոնի Քրաֆտ Բոննարի1 դեմ: Կասկածի ենթակա է այն խնդիրը, թե արդյոք Քրաֆտ Բոննարը սացե՞լ է այս նամակը, թե՞ այն պարզապես հանդիսանում է հայ երգիծաբանի մտքի խմահաճության արգասիքը: Մեզ համար հսակ չէ նաեւ այն, թե ինչո՞ւ է «Ազգ-մշակույթ» հավելվածում հրատարակվել այս խնդրահարույց նամակն առանց որեւէ մեկնաբանության:*

Ցնցած մի փոքր ուշացումով, այնուամենայնիվ, կփորձենք մեկնաբանել այս նամակը:

Նախ հակված ենք ենթադրելու, որ խնդրո առարկա նամակում տեղ գտած Լեռ Կամսարի պոռթկումն ու ծայրահեղ կասկածամտությունը հետեւանքն է իր անձնական կյանքի եւ փորձառության: Նա ծնվել է Վանում 1888 թ.-ին եւ մասնակցել 1915 թ.-ի Վանի ինքնապաշտպանական մարտերին. հեղինակն այսպես ապրելով հայ ժողովրդի պատմության ամենածանր ժամանակահատվածներից մեկում, արդարորեն հոգախաբ է եղել հարցի շուրջ միջազգային դիվանագիտության կամայականություններից: Այս մեկնակետից ելնելով՝ գուցե հասկանալի կլիներ հեղինակի «արդար զայրույթը», եթե այն ուղղված լիներ ճիշտ հասցեակրին: Սակայն, արդյոք Քրաֆտ Բոննարն արժանի՞ էր լինելու տվյալ նամակում արտահայտված մահացու ծաղրանքի, ծանր լուսանքների, ինչպես նաեւ անտեղի անպատվությունների կրողը:

Հենց նամակի սկզբում հեղինակն ինքն իրեն իրավունք է տալիս ասելու իր անմեղ զոհին՝ «Թույլ տվեք քանի մը բառով անդրադառնամ ձեզի», մի մարդու, ով իր համակ կյանքը նվիրում է դարձրել բազմաչարչար հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանն ու աննահանջ ծառայությանը ցեղասպանությունը վերապրող եւ որբության կրակոտ շաղիկը հագած հայորդիներին:

Քաղաքակիրթ մարդու ամենամեծ իմաստություններից մեկն է համարվում ճանաչել բարեկամին եւ տարբերել նրան թշնամուց: Միգուցե հանդգնությո՞ւն կլինի մտածել, որ քաղաքական հասունության պակասը եւ դիվանագիտության ասպարեզում խակությունն են, որ երբեմն ծնունդ են տվել այնպիսի մոտեցումների, որոնք հայ ժողովրդի համար երբեմն ունեցել են ճակատագրական հետեւանքներ:

Ցնցած նամակի հիմնական հասցեակիրը Անտոնի Քրաֆտ Բոննարն է, այստեղծրձ հեգնանքի սուր սլաքներից խնայված չեն նաեւ այդ ժամանակաշրջանում գործող բոլոր հայասերները եւ ընդհանրապես իբրեւ երկիր՝ Շվեյցարիան: Մեզ վերապահված չէ այստեղ վերջինիս ջատագովելու ցուցամոլական որեւէ նախանձահուզություն: Բայց համոզված լինելով, որ երախտագիտության զգացումը բարոյական մարդու անկասելի առաքինություններից մեկն է, մեր կոչացող եւ խորունկ վերերից «Բարի Սամարացու» նման սղեռանի բերած երախտավորների հիշատակը վառ պահելու դիտավորությամբ՝ ի մասնավորի կանգ կառնենք 1894 թ.-ից շվեյցարացի ժողովրդի կողմից կազմակերպված հայանպաստ գործունեության վրա, որի շրջագծում ցայտուն կերպով արտահայտվում է նաեւ Քրաֆտ Բոննարի դերը:

Հայերը Շվեյցարիայում

Շվեյցարիայում հայ համայնքի կազմությունն առնչվում է շվեյցարիացի ժողովրդի կողմից կազմակերպված մարդասիրական այն սխանչելի օգնության հետ, որն ունի ավելի քան 100 տարվա պատմություն: Արդեն 1894 թ.-ի դեկտեմբերին Սասունի, ապա 1895 թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կ. Պոլսի, ինչպես նաեւ հայկական բոլոր գավառներում տեղի ունեցած կոտորածների մասին հաղորդում էին Շեյցարիայում լույս տեսնող բոլոր օրաթերթերը: Այս հալածանքների ու կոտորածների հեղինակն էր «կարմիր սուլթան» անվամբ հայտնի Աբդուլ Համիդ Երկրորդը, որը պատմության մեջ ծանոթ է որպես այրունարբու տիրակալ: Թուրքիայի սուլթանների շարքում այս տիրակալը խորամանկ, բայց ամենադաժաններից մեկն է եղել, որը չէր խորշում ընդհուպ իր ազգականների եւ ընտանիքի անդամների դիակների վրայով անցնելուց: Նա բնությամբ վախկոտ եւ շատ կասկածամիտ անձնավորություն էր, սրանից բացի նա մեծ ատելությամբ էր լցված հատկապես հայերի դեմ, իբրեւ հետեւանք իր ունեցած մայրական կոմպլեքսի, քանզի նա տառապում էր զտարյուն թուրքական ծագում չունենալու համար, որովհետեւ ծնվել էր հարեմի՝ հայկական ծագում ունեցող սրկոտիներից մեկից:

1895-ի նոյեմբերին արդեն Շվեյցարիայում լույս է տեսնում Թուրքիայում հայկական կոտորածների վերաբերյալ մի հոդված «Գազետ դը Լոզան» (Gazette de Lausanne) եւ «Ժուռնալ դը Ժենե» (Journal de Gene`ve) թերթերում:

Շվեյցարիայի հայասերների ընկերացկության Լիբանանում հաստատած հայ կույր որբերի պատսպարան-աշխատանոցում

ԱԲԵԼ ՔՀՆ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Լեռ Կամսար եւ Անտոնի Քրաֆտ Բոննար

(Ընդվզում արդար զայրույթի դեմ)



Վերապատվելի Անտոնի Քրաֆտ Բոննար

1895 թ.-ի նոյեմբերի 16-ին Լոզանում հրատարակվող «Ժուռնալ Ռելիժիո դեզ Էգլիզ էնդեփանդան դը լա Սուիս Ռոմանդ» (Journal Re ligieux des Eglises Inde pendantes de la Suisse Romande) թերթում ցյուրիխաբնակ հոգեւորական է. Ժակարի հեղինակությամբ «Թուրքիայում նոր կոտորածներ հայերի դեմ» խորագրով հրատարակված հոդվածում հնչեցին հայանպաստ հավաքների առաջին կոչերը: Նույն թերթում 1895 թ.-ի դեկտեմբերի 28-ին պրոֆ. Ժորժ Գոդեի կողմից լույս է տեսնում մեկ այլ հոդված՝ «Կոտորածները Հայաստանում» խորագրով, որը իմիջիայլոց դառնում է առաջինն այս նյութին անդրադարձող մի ամբողջ հոդվածաշարի:

Հայանպաստ օգնություններ Շվեյցարիայում

Հայանպաստ օգնությունների ազդակը, սակայն, հնչեց Նոյշաթել քաղաքում հոգեւորական էդուարդ Ռոսելեի նախաձեռնությամբ: 1896-ի մարտի 4-ին Նոյշաթելի Մայր տաճարում նա կազմակերպում է «Էգլիզ էնդեպանդանին» պատկանող բողոքական հոգեւորականների մի համաժողով: Այս համաժողովում որոշվում է անհապաղ ձեւավորել մի ազդեցիկ հանձնախումբ՝ պրոֆ. Ժորժ Գոդեի ղեկավարությամբ: Սույն համաժողովի արձանագրության մեջ նշվում է, թե «Պարոն Էդուարդ Ռոսելեն խորապես ցնցված է հայկական կոտորածների մասին «Ժուռնալ դե միսիոն էվանժելիք դը Փարիզ» (Journal des Missions Evange`liques de Paris) թերթի հաղորդած տեղեկություններից: Նա հավատում է, որ Աստված ցանկանում է օգնել տարաբախտ հայ ժողովրդին ոչ թե մեծ տերությունների, այլ եկեղեցու ծոցում գտնվող հոգեւոր ուժերի միջոցով: Ուստի անհրաժեշտ է միանալ «Ազգային եկեղեցու» մեր հոգեւոր եղբայրների հետ՝ ազդելու Շվեյցարիայի բոլոր եկեղեցիների վրա, որպեսզի ստեղծենք ընդհանուր մի շարժում՝ ի նպաստ Արեւելքում հալածվող քրիստոնյաների»: Համաժողովի բոլոր մասնակիցները միանգամայն համաձայն էին այս նպատակի համար ընտրել գործնական մի ճանապարհ. հոդվածների միջոցով լուսաբանել հանրության կարծիքը եւ համապատասխան հայտարարություններով ազդել շվեյցարացիների խղճի վրա: Պրոֆ. Գոդեին առաջադրվեց պատրաստել եւ հրատարակել հայկական կոտորածների վերաբերյալ մի գրքույկ, որով էլ սկիզբ դրվեց հայանպաստ օգնություններին:

1896-ի ապրիլին լույս տեսավ «Հայաստանի տառապանքը» խորագրով գրքույկը՝ արժանանալով հանրության ուշադրությանը: «Ժուռնալ ռելիժիո» (Journal Religieux) թերթում հաջորդաբար հրատարակվող իր հոդվածներով պրոֆ. Գոդեն դարձավ Շվեյցարիայում հայանպաստ օգնություններ կազմակերպող պատկառազդու մի անձնավորություն: Արդեն 1896-ի ապրիլի 1-ին Լոզանի Ավետարանական միության կենտրոնական հանձնախումբը հրատարակ կոչ ուղղեց ի նպաստ տառապյալ հայ ժողովրդի: Ապրիլ եւ մայիս ամիսների ընթացքում բազմաթիվ հոգեւորականներ իրենց եկեղեցիներում եւ համայնքներում այս նպատակով դրամահավաք կազմակերպեցին: Սույն երեւույթը տարածվեց ամբողջ Շվեյցարիայում՝ եկեղեցիների, մամուլի եւ բարեգործ անհատների կողմից կազմելով հայանպաստ օգնությունների հանձնախմբեր: 1896-ի հունիսի 14-22-ը Վանում, ապա օգոստոսի 25-28-ը Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածների կապակցությամբ, երբ հազարավոր՝ անմեղ հայորդիներ զոհվեցին, ամբողջ Շվեյցարիայի տարածքում բարձրացան բողոքի հսկա ալիքներ: Կազմակերպվեցին բազմաթիվ ցույցեր, որոնցից ամենամեծը տեղի ունեցավ 1896-ի սեպտեմբերի 7-ին՝ Լոզանի համալսարանի ռեկտոր, աստվածաբանության պրոֆ. Է. Քոմբի գլխավորությամբ:

«Գազետ դը Լոզան» (Gazette de Lausanne) թերթի տնօրեն, հեղինակավոր լրագրող Ալբերտ Բոննարը իր ճառում պահանջում էր ներկաներից բողոքի ցույցեր կազմակերպել Շվեյցարիայի ողջ տարածքում: Տուգարարները որոշում կայացրեցին ստեղծել մի նոր հանձնախումբ Շվեյցարիայում ստորագրահավաք կազմակերպելու նպատակով՝ իբրեւ շվեյցարացի ժողովրդի կամքի արտահայտություն, որը համապատասխան խնդրագրով պետք է փոխանցվեր շվեյցարական կառավարությանը՝ եվրոպական մեծ պետություններին ներկայացնելու համար: Լոզանում տեղի ունեցած այս միջոցառումները մասնավոր ուշադրության արժանացան մամուլի կողմից, որը եւ խոսքով, եւ գործնականապես ջերմորեն աջակցեց այս ստորագրահավաքի կազմակերպմանը: Հոկտեմբերի 10-ին Լոզանի հանձնախումբը կառավարությանը ներկայացրեց 113,653 ստորագրություններ պարունակող մի փաստաթուղթ: Այսպիսով, 1897-ի փետրվարի 28-ին Ցյուրիխի հանձնախմբի նախագահ պրոֆ. Կ. Ֆյուրերը Շվեյցարիայի համադաշնության նախագահ դոկտոր Ադոլֆ Դոյխերին ներկայացրեց հայանպաստ օգնությունների կազմակերպության ներկայացուցիչներին ընդունելու խնդրագիր: Նույն թվականի մարտի 4-ին հայանպաստ օգնությունների պատվիրակությունն ընդունվում է Համադաշնության նախագահի կողմից: Պատվիրակության խոսնակ պրոֆ. Կ. Ֆյուրերը իր ուղերձում նշում է. «Ներկայացված 433, 080 շվեյցարացիների ստորագրությունները քրիստոնյա հայ ժողովրդի դեմ կատարված սարսափելի վայրագությունների առնչությամբ խորը ցավի եւ բողոքի զորեղ արտահայտությունն են: Մենք ազգային ատելություն եւ ազգային թշնամիներ չենք ճանաչում, ուստի լիահույս ենք, որ, երբ մեր ժողովրդի խիղճը արտահայտվում է հարյուր-հազարավոր ձայների միջոցով, ոչ ոք չի կարող մեզ շահադիտական նպատակներ վերագրել: Մեր ժողովուրդը առաջնորդվում է դեռի այս մեծ հանրահվեն արբազան բարկությամբ եւ ողորմածության զգացումներով: Սույնը պետք է ազդեցություն ունենա նաեւ Եվրոպայի այլ ժողովուրդների վրա»: Այսպիսով, այս ստորագրահավաքները հիմնականում Լոզան քաղաքում, ինչպես նաեւ Շվեյցարիայի այլ քաղաքներում հետապնդում էին հետեւյալ նպատակը. շեշտել ժողովրդի կամքի արտահայտությունը կառավարության հանդեպ, որպեսզի վերջինս կարողանա համապատասխան խնդրանքով հանդես գալ եվրոպական մեծ տերությունների մոտ: Սակայն, Շվեյցարիայի չեզոքությունը չխախտելու մտավախությամբ կառավարությունը գործնական ընթացք չի տալիս այս ստորագրահավաքներին, ընդհակառակը չի զլանում 1900-ի օգոստոսի 31-ին շնորհավորական հեռագիր ուղարկել սուլթան Աբդուլ Համիդ 2-ին գահակալության 25-ամյակի առթիվ:

Վերոնշյալ ստորագրահավաքներն ու հանրահվեները, սակայն, աղարտյուն չեն մնում այն ուղղությամբ, որ դրանք ուղղակիորեն ծառայում են արթնացնելու շվեյցարացի ժողովրդի մասնավոր ուշադրությունը հայ ժողովրդի դառը ճակատագրի հանդեպ, որն էլ իր ուժեղ արտահայտությունն է գտնում մարդասիրական օգնությունների իրագործմամբ: Հավաքված հսկայական նվիրատվությունները շվեյցարացի հայասերներին հնարավորություն տվեցին Արեւմտյան Հայաստանի տարբեր շրջաններում հիմնելու օգնության կենտրոններ՝ Սվազում, Պարտիզակում, Ուրֆայում եւ այլ վայրերում կազմակերպելով որբանոցներ, հիվանդանոցներ, խնամատարության կայաններ:

Ավելորդ չի լինի շվեյցարացի մեծ հայրենասերների շարքում հիշատակել հետեւյալ անունները. Լեոպոլդ Ֆավր, Կառլ Շենկ, Ժորժ Գոդե, Վիլհելմ Վիշեր-Իզելին, Յակոբ Քյունցլեր, Էլիզաբեթ Քյունցլեր, Կառլ Մեյեր, Մաքս Մյուլլեր, Աննա Շվայցեր, Յովհաննես Շվիյոռի, Քաթարինա Շտուկի, Էրի Վիշեր, Գեթրութ Վիշեր, Թեոդոր Վիզեր եւ հատկապես մեծանուն հոգեւորական Անտոնի Քրաֆտ Բոննար:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի ջախջախիչ պարտությունից հետո ստեղծվել էր ոսկի առիթը, որպեսզի դաշնակից պետությունների օժանդակությամբ ստեղծվի պետություն հայկական բռնագրավված հողերի վրա, որպեսզի վերջ դրվի հազարամյակներից եկող քաղաքակիրթ եւ քաղաքակրթություն ստեղծող այս ժողովրդի թշվառությանը: Դժբախտաբար, սակայն, դաշնակից տերություններից

Շարունակությունը՝ էջ 9

* «Ազգ մշակույթ-հավելվածը» նախաձեռնել է հրատարակել Լեռ Կամսարի անտիպ ժառանգությունից հատվածներ, որ մեզ է տրամադրում գրողի թոռը՝ Վանոտի Թովմասյանը: Խնդրո առարկա հոդվածը հերթական գրությունն էր՝ տպագրված մեր թերթում «Անտիպ էջեր» վերնագրությամբ, առանց քաղաքական որեւէ նենթատեքստի: Որպես դասական գրողի ժառանգություն հարկ չենք համարել մեկնաբանության, քանի որ նրա յուրաքանչյուր մատնիշ գրական արժեք է եւ թանկ՝ մեզ համար:

Լեո Կամսար եւ Սնտոնի Քրաֆտ Բոննար

Գ էջից

յուտանչյուրն զբաղված էր իր անձնական շահերի հետապնդումով եւ ունեին ներին անհամաձայնություններ, ինչի հետեւանքով ապարդյուն անցան թանկագին շաբաթներ եւ ամիսներ՝ ի դերեւ հանելով եւ հայ ժողովրդի զավակների, եւ նրանց օտարազգի բարեկամների բոլոր հույսերը: Ընդհակառակը մի ուրիշ անձնավորություն, շատ լավ ըմբռնելով Թուրքիայի իրավիճակը, կարողացավ օգտագործել ժամանակը՝ ի նպաստ թուրք ժողովրդի եւ պետության: Այդ անձը Մուստաֆա Քեմալն էր, որը հետագայում թուրքերի կողմից Աթաթուրք՝ թուրքերի հայր կոչվեց: Նա շատ լավ ըմբռնեց դաշնակից տերությունների՝ իրար նկատմամբ ունեցած մրցակցությունները, եւ, վարպետորեն օգտագործելով նրանց ռազմավարական տկարությունը, հետզհետե կարողացավ սպառազինել թուրքական բարոյազրկված բանակը: 1919-ի օգոստոսին Էրզրումում եւ Սվազում հավաքեց ազգային ժողովներ, իսկ սեպտեմբերին հիմնեց թրքական նոր կառավարությունը: Նա կարեր հաստատեց Սովետական Միության հետ եւ նրանցից ստացավ 3.000.000 անգլիական ոսկի «կապիտալիստական պետությունների դեմ պայքար մղելու նպատակով»: Եվրոպացի գաղտնի գործակալներից կարողացավ գնել մեծ քանակությամբ զինամթերք, հագուստ, կոշիկ եւ այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր բանակի վերակազմավորման համար: Նա հանդես եկավ հետեւյալ կարգախոսով. «Թուրքիան թուրքերին, ոչ մի շերտ մեր հողերից չպետք է հանձնվի հայերին կամ այլ ժողովուրդների»: 1921-1922-ին նրան հաջողվեց վտարել հույներին, գահազրկել սուլթան Մուհամմեդ 6-րդին եւ չեղյալ համարեց Թուրքիայի նախկին պետության կողմից ստորագրված Սեւրի դաշնագիրը (10 օգոստոսի, 1920): Արդարեւ հաղթանակող դաշնակից պետությունները այնքան անտարբեր պետք է լինեին, որ 1922-ին հայերի եւ հույների դեմ կատարված Զմյուռնիայի աղետից հետո ստիպված պետք է լինեին սակարկելու Թուրքիայում ստեղծված եւ ազգայնապաշտական ոգով տոգորված ֆեմալիստական պետության հետ՝ 1923-ին Լոզանում ստորագրելու ի վնաս հայերի եւ ի նպաստ թուրքերի հիմնովին ձեւափոխված պայմանագիրը: Այն, ինչ որ երիտթուրքերը սկսեցին 1915-ին ցեղասպանության իրագործումով, շարունակվեց ֆեմալականների կողմից՝ հասնելով վերջնակետին: Կիլիկիայում, Մարաշում, Ադանայում, Հաճընում եւ Սիսում, ինչպես նաեւ այլ շրջաններում ցեղասպանությունը վերապրողներից շատերը գազանաբար բնաջնջվեցին:

Այդ ժամանակաշրջանում Կիլիկիան գտնվում էր Ֆրանսիայի հովանու ներքո, անգլիական ուժերի՝ Թուրքիայից քաշվելուց հետո թուրքական բանակի բոլոր հարվածները դիմագրավում էին ֆրանսիացիները: Բազմաթիվ զինվորներ եւ սպաներ զոհվեցին ֆրանսիական բանակում եւ պատերազմը Կիլիկիայում դարձավ ավելի ծախսալից: Սա եղավ հիմնական պատճառներից մեկը, որ ֆրանսիական պետությունը ֆեմալականների հետ ուղղակի սկսեց բանակցություններ վարել, որի արդյունքում 1921-ի հոկտեմբերի 20-ին Անգորայում ստորագրվեց ֆրանս-թուրքական բարեկամության համաձայնագիր, որով ամբողջ Կիլիկիան հանձնվեց թուրքերին: Սրա հետեւանքով ավելի քան 150,000 հայ գաղթականներ լքեցին իրենց հայրենիքը՝ հաստատվելով Սիրիայում եւ Լիբանանում: Ֆրանսիական բանակի նահանջը բնականաբար ծանր հուսախաբությամբ ընդունվեց հայերի կողմից՝ արդարորեն որակվելով իբրեւ ծանր դավաճանություն:



Յակոբ Բյունցլեր

Հայերը Շվեյցարիայում եւ Քրաֆտ Բոնարը

Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հալածանքների օրերից սկսյալ բազմաթիվ հայեր փնտրել եւ ապաստան են գտել Շվեյցարիայում: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում եւ դրանից անմիջապես հետո փախստական հայ ընտանիքներ, որոնց թվում նաեւ թոխախավոր անհատներ հաստատվել են Շվեյցարիայում եւ օգնություն են ստացել տեղական մարդասիրական այլազան կազմակերպություններից : Սկզբնական շրջանում, ինչպես Ժնեւում, այնպես էլ Լոզանում ցրված հայերի ընդհանուր վիճակը թվում էր անմխիթար, քանզի կարոտյալների համար նկատի առնված հատուկ ֆինանսական կազմակերպություն եւ համապատասխան կենտրոն գոյություն չուներ: 1921-ի գարնանը փայլատակեց հույսի մի նշույլ. Ժնեւից 23 կմ հեռու Բենյան գյուղաքաղաքում, Լեման լճի ափի մոտ վաճառվում էր 21 սենյակներով ընդարձակ մի պարանոյ, որը գնելու դեպքում շատ հարմարավետ կարող էր լինել հայ գաղթականներին օթեւանելու համար: Կալվածքի սեփականատերը վաճառքի համար պահանջում էր 525,000 շվեյցարական ֆրանկ: Քրաֆտ Բոնարը հայաստանցիների կենտրոնական հանձնախմբին առաջարկում է բաց չթողնել ներկայացված առիթը եւ անպայման գնել այդ կալվածքը: Սկզբնական շրջանում, սակայն, հանձնախմբի անդամներից ոչ մեկը չէր համաձայնվում այդքիսի մեծ գումար ներդնել շենքի գնման համար, երբ մյուս կողմից ավելի գերակշռող եւ առաջնային էին հայ որբերի ու ախոռված ընտանիքների կարիքները Թուրքիայում: Երբ ոչ մի կազմակերպություն պատրաստակամություն չէր հայտնում ստանձնելու Շվեյցարիայում ապաստանած հայ ընտանիքների ու անհատների խնամակալությունը, անհրաժեշտություն զգացվեց այս նպատակի համար ստեղծել մի նոր կազմակերպություն:

Այսպես, ուրեմն, 1921 թ. հունիսի 21-ին հաստատվեց «Հայկական օջախը» (Le Foyer Armenien): Շուտով Բիեն քաղաքում գտնվող հայաստանցիների պատվիրակների ժողովում որոշում ընդունվեց գնել Բենյանի տունը: 1921-ին հուլիսի 13-ին «Հայկական օջախը» առաջին անգամ բացեց իր դռները՝ ապաստան տալով հայրենազուրկ հայ ընտանիքների՝ թվով 46 հոգի: Սակայն շուտ մեկ տարի անց անհրաժեշտ եղավ այս ընտանիքներին տեղափոխել Ժնեւում հիմնված մեկ այլ կենտրոն, քանի որ այստեղ պետք է ապաստաններին հայ որբերը:

Զմյուռնիայի աղետից հետո Կ. Պոլսում քաղաքական իրավիճակը ֆեմալականների ճնշման հետեւանքով շատ ավելի վատթարացավ եւ հայերի նկատմամբ նրանց ունեցած ատելությունն ավելի ակնհայտ դարձավ: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ մարդասիրական բոլոր կազմակերպությունները, ընդ որում նաեւ շվեյցարական հաստատությունները ստիպված եղան դադարեցնել որբախնամության աշխատանքները Թուրքիայում եւ որբերին տեղափոխել արտասահմանյան ապահով երկրներ: Ամերիկյան «Near East Relief» կազմակերպության օգնությամբ, շվեյցարական կենտրոնական հանձնախումբը Կ. Պոլսում իր խնամքի ներքո գտնվող հաստատություններին ճամփորդելու համապատասխան գումար փոխանցելով, հրահանգեց իրենց խնամած որբերի հետ միասին անմիջապես հեռանալ Թուրքիայից: Միաժամանակ անգլիական, ինչպես նաեւ ամերիկյան հայասիրական կազմակերպությունները Հունաստանի Կորֆու քաղաք փոխադրեցին հազարավոր այլ որբերի: 1922-ի նոյեմբերի 19-ին 41 որբեր 7 պաշտոնյաների եւ 2 ուսուցչուհիների հետ միասին հեռանում են Կ. Պոլսից դեպի Մարսիլիայի նավահանգիստը, որտեղից 1922-ի դեկտեմբերի 1-ին գնացքով հասնում են Շվեյցարիայի Բենյան քաղաք:

1922-1930 թվականներին Բենյանի որբանոցում ընդունվեցին 142 որբեր, 101 տղա եւ 41 աղջիկ, իսկ Ժնեւի կենտրոնում՝ 85 փախստականներ, այրիներ, ծերեր, հիվանդներ եւ որբեր:

Շվեյցարիայի հայասերների կենտրոնական հանձնախումբը տեղացի ժողովրդից հաճախ սանում էր դիմումներ՝ երեխաներին որդեգրելու խնդրանքով: Սակայն վերջինս ընթացք չէր տալիս, նկատի ունենալով, որ երեխաները մեծանալու էին իրենց ոչ հարազատ ընտանիքներում՝ արհեստականորեն յուրացնելով մի մշակույթ, որն իրենց բնորոշ չէ: Այսպիսով, նրանք կունենային երկփեղկված մի հոգի՝ դաստիարակությամբ շվեյցարացի, բայց արմատներով՝ հայ: Հայասերների կենտրոնական հանձնախումբը մտավախություն ուներ, որ այս երեխաները ի վերջո կդժվարանային ճանաչել իրենց ինքնությունը եւ ազգային պատկանելությունը շվեյցարացի թե հայ լինելու միջեւ: Այս մեծահոգի կեցվածքն էր Շվեյցարիայի հայ համայնքի գոյավորման հիմնակետը:

Բենյանի որբանոցի երեխաների համար ֆրանսերենի կողքին կազմակերպվեց հայոց լեզվի, Հայ առաքելական եկեղեցու, հայոց պատմության եւ մշակույթի դասավանդումը: Քրաֆտ Բոնարի հիմնական նպատակներից մեկն էր այս երեխաներից պատրաստել ընտրանիների մի խումբ, որը կլիներ գուցե մոտ ապագայում ստեղծվելիք անկախ Հայաստանի պետության ղեկավար մարմինը: Նա ամբողջապես համոզված էր, որ անկախ Հայաստանի ստեղծումը պետք է լիներ արդարությունից բխող հրամայական մի պահանջ: Բայց ավա՜ղ... Լոզանի դաշնագրից, ինչպես նաեւ Թուրքիայի՝ Ազգերի լիգայում ընդունվելուց հետո (1932) բոլոր իրապես մարդկանց համար ավելի քան հստակ դարձավ, որ այլեւս անհնար է քաղաքական լուծում տալ հայկական հարցին: Այս իրողությունը Քրաֆտ Բոնարի կյանքում դարձավ ամենացավալին՝ զգալ, որ իր որբուկները ընդհիշտ մնալու են մի խաբված ժողովրդի տարաբախտ զավակներ:

Այսօր դժվար է ճշգրտությամբ որոշել Բենյանի որբանոցում ընդունված որբերի թիվը. մինչեւ 1939 թվականը 250 տղաներ եւ աղջիկներ ուսանել եւ հասել են կյանքին. նրանցից ոմանք ներգաղթել են Սովետական Հայաստան, ԱՄՆ եւ Կանադա, իսկ որոշ մասը մնացել է Շվեյցարիայում:

Հայերը Ժնեւում

Վերոնշյալ փաստերին պետք է ավելացնել նաեւ, որ հայ համայնքի կազմավորման նախնական փուլում Բազելի, Տյուրիխի, Ֆրիբուրգի, Լոզանի եւ Ժնեւի համալսարաններում իրենց բարձրագույն կրթությունն են ստացել բազմաթիվ հայ անվանի գրողներ, ակնառու դեմքեր, ինչպես՝ Մեծ եղեռնի նահատակ բանաստեղծ Ռուբեն Սեւակը, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, հրապարակագիր Գրիգոր Արծրունին եւ հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյանը:

1887 թվականին սոցիալիստական կողմնորոշում ունեցող ուսանողների մի խմբի՝ հանձինս Ավետիս Նազարբեկի, Մարո Նազարբեկի, Ռուբեն Խանզադի, Գաբրիել Քաֆայանի եւ այլ հեղափոխական գործիչների, Ժնեւում հիմնվում է Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը: Մինչեւ 1891 թիվը այստեղ հրատարակվում է Հնչակյան կուսակցության «Հնչակ» պաշտոնաթերթը:

1890-ին Թիֆլիսում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ձեւավորումից հետո 1891-1914 թթ. Ժնեւում հրատարակվում է Դաշնակցության «Դրոշակ» պաշտոնաթերթը: 1907 թվականին Լոզան քաղաքում կազմավորվում է հայ ուսանողների «Արմենիա» միությունը: Հայ ուսանողներին լուրեր հայթայթելու նպատակով 1914 թվին հրատարակվում է «Տեղեկատու բյուրո» անունով ուսանողական թերթը:

Դեռեւս 1896 թվին Ռեթեոս Բերբերյանի գլխավորությամբ Ժնեւում գործում էր հայկական մի դպրոց, իսկ Լոզանում 1904 թվականին Մարտիրոս Նալբանդյանի կողմից հիմնվեց «Հայկազյան վարժարանը», որը միաժամանակ գիշերօթիկ դպրոց էր: Պետք է ասել, սակայն, որ այս դպրոցների գոյությունը Շվեյցարիայում կարճատեւ է եղել, որովհետեւ այդ ժամանակաշրջանում գոյություն չուներ համապատասխան թվով հայկական համայնք, որը կարողանար նյութապես ապահովել այս հաստատությունների գործունեությունը:

Ժնեւում եկեղեցական արարողություններ սկսել են մատուցվել 1925-ից, ինչի համար կազմվեց հոգաբար մի մարմին՝ Սեդրակ Փափազյանի գլխավորությամբ: Տեղում ծառայող հոգետրականի բացակայության պատճառով այդ ժամանակաշրջանում Փարիզից հրավիրվում էր Վռամշապուհ վրդ. Քիրարյանը, որը Հայ եկեղեցու գլխավոր տոների առթիվ մատուցում էր Ս. պատարագ: Այս արարողությունների երգեցողությունը կատարվում էր Բենյանում ապաստանած որբերի երկսեռ երգչախմբի կողմից:

Սկզբնական շրջանում Շվեյցարիայում ապրող փոքրաթիվ հայ համայնքի եկեղեցական հայաբնակ արարողությունները հյուրընկալվում էին տեղական տարբեր (կաթոլիկ, բողոքական, անգլիկան) եկեղեցիների կողմից: Սակայն, երբ Բ. համաշխարհային պատերազմից հետո Լիբանանից, Սիրիայից, Իրանից եւ Կ. Պոլսից Ժնեւ ներգաղթած հայերի շնորհիվ հարաբերաբար աճեց համայնքի թիվը, զգալի դարձավ սեփական եկեղեցի ունենալու անհրաժեշտությունը: Այսպիսով, Շվեյցարիայում հայ համայնքի ներկայության գերազանց արտահայտությունը դարձավ Ժնեւի՝ Տրանե կոչվող արվարձանում հայկական եկեղեցու կառուցումը, որը երջանկահիշատակ Վազգեն Ա վեհափառի օրհնության կոնդակով օծվեց Ս. Հակոբ Մեբենեցի հայրապետի անունով 1969 սեպտեմբերի 14-ին՝ Սերովբե արք. Մանուկյանի ձեռամբ: Եկեղեցու շինության գլխավոր բարերարն էր եգիպտահայ մեծահարուստ գործարար Հակոբ Թոփալյանը, որի տրամադրած իշխանական նվիրատվությունից բացի տեղի համայնքն էլ նյութապես

Շարունակությունը՝ էջ 9



Դոկտ. Լեոպոլդ Ֆավր

Հայ տղաների շվեյցարական որբանոցը Սվազում

Թեղուտի ծրագիրն անհնար է առանց օրենսդրության ոտնահարման

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

Ueանա լճի սիգ ձկնատեսակի արդյունագործական պաշարների ոչնչացման վերջնափուլին հասնելուց հետո, Հայաստանը մոտ է բնության հանդեպ հերթական խոշոր աղեսին: Մեր բոլորի աչքերի առջեւ, կեղծիքով եւ աչքակապությամբ, պատրաստվում են խաղարկել Հայոց աշխարհի անտառների պատմության մեջ աննախադեպ մի դրամա:

Խոսքը Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում գտնվող Թեղուտի բնական անտառում առնվազն 357 հեկտար ծառերի, այսպես ասած, «օրինական» հատման մասին է: Նպատակը դարձյալ նույնն է՝ շահույթներ կամ գերշահույթներ ստանալու ոմանց ձգտումը:

Թեղուտի անտառի բախտը չի բերել. նրա տակ պղնձի եւ մոլիբդենի հանքավայր կա, որը մագնիսի նման ձգում է հանքարդյունահանման բիզնեսի սիրահարներին: «Վալլեքս» խմբի («Vallex group»-ի) մեջ մտնող «Արմենիան Քափըր Փրոգրամ» (ACP) ընկերությունը (նախագահ՝ Վալերի Մեջլումյան) շատ վճռական է տրամադրված այդ հանքավայրի շահագործման իր ծրագրի իրականացմանը հասնելու առումով:

ACP-ն նպատակ ունի նաեւ տեղում, դարձյալ նույն անտառի հատմամբ, կառուցել հարուստացուցիչ ֆաբրիկա, որտեղի կարողանա ստանալ պղնձի եւ մոլիբդենի խտանյութ: Եթե ընկերության վերոհիշյալ ծրագրերն իրականանան, ապա Թեղուտի հրաշագեղ անտառն ասիճանաբար կոչնչանա: Միայն առաջին փուլում, ըստ ընկերության, հատվելու է 157 հա մակերեսով անտառածածկ տարածք: Ամբողջությամբ ոչնչացվելու է կառուցվելիք ֆաբրիկայից 3,5 կմ հեռավորության վրա գտնվող խառատաձորի (խառատանոց գետի կիրճի) չլճաղ բնությունը, քանի որ այստեղ, ըստ նախագծի, լինելու է ֆաբրիկայի թափոնների համար նախատեսված պոչամբարը:

Իր վերը նշված նպատակներին հասնելու համար, «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունը ձեռք է բերել հանքավայրի շահագործման լիցենզիա (իրավունք)՝ 25 տարի ժամկետով: Ավելին՝ ընկերությունն արդեն իսկ կատարել է խոշոր ծախսեր, մասնավորապես, հանքավայրի պաշարների վերագնահատման համար, որի հետ կապված աշխատանքներն ավարտման փուլում են: Ընդգծենք, որ ընկերությունն այս աշխատանքները կատարել է՝ անտեսելով 2005 թվականից հայաստանյան մամուլում հրապարակված փաստարկված քննադատությունները: Հիշեցնենք, որ Թեղուտի անտառի հատումը էկոլոգիական (եւ ոչ միայն) տեսանկյունից անթույլատրելի է եւ հակաօրենսդրական:

Ավելորդ չենք համարում բնապահպանության նորանշանակ նախարար Արամ Հարությունյանի եւ պատասխանատու այլ պաշտոնյաների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Թեղուտի անտառում կան Հայաստանի բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ Կարմիր գրքում) գրանցված բազմաթիվ ծառատեսակներ եւ բուսատեսակներ: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի բույսերի կարգաբանության եւ աշխարհագրության բաժնի վարիչ, Հայկական բուսաբանական ընկերության նախագահ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Էլեոնորա Գաբրիելյանի** հավաստմամբ, Թեղուտում կա Հայաստանի Կարմիր գրքում գրանցված Տրաուստվետերի թխկի (կրճատվող ծառատեսակ), ինչպես նաեւ կովկասյան խուրմա, որն առաջին կարգի պատկանելիություն ունի եւ դեռ 1989-90 թթ. պաշտոնապես համարվել է խիստ հազվագյուտ եւ անհետացման եզրին գտնվող ծառատեսակ: Բացի նշված ծառերից, Թեղուտի անտառում աճում է նաեւ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված ընկուզենի, որը կրճատվող արեալի է եւ դարձել է հազվագյուտ:

Նույն գիտնականի հավաստմամբ, Թեղուտում կան նաեւ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված բազմաթիվ բուսատեսակներ, մասնավորապես՝ հիրիկազգիներից Ադամի հրքում, տերևազգիներից Մարշալի պոպոզիկ, խոլորձազգիներից Լանջլամերային կնկնուկ, չզարգացած լիմոդորում, իսկական թոչնաբուն, կանաչաձաղիկ թիթեռնկախոլորձ, երկարատերեւ ու կարմիր եղբորոսիններ, կնկնուկ, կաղիկի եւ առական խոլորձներ, Ռովիլի դակտիլորիզ, ընդեղազգիներից՝ միայն Հայաստանում աճող Միրզոեւայի ձնծաղիկ, նեխուրազգիներից Կոզա-Պոլյանսկու եզնակող (էնդեմիկ եւ Հայաստանում էլ խիստ հազվագյուտ հանդիպող):

Ըստ Հայկական բուսաբանական ընկերության նախագահի, Թեղուտի անտառում կա նաեւ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված Արտյուշենկոյի ձմեռնածաղիկ (շահարգիզազգիներ ընտանիքից): Այն նույնպես էնդեմիկ է (ամբողջ աշխարհում աճում է միայն Հայաստանում): Արտյուշենկոյի ձմեռնածաղկի կապակցությամբ գիտնականն ասաց.

- Դա շատ հազվագյուտ բույս է, բացառիկ գեղեցկություն ունեցող: Այն ես եմ հայտնաբերել եւ անվանակոչել՝ ի հիշատակ Պետերբուրգում ապրող, համաշխարհային ճանաչում ունեցող մեծ գիտնական (բուսաբան) Արտյուշենկոյի, որը, ցավոք, մի քանի տարի առաջ մահացավ: Արտյուշենկոյի ձմեռնածաղիկը շահարգիզազգիների ընտանիքին է պատկանում, իսկ այդ ընտանիքի վերաբերյալ նույնիսկ միջազգային կոնվենցիա կա: Բացարձակապես անթույլատրելի է Թեղուտի անտառի վայրում հանքավայրի շահագործումը: Ուղղակի ափսոս է այդ գեղեցիկ, հոյակապ անտառը, դրա ոչնչացումը սրբապղծություն կլինի:

Հավելենք, որ է. Գաբրիելյանի տեղեկացմամբ, Թեղուտում կա նաեւ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված խոշորատերեւ պախիֆրագմա, որը մեր երկրի համար խաչածաղկավորների ընտանիքից նոր ցեղ է: Այն Հայաստանում խիստ հազվագյուտ է, հայտնաբերված է միայն Թեղուտ գյուղի շրջակայքում, խառատաձորում, որը ACP ընկերության ծրագրի իրականացման դեպքում լցվել-ծածկվելու է թունավոր թափոններով:

Ընկերությունն ինքն էլ չի ժխտում, որ «բնական էկոհամակարգերը կենթարկվեն ոչնչացման կամ զգալի կերպափոխության», ինչպես նաեւ այն, որ բաց հանքի եւ պոչամբարի տարածքում «բուսածածկույթը գրեթե լիովին պետք է ոչնչացվի»: 2005 թ. կազմված «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» (հետայսուհետ՝ Գնահատում) փաստաթղթում չի էլ թաքցված, որ «Մեծ է որոշ հազվագյուտ եւ Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի տեսակների անհետացման հավանականությունը»: Իրականում այդ հավանականությունը ոչ թե մեծ, այլ շատ մեծ է, չկա որեւէ երաշխիք, որ դրանք կպահպանվեն: Ընկերությունն ինքն էլ այդպիսի երաշխիք չի տալիս, «Արմենիան Քափըր փրոգրամ» ՓԲԸ տնօրեն **Գագիկ Արզումանյանը** նշել է ընդամենը «բույսերի հազվագյուտ տեսակների հնարավոր առավելագույն պահպանման» մասին: («Իրավունք» թերթի «Մանրամասներ եւ հետաքննություն» հավելված, 3-9 մայիսի, 2007 թ.):

Ավելին. եթե խոսքը առաջին հերթի շահագործման ընթացքում կառուցվելիք 48,5 հա մակերեսով ավտոճանապարհների, 54 հա պոչամբարի, 20 հա պոչատարի ու ջրահեռացման ջրանցքի, 110 ԿՎտ էլեկտրահաղորդման գծի կառուցման համար անհրաժեշտ 30 հեկտարի եւ այլ տարածքների մասին է, ապա նշված բուսատեսակները դասապարտված են անհետացման, քանի որ դրանց տեղափոխության կամ սերմերը հավաքելու, պահպանելու եւ շրջակա տարածքներում ցանք կազմակերպելու պարտավորություն ընկերությունը չի ստանձնել:

Դարձյալ ընդգծում ենք, որ վերոհիշյալ բուսատեսակների անհետացման դեպքում Հայաստանն ամենակոպիտ կերպով խախտած կլինի 1993 թ. մարտի 31-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից վավերացրած «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիան: Եթե մինչեւ իսկ ընդունենք, թե հազվագյուտ եւ Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի տեսակների անհետացումը միանշանակ կամ անխուսափելի չէ, այլ ուղղակի մեծ է դրանց անհետացման հավանականությունը, ինչպես ընկերությունն է խոստովանել, ապա ACP ընկերությանը եւ ՀՀ բնապահպանության նախարարությանն ո՞վ է թույլ տվել այդպիսի մեծ ռիսկի գնալ...

Միանշանակ է, որ թեկուզ 357 հա անտառի հատման պարագայում, ոտնահարվելու է «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը: Մասնավորապես՝ խախտվելու է նշված օրենքի 17-րդ հոդվածը, ըստ որի, «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը եւ դրանց աճելավայրերի վաստրացմանը»: Եթե նույնիսկ չլինի թվաքանակի կրճատում, ապա նշված բուսատեսակների աճելավայրերի վաստրացումը, իսկ վերոհիշյալ 357 հա տարածքում վերացումը ուղղակի անխուսափելի են: Սա միանշանակ անթույլատրելի է՝ թեկուզ միայն այն պատճառով, որ անթույլատրելի է օրենքի խախտումը: Միայն դա բավարար է, որպեսզի ընկերության նախագծի իրականացումն արգելվի: Սակայն առկա փաստերը վկայում են, որ եթե ACP-ի նախագիծն իրականություն դառնա, ՀՀ օրենսդրության խախտումները չեն սահմանափակվի սոսկ վերը նշվածներով: Միավասիկ...

Ընկերության «Գնահատում» փաստաթղթի համաձայն, հետազոտված տարածքում դիտարկված սողունների 10 տեսակներից երկուսը՝ Elaphe hohenackeri եւ Testudo graeca, ընդգրկված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում (այսուհետ՝ Կարմիր գրքում), իսկ վերջինը նաեւ՝ Բնության պահպանության միջազգային միության Կարմիր գրքում (այսուհետ՝ Միջազգային Կարմիր գրքում): Ըստ նույն փաստաթղթի, հետազոտված տարածքում հանդիպող թռչուններից 7-ը եւ կաթնասուններից 8-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, 14 կաթնասուն էլ նախատեսվում է ընդգրկել նույն գրքի հաջորդ հրատարակության մեջ: Ավելին. ուսումնասիրված տարածքում հանդիպող կարծրաթեւ եւ թեփուկավոր միջատների մեկական տեսակներ գրանցված են միջազգային Կարմիր գրքում:

Բնության պահպանության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Կարեն Մանվելյանի** տեղեկացմամբ, «Թեղուտում կա Հայաստանի Կարմիր գրքում գրանցված գոնե արջ: Կա նաեւ կխտար, որը թեեւ 80-ականների վերջին հրատարակված Կարմիր գրքում չկա, բայց այժմ նույնպես հայտնվել է վերացման վտանգի առջեւ»:

Կենսաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ կենսաբանության ինստիտուտի կենդանաբանական թանգարանի վարիչ **Մարտին Ադամյանի** հավաստմամբ, «Այնտեղ (Թեղուտի անտառում. -Ա. Հ.) կան խարտիշ եւ օձակեր արծիվ, երկուսն էլ, որպես անհետացող տեսակ, գրանցված են Հայաստանի եւ նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքերում: Այդ թռչունները հաշվառման մեջ են նաեւ միջազգային Կարմիր գրքում»:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ է սպասվում Թեղուտի անտառի կենդանական աշխարհին կամ ինչ է մնալու այդ կենդանական աշխարհից՝ հանքավայրը 25 տարի գիշեր ու ցերեկ շահագործելուց, ծանր տեխնիկայի հոնդյունից եւ այլ աղմուկից, շարունակաբար իրականացվելիք պայթեցումներից ու ցնցումներից, գիշերները լուսարձակներ միացնելուց եւ բացասական այլ ազդեցություններից հետո: Նույնիսկ «Գնահատում» փաստաթղթում ափսոսանք է հայտնված կենդանիների մի շարք տեսակների բնակավայրերի կորստի եւ տարածման սահմանափակումների համար: Հիշյալ փաստաթղթում նշված է նաեւ. «Տնտեսական գործունեությունը՝ ծառահատումը, խառատաձոր գետի հունի փոխումը, պայթեցումները եւ ծանր բեռնատար ավտոտրանսպորտի շահագործումը անխուսափելիորեն կբերեն անտառային զգայուն կենսացենոզի ձեւափոխմանը եւ մասամբ ոչնչացմանը»:

Այսպիսով ակնհայտ է, որ ACP ընկերության հիշյալ ծրագրի իրականացման դեպքում կոպտորեն խախտվելու է «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջը, այն է՝ «Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը եւ դրանց ապրելու վայրերի վաստրացմանը»: Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակների ապրելու վայրերի ոչնչացումը, իսկ շրջակա տարածքներում նաեւ վաստրացումն անխուսափելի է, եթե անտառը հատելով բացվի եւ շահագործվի հանքավայրը, կառուցվի եւ շահագործվի լեռնահարստացման կոմբինատը:

Անժխտելի է նաեւ, որ ընկերության նախագծի իրականացման դեպքում խախտվելու է նաեւ օրենքի կարգավիճակ ունեցող «Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները» փաստաթղթի (այսուհետ՝ Հիմունքներ) 14-րդ հոդվածը: Դրա համաձայն, «Արգելվում է նախագծերի մշակումն ու իրականացումը, որոնք կարող են խախտել բնական հավասարակշռությունն ու էկոլոգիական համակարգերը»: Ինքնին հասկանալի է, որ անտառն ինքը մի բարդ էկոլոգիական համակարգ է՝ բազմաթիվ (կենդանական, բուսական եւ այլն) ենթահամակարգերով հանդերձ, որը վերոհիշյալ (զանգվածային) անտառահատման պարագայում անխուսափելիորեն խախտվելու է:

Ընկերության ներկայացուցիչների եւ, մասնավորապես, տնօրեն Գագիկ Արզումանյանի հրապարակային ելույթներից, հարցազրույցից («Մանրամասներ եւ հետաքննություն», 3-9.05.2007 թ.) ակնհայտ է, որ վերը նշված փաստարկներին, օրինախախտման անխուսափելիության վերաբերյալ մեր պնդմանը հակադրելու ոչինչ չունեն, բացի... խուսանավելուց: Օրինակ, ըստ Գ. Արզումանյանի, «Ծրագրի իրականացմանը վերագրվող օրենսդրական խախտումներ ներկայացնողների մեկնաբանությունները, ի վերջո, հանգում են նրան, որ նշված իրավական ակտերը ցանկացած պարագայում արգելում են շրջակա միջավայրին վնաս պատճառող կամ նույնիսկ շրջակա միջավայրը որեւէ կերպ փոփոխող ցանկացած գործունեություն»:

Մինչդեռ իրականում, ինչպես վերը շարադրվածից է ակնհայտ, այդպիսի մեկնաբանություն չի տրվել ու տրվում: Խոսքը «ցանկացած պարագայի» մասին չէ, արգելքն անհրաժեշտություն եւ, ՀՀ օրենսդրության համաձայն պարտադիր է, եթե տվյալ տարածքում Կարմիր գրքում գրանցված բույսերի եւ կենդանիների տեսակներ են ապրում: Ստացվում է, որ դրանք պրն Արզումանյանի համար որեւէ նշանակություն չունեն, բույսերի եւ կենդանիների «ցանկացած» տեսակներից չեն տարբերվում, հետեւաբար նույն հարցազրույցում նրա այն հավաստումը, թե՝ «մեզ համար եւս, իհարկե, թանկ է բնությունը», մեղմ ասած, անկեղծ չէ:

Երկրորդ. վերը շարադրված մեր փաստարկները չեն նշանակում նաեւ, թե իրավական ակտերը արգելում են «շրջակա միջավայրին վնաս պատճառող կամ նույնիսկ շրջակա միջավայրը որեւէ կերպ փոփոխող ցանկացած գործունեություն»: Իհարկե, այդպիսի արգելք չկա: Սակայն տվյալ դեպքում խոսքը ոչ թե «ցանկացած գործունեության», այլ Կարմիր

Շարունակությունը՝ էջ 9

734 - 2008

2 էջից

Թեղուտի ծրագիրն անհնար է առանց օրենսդրության ոտնահարման

գրում գրանցված բույսերի աճելավայրերը եւ կենդանիների արածելու վայրերը վաթարացնող, ավերող գործունեության մասին է, ինչը, անշուշտ, պետք է արգելված լիներ եւ արգելված է իրավական ակտերով: Խոսքը նաեւ այն մասին է, որ այդ գործունեության արդյունքում Կարմիր գրքում գրանցված որոշ բուսատեսակներ ուղղակի ոչնչացման սպառնալիքի տակ կհայտնվեն, ինչը ընկերության տնօրենը, ըստ էության, թույլատրելի է համարում:

Երրորդ. ըստ Գ. Արզումանյանի, «հաշվի առնելով, որ ծրագրի իրականացումը զգալի ազդեցություն կունենա անտառային ֆոնդի վրա, ընկերությունը հանդես է եկել համարժեք անտառվերականգնման աշխատանքների իրականացման նախաձեռնությամբ»: Ընկերության տնօրենի այս խոսքը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Հիշեցնենք, որ անտառվերականգնման աշխատանքներն ինչպես էլ կազմակերպվեն, միեւնույն է, ծառերի տնկիները մի քանի տարվա ընթացքում չեն կարող վերածվել ծառերի, առավել եւս՝ անտառի, որը սոսկ ծառերի մեխանիկական համախումբ չէ, այլ բուսածածկույթով (եւ ոչ միայն...) օժտված բարդ էկոհամակարգ: Անտառի վերականգնման կամ անտառի ստեղծման համար տասնամյակներ են անհրաժեշտ, եւ սա հայտնի է նույնիսկ ոչ մասնագետին: Տնկիները (թեկուզ եւ կտրված կամ կտրվելիք ծառերից երկու անգամ ավելի) հողին հանձնելը դեռ չի նշանակում անտառ տնկել, հետեւաբար խոսք չի կարող լինել համարժեք անտառվերականգնման մասին:

Ինքը՝ ընկերության նախագահ **Վալերի Մեջլումյանը**, հունիսի 4-ին Թեղուտի անտառ կատարած այցելության ժամանակ ասաց. «Միաժամանակ մենք ֆինանսավորելու ենք մասնագիտացած կազմակերպությունների՝ «Հայանտառի» հետ կապված, տնկելու են երկու անգամ ավելի ծավալի անտառ (այստեղ կողից մեկը ուղղեց՝ տնկարկներ.- Ա. Հ.), որոնք պրոֆեսիոնալ մատակարարման դեպքում, ասենք, 30, 40, 50 տարուց հետո անտառ կդառնան»:

«Պրոֆեսիոնալ մատակարարում» ասելով՝ Վ. Մեջլումյանը, հավանաբար, նկատի ուներ տնկիների արհեստավարժ խնամքը՝ ոռոգումը, համապատասխան դեղանյութերով վնասատուներից, հիվանդություններից պաշտպանությունը եւ այլն: Այսինքն՝ այն միջոցառումները, առանց որոնց, տնկիները տնկիներ էլ կմնան, ավելի ճիշտ, կչորանան ու ճիպոտներից շատ չեն տարբերվի, համենայն դեպս, չեն դառնա անտառ: Սակայն, որքան մեզ հայտնի է, ընկերությունը տնկիների խնամքը 30-50 տարով ապահովելու, երաշխավորելու (մինչ կվերածվի անտառի) կամ դրա համար համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելու պարտավորություն չի ստանձնել: Եվ եթե առաջիկայում էլ չստանձնի, ապա օրինախախտմամբ անտառը հատելուց հետո որոշակի անձինք, մասնավոր ընկերությունը բիզնես ծավալելով շահույթ կստանան, իսկ տնկիների խնամքը կիրականացվի պետբյուջեի (հարկատուներիս) միջոցների հաշվին: Սա անթույլատրելի է, սակայն հուսանք, որ բանը անտառի հատմանը եւ այդ տնկիները հողին հանձնելուն չի հասնի:

Նույն Վ. Մեջլումյանին, երբ հուլիսի 4-ին Լոռու մարզ կատարած այցելության ընթացքում հարցրեցի, թե ընկերության նախագահը բացառո՞ւմ է օրենսդրության խախտման գնով հանքավայրի շահագործումը, հնարավո՞ր է այդ շահագործումը օրենսդրության ինչ-որ



հոդվածի, կետի խախտմամբ, պատասխանեց. «Չէ, ինչքան ինձ հայտնի է, մինչեւ այսօր մենք ոչ մի կետ ոչ մի հոդվածի չենք խախտել, այդպիսի հոդված եւ կետ մեզ հայտնի չէ: Առաջիկայում նույնպես չենք խախտի»:

Ինչպես ակնհայտ է, ընկերության նախագահը, մեղմ ասած, ճշմարտությունը չի ասում, քանզի նախատեսված անտառահատումը հնարավոր չէ առանց «Բուսական աշխարհի մասին» եւ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաեւ Հայաստանի ստորագրած «Կենսաբազմազանության մասին» միջազգային կոնվենցիայի պահանջների խախտման: Հայաստանի կառավարությունը, գյուղատնտեսության նախարարությունը կամ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը Թեղուտի անտառի հողի կարգավիճակը փոխելու եւ անտառահատման թույլտվություն տալու պարագայում կոպտորեն խախտած կլինեն բնապահպանության ոլորտում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչն անհետեւանք չի լինի:

Ընդգծում ենք, որ խնդիրը կամ-կամ է դրված, երրորդ տարբերակ չկա, այսինքն՝ նախատեսված անտառահատումը հնարավոր չէ առանց ՀՀ օրենսդրության պահանջների խախտման: Պատահական չէ, որ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության պետ **Արսեն Ավագյանը** բացատրական կարծիք է ներկայացրել ընկերության նախագծի վերաբերյալ: ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Ա. Սանթրոսյանին ուղղված նրա 11.09.2006 թ. թիվ 023/Ն-1402 գրության մեջ գրված է.

«Ըստ աշխատանքային նախագծի, տարածքը հիմնականում անտառածածկ է: Հատման ենթակա է 127700 ծառ: Բացի այդ, նշված տարածքը հարուստ է օգտակար բուսականությամբ, առաջին հերթին, եզակի դեղաբույսերով... Նշված տարածքի կենդանական աշխարհը հարուստ է իր բազմազանությամբ... Նշված անտառի վերացումը անդառնալի է... Գտնում ենք, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացված աշխատանքային նախագիծը բացասական ազդեցություն կունենան բուսական եւ կենդանական աշխարհի վրա, որը իր հերթին բացասաբար կանդրադառնա շրջակա միջավայրի եւ տվյալ տարածքի էկոլոգիական հավասարակշռության վրա: Ելնելով վերը նշվածից, Բնապահպանական պետական տեսչությունը «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքային նախագծի վերաբերյալ տալիս է բացասական կարծիք»:

Ցավոք, վերը մեջբերված կարծիքն արհամարհել է ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի եւ նրա այժմ արդեն նախկին տնօրեն Ա. Սանթրոսյանի կողմից: Նշված ՊՈԱԿ-ն ընկերության ներկայացրած աշխատանքային նախագծի վերաբերյալ տվել է դրական եզրակացություն՝ անտեսելով, որ այդ նախագիծը իրականացման դեպքում կոպտորեն խախտվելու են ՀՀ օրենսդրության պահանջները: Իսկ թե ինչո՞ւ է անտեսել, ինչո՞ւ է դրական եզրակացություն տվել նաեւ ընկերության ներկայացրած «Թեղուտի լեռնահատուցման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» փաստաթղթին, կարծում եմ, կոռուպցիոն դրդդապատճառ ունի, որը պարզել, ապացուցելը ՀՀ գլխավոր դատախազության խնդիրն ու պարտականությունն է:

Միաժամանակ նշենք, որ հիշյալ ՊՈԱԿ-ի տված դրական եզրակացություններն այսօր լումայի արժեք չունեն, եւ անհրաժեշտ է կատարել վերը նշված փաստաթղթերի նոր փորձաքննություն: Այն պարզ պատճառով, որ ընկերությունը հընթացս փոխել է իր ելակետային տվյալները: Փաստն այն է, որ ընկերության աշխատանքային նախագծի համաձայն, կոմբինատի արդյունաբերական օբյեկտների շինարարության եւ հանքավայրի վերջնական շահագործման անհրաժեշտ տարածքը կազմելու է մոտ 670 հա, որից անտառածածկ է 510 հեկտարը, իսկ առաջին փուլում անտառից հատման է ենթակա 190 հա: Մինչդեռ, նախագիծը վերանայելուց հետո, ըստ ընկերության նախագահ Գ. Արզումանյանի, անտառահատման ենթակա տարածքը 357 հեկտար է, որից առաջին փուլում հատվելու է 157 հա: Այսպիսով միայն 1-ին փուլում նախագծով նախատեսված 190 հեկտար անտառածածկ մակերեսի 33 հա պակաս տարածք զբաղեցնելու, նշված մակերեսով պակաս անտառ հատելու պարագայում, ընկերությունը պետք է լուրջ փոփոխություններ կատարեր փորձաքննության դրական եզրակացությունը ստացած իր նախագծում: Այսինքն պետք է փոխեր տարբեր օբյեկտների (կոմբինատ, արտադրամասեր, ավտոճանապարհներ, պայթուցիկ նյութերի պահեստ, էլեկտրաէներգիայի հետ կապված կառույցներ եւ այլն) եւ տեղադրքը, միմյանցից հեռավորությունը, միգուցե նաեւ չափերը: Մինչդեռ նշված փոփոխությունների ենթարկված, էապես փոխված նախագիծը պահանջում է նոր փորձաքննություն, ինչը կատարված չէ, եւ ընկերությունը կարծես միտք էլ չունի փոփոխված փաստաթուղթը ներկայացնելու փորձաքննության: Իսկ ՀՀ բնապահպանության նախարարությունն այս կապակցությամբ դեռ լռում է...

Ընկերության նախագահը, չգիտես ինչ հիմքեր ունենալով, վստահ է, որ հանքավայրի շահագործման եւ հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման ծրագիրը վերջնական հաստատում կունենա:

- Եվ այդ ծրագրերի հիման վրա կսկսենք մեծածավալ շինարարական աշխատանքները կամ այս տարվա վերջին, կամ եկող տարվա սկզբին,- ասաց Վ. Մեջլումյանը:

Տեղեկատվության մեր աղբյուրների փոխանցմամբ, վերոհիշյալ ծրագրի իրականացման գործում շահագրգիռ որոշ անձինք ջանք ու եռանդ չեն խնայում ՀՀ վարչապետին ապատեղեկատվությամբ, կիսաճշմարտություններ ներկայացնելու: Տրվում են նոր եւ բազմաթիվ աշխատատեղեր ստեղծելու, հանքավայրի եւ հարստացուցիչ ֆաբրիկայի շահագործմամբ պետական բյուջե խոշոր գումարներ փոխանցելու խոստումներ, իսկ բնության եւ ընդհանրապես, ողջ երկրի հասցվելիք վնասը հիմնականում լռության է մատնվում:

Գրեթե չենք կասկածում, որ բնությանը (եւ ոչ միայն) պատճառվելիք վնասի մասին չի տեղեկացվում նաեւ ԹՁԸ բանկի ղեկավարությունը: Ընկերությունը հենց այս բանկից է ակնկալում ստանալ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ 268 ԱՄՆ դոլարից 198 մլն դոլար վարկը: Ըստ Վ. Մեջլումյանի, նշված բանկի հետ իրենց բանակցությունները հաջողությամբ են ավարտվել, եւ առաջիկա մի քանի ամսվա ընթացքում, ամենայն հավանականությամբ, կստորագրվի վարկային մի հզոր ծրագիր: Հուսանք, որ գոնե ԹՁԸ բանկի ղեկավարությունը կիասկանա, թե ինչ է սպասվում Հայաստանի բնությանը եւ անուղղակիորեն մասնակից չի լինի մայր բնության հանդեպ վերոհիշյալ ոտնձգությանը:

■

3 էջից

Լեռ Կամսար եւ Անտոնի Քրաֆտ Բոննար

Ժնեւի Սբ. Հակոբ եկեղեցին

ու բարոյապես բերեց իր գործում մասնակցությունը: Շնորհիվ ճարտարապետ Էդուարդ Ութուճյանի, եկեղեցին կրելով հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության դրոշմը, Ժնեւի քրիստոնեական համայնքների ընտանիքում աչքի է ընկնում իր շեշտված հայկականությամբ:

Այսպիսին էր շվեյցարացի հայասերների պատմությունը, նրանց թվում հայ համայնքի համար մասնավոր նշանակություն ունեցող Անտոնի Քրաֆտ Բոննարը, որին ուղղված ճնապատական, մռայլ եւ սեւ երգիծանքով լի նամակով դիմել է Լեռ Կամսարը: Այս հայասերների ցուցաբերած բարոյական անգնահատելի պատրաստակամության եւ կազմակերպած նյութական հսկա նվիրատվությունների շնորհիվ է, որ Մեծ եղեռնի մահվան բռվից անցած ծնողազուրկ հայորդիների հետագայում կազմած ընտանիքների հիման վրա ձեւավորվեց եւ հետզհետե ավելի բազմացավ Շվեյցարիայի հայ համայնքը, որի թիվն այսօր, հիմնվելով ողջամիտ տվյալների վրա, հասնում է 4.000-ի:

Փիլանտրոպներից արմենոֆիլներ

«Ո՞վ է տեսեր քայսօր, որ դիվանագիտական գործերու մեջ սերը դեր խաղա կամ ինչ օգուտ կհուսաք բերել հայ ազգին ձեր սիրովը», ասում է Լեռ Կամսարը Քրաֆտ Բոննարին ուղղված իր նամակում:

Հայտնի երեւույթ է, որ դիվանագիտության մեջ սերը չափանիշ չէ: Արդարեւ, դիվանագիտության մեջ չկան մնայուն բարեկամներ եւ թշնամիներ, այլ գոյություն ունեն հիմնական շահեր: Այստեղ, ինչպես աստղազարդ երկինքը մարդու գլխի վրա, եթե նրա մեջ գոյություն չունենար բարոյական օրենքը, եթե խղճի զգացումն ու կյանքում դրանով կողմնորոշվելու գիտակցությունը սկզբունք չլիներ, ինչո՞վ կտարբերվեր մարդ արարածը գազանից. մարդը մարդուն գայլ կդառնար, ինչպես ասում է լատինական հին ասացվածքը:

Շվեյցարիայում հայանպաստ օգնություններ կազմակերպող բոլոր երախտավորները կոչվել են ֆիլանտրոպներ (philanthropes): Հունարեն լեզվի զույգ արմատ բառերից (ֆիլոս եւ անտրոպոս, այսինքն՝ սեր եւ մարդ) կազմված այս հասկացության հիմքում առանձնապես կարեւորվում է սիրո ընդգծումը մարդու նկատմամբ: Մարդասիրությունը եղել է ուրեմն 19-րդ դարի վերջավորության եւ 20-րդ դարի մինչեւ 30-ական թվականները ձգվող ժամանակահատվածի Շվեյցարիայում գոյություն ունեցած եւ վերջապես օգտաշատ առաքելության վերածված հայասիրության հիմնական շարժառիթը: Հայանպաստ գործունեության այս ընդարձակ դաշտում, ի թիվս այլ մարդասերների, իբրեւ ազնիվ մշակ հանդես է եկել նաեւ Անտոնի Քրաֆտ Բոննարը, որի անմահ հիշատակին ներկա հոդվածով փորձեցինք անդրադառնալ՝ երախտագիտության անկեղծ զգացումով:

Հոգեւոր հովիվ Շվեյցարիայի հայոց

Ժնեւ, 12 հուլիս 2007

«Թե կուզես հաշտ ապրինք բարի հարեւան, պատվիս ու կրոնիս, հացիս մի դիպչի»:
Ջիվանի

ԱՐՏՈՒՐ ԽԱՆԶՅԱՆ

Ստորումներ Ջավախքի հուշարձաններ այցելելուց հետո

2007 թ. հուլիսի վերջերին մեկ շաբաթ անցկացրի Ջավախքում: Ոտքով քայլեցի-անցա գյուղից գյուղ, հուշարձանից հուշարձան: Լուսանկարեցի 30-ից ավելի գյուղի հին ու նոր հուշարձանները, եղան ջերմ, սրտառուչ հանդիպումներ իմ հայրենակիցների հետ: Ուզում եմ ընթերցողին հայտնել շրջագայություններից ստացած տպավորությունների, հուշարձաններին առնչվող հին ու նոր խնդիրների եւ դրանց լուծման հնարավոր ուղիների մասին:

Ոգեւորող, դրական գործընթացներ: 1988 թ. առաջին շրջագայություններից անցել է մոտ երկու տասնամյակ, երկրում կատարված անսպասելի զարգացումների հետեւանքով Ջավախքում կուտակվող չլուծված խնդիրներին զուգընթաց ակնառու են հուշարձաններին առնչվող հուսադրող զարգացումներ: 1988 թ. հայոց ազգային վերելքի ժամանակահատվածի ոգեւորությունը եւ հետաքրքրությունը պատմական հուշարձանների հանդեպ չի պակասել: Ավելի, մեծացել է նախնիներից ժառանգություն մնացած արժեքների հանդեպ սերը՝ պահպանելու եւ սերունդներին արժանավայել փոխանցելու մտահոգությունը եւ պատասխանատվությունը: Վերանորոգվում են հին հուշարձանները, կառուցվում են նորերը:

Ջավախքցիները (անկախ տարիքից) շատ ուշադիր են իրենց հուշարձանների մոտ շրջող անծանոթների հանդեպ: Մոտենում, հարցուփորձ էին անում: Երբ պարզում էին, որ եկողը իրենց երկրացին է, եւ նպատակն էլ բարի է, շատ էին ուրախանում. առաջարկում էին իրենց օգնությունը, ինձ (ոչ մասնագետիս) ուղղում իրենց հետաքրքրող զանազան հարցեր (գլխավորապես հուշարձանի պատկանելության եւ դարաշրջանին վերաբերող): Անմոռանալի են հանդիպումները Գումբուրդոյում (Մղդեսյան Փաշիկի եւ ընկերների հետ), Վաչիանում (Արտակի, Սուրենի եւ ընկերների հետ), Բոգդանովկայում (Միհր Փութուլյանի, Արտակ Ղարսլյանի հետ), Կարտիկամում (Կոլյա Դումանյանի հետ)...

Վերակառուցվող եւ նորակառույց եկեղեցիներ, մատուռներ

Խորհրդային ասպետուրաց քաղաքականության տարիներին տասնամյակներ անուշադրության մատնված եւ արհամարհված պատմական հուշարձանների մի մասը հասել էր քայքայման եզրին: Ջավախքցիները լավատեղյակ են տարածաշրջանի քաղաքական զարգացումներին, բարձր են գնահատում ժառանգված պատմամշակութային արժեքները եւ լինելով դրանց իսկական ժառանգորդն ու տերը՝ խնամքի եւ վերանորոգման հարցերով այլեւս չեն դիմում ո՛չ վերեւ, ո՛չ էլ աջ ու ձախ...

Ազատականացման առաջին իսկ տարիներին (չնայած ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակին) իրենց ուժերով, մեկը մյուսի հետեւից բարենորոգեցին եկեղեցիները, կառուցեցին նորերը: Դա ինքնաբուխ գործընթաց էր, ինքնակառավարվող ներքին զարգացում, երբ Մոսկվայում կամ այլ քաղաքներում որոշակի հաջողության հասած ջավախքցի գործարարը իր սրտի թելադրանքով, կամովին գումար է հատկացնում ծննդավայրի եկեղեցին կամ դպրոցը նորոգելու, կամ գյուղի այլ հոգսեր հոգալու համար: Լավ օրինակը նույնպես կարող է «վարակիչ» լինել: Հայտնի է, որ դրսում աշխատող ջավախքցիները, այնտեղ՝ գյուղերի թիմերի միջեւ կազմակերպում են ֆուտբոլային մրցաշարեր, եւ հաղթող թիմը հատկացված դրամական մրցանակը ուղարկում է իրենց գյուղի հոգսերը հոգալու՝ եկեղեցու նորոգում, գյուղի ճանապարհի բարեկարգում, ջրամատակարարմամբ ապահովում եւ այլն:

Ջավախքում ապրողները հիացմունքով ու հպարտությամբ են խոսում իրենց երախտագետ հայրենակիցների մասին:

«Ինչը որ ինձ չհաջողվեց, մեր ջահելներին հաջողվեց,- ասում էր մի մեծահասակ Արագովա գյուղից,- ողջ կյանքս երազել էի մեր ժամը նորոգել: Փառք մեր տղաներին, նպատակս իրականացրին»:

Ինչն է մտահոգիչ այս ինքնաբուխ, հայրենասեր ինքնագործունեության մեջ: Եկեղեցին կրոնական (հոգեւոր) կառույց, Աստծո տուն լինելուց զատ նաեւ պատմական, ճարտարապետական հուշարձան է եւ նրա նորոգումը (վերականգնումը) լուրջ ու բարդ, ծախսատար աշխատանք է, որի իրականացումը պահանջում է նախապատրաստական մեծ աշխատանք, իսկ իրականացումը կատարվում է հմուտ, փորձառու եւ շնորհաշատ վարպետների ձեռքերով, համապատասխան մասնագետների մշտական հսկողության ներքո, որպեսզի վերանորոգման հետեւանքով կառույցի ճարտարապետական կողմը հնարավորինս քիչ տուժի:



Արագովայի Սբ. Գեւորգ եկեղեցին վերակառուցումից հետո



Վաչիանի նորակառույց անավարտ եկեղեցին կառուցված՝ Ս. Սիոն եկեղեցու տեղում

Աբլարի ժամը

Եթե եկեղեցու խարխլված ծածկը հեռացվում է, այն փոխարինելով թիթեղյա կամ շիֆերե ծածկով, հուշարձանը շատ է տուժում եւ կորցնում է իր պատմաճարտարապետական արժեքը: Այնպես որ, եթե միջոցները չեն բավարարում, լավ կլինի վերանորոգման աշխատանքները կատարվեն փուլերով, ինչպես Արագովայի Ս. Գեւորգ եկեղեցին վերակառուցելիս, որն էլ Ջավախքում վերակառուցվածների ամենահաջողված օրինակն է եւ արժե հետեւել այդ փորձին:

Այլապես խաթարելով մեր եկեղեցիների պատմաճարտարապետական արժեքները՝ մենք «ջուր կլցնենք ուրիշի ջրաղացին», եւ մեր ապագա սերունդներին կդնենք դժվարին կացության մեջ: Պարզից էլ պարզ է, որ եկեղեցին Ջավախքում կրոնական, պատմաճարտարապետական հուշարձան լինելուց բացի քաղաքական հենք է եւ վերանորոգում կատարելիս հայրենասիրական զգացմունքայնությունը զուգորդենք տրամաբանական հեռատեսությամբ:

Եզրակացություն առաջին. Ջավախքի հուշարձանների հիմնարար բարենորոգումները պետք է կատարվեն փորձառու հայ մասնագետների նախագծերով ու խորհուրդներով, հայ եկեղեցու ճարտարապետական ավանդույթներն ու չափորոշիչները պահպանելով, ձգտելով առավելագույնս հարազատ մնալ բնօրինակին:

Աբլարի ժամը գտնվում է գեղատեսիլ, դրախտային հովտում, որտեղից սկիզբ են առնում Ախալքալաքը եւ մոտակա գյուղերը ջրով մատակարարող սառնորակ աղբյուրները: Հովտում ավերված ու լքված միջնադարյան եկեղեցին է՝ շուրջը սփռված խաչքարերի ու կոթողների պատվանդաններով: Սակայն եկեղեցուն մոտենալով՝ գեղատեսիլ բնության բերկրանքը փոխվեց ցավի զգացումի...

Ջավախքում լքված ու ավերված միջնադարյան եկեղեցիներ շատ կան՝ Ջեռուլը, Հազմարը, Տիկաբանը եւ այլն, որոնց շրջակայքում սփռված են փլված պատերի սրբատաշ քարերը: Աբլարի եկեղեցու շուրջը քարեր չկային, իսկ պատերին կրաշաղախի վրա քարն հետքերը հուշում էին, որ դրանք վերջին ժամանակներս են պոկել-տարել... Եկեղեցու մոտ խոսք հավատացողները նշեցին մերձակա գյուղերից մեկի անունը. «Խերը չտեսավ, իրենը գտավ»: Ինչը թշնամիները հայրենատյացներ չեն կարողացել իրականացնել հրով ու սրով, այսօր մենք հետեւությամբ իրագործում ենք մեր ձեռքերով...

Եկեղեցուց հարյուր քայլ արեւելք մեր մեկ այլ հայրենակից Նորայր Այվազյանը ծածկ է դրել քառակող կոթողների բեկորների եւ պատվանդանի վրա եւ այն վերածվել է սրբավայրի (Յոթ եղբայր): Իրար էին խառնվում ցավն ու ամոթի զգացումը, հպարտությունն ու բերկրանքը...

Ջավախքում արձանները շատ չեն. մի քանի կիսանդրի եւ Մաշտոցի, Դերենիկ Դեմիրճյանի եւ Ջիվանու անդրիները Ախալքալաքում: Եթե Վ. Վանցյանի կիսանդրին «ընչահեղձ է լինում» շուկայի վերածված քաղաքային այգու վրաններ մեջ, արդա ջավախքցի մեծ աշուղի 3,5 մետրանոց բազալտե արձանը (հեղինակը ճանաչված քանդակագործ Արտաշես Հովսեփյանն է) թաղված էր մոլախոտերի եւ կողին աճող ուռենու ճյուղերի մեջ: Սա այն արձանն է, որի ստեղծմանն ու Ջավախք տեղափոխմանն է նվիրված Հարություն Խաչատրյանի նկարահանած «Պոետի վերադարձը» կինոնկարը:

Շրջագայությանս վերջին օրը տրամադրեցի Ջիվանու արձանի շրջակայքի բարեկարգմանը եւ արժանացա անցորդների զարմացական հայացքներին ու կասկածամիտ հարցերին. «Ջեզ բարեկամ է», մատնացույց անելով արձանը՝ «Ինչ-որ առնչություն ունե՞ս նրա հետ»:

Կարծում եմ՝ այսպիսի փոքր հարցեր կարող է լուծել ամեն ոք, եւ հարկ չկա նման գործերը վերեւից կազմակերպելու (հրահանգելու): Մեկը եկեղեցի է վերակառուցում, մյուսը՝ խաչքար կանգնեցնում, թող մի երրորդն էլ ծախսեր ու մեծ ժամանակ չխլող նման հարցեր լուծի: Չէ՞ որ մեր Ջավախքը ինքնակառավարվող ուրույն տարածաշրջան է...

Շարունակությունը՝ էջ 5

Արդյոք մեզ այլևս պետք չէ՞ Երևանը երկաթուղային փակուղուց դուրս բերող երկաթգիծ...

Նախաբան

Անցած մոտ երկու տասնյակ տարիները թերևս շատերին են համոզել, որ նաև մեր տարածաշրջանում են խաչվում զորեղ ուժերի ռազմաքաղաքական ու տնտեսական շահերը... Շրջափակման մեջ գտնվող մեր հանրապետությունը «ոսկորի նման» կանգնած է մեզ շրջապատող բիրտ ցեղերի կոկորդին եւ չեն դադարում Ադրբեջանի նախագահի հոխորտանքներով լի ելույթները՝ ռազմական ճանապարհով իրենց հարցերը լուծելու...

Եվ, Ասված մի արասցե՝

1. եթե նրանց շահերը թելադրեն մեզ պարտադրելու որեւէ մի հարցի լուծում՝ տնտեսական բացահայտ ճնշման միջոցով (փակել ներկրվող գազի եւ հեղուկ վառելիքի ճանապարհները...),

2. եթե Երեւանի հարավում եւ Արարատյան դաշտավայրում սեղծվի արտակարգ իրավիճակ եւ հարկ լինի աջահովել այդ տարածքի բնակիչների զանգվածային էվակուացիա դեպի հանրապետության հյուսիս:

Ավելացնենք նաեւ այն, որ՝ 1. էներգիայի մեր միակ սեփական աղբյուրը հիդրոկայանների միջոցով արտադրվող էլեկտրաէներգիան է, որից հետեւում է՝ 2. Հանրապետությունում, հատկապես Երեւանում պետք է լայնորեն օգտագործվի էլեկտրատրանսպորտը: Չի կարելի Երեւանի հարավը կտրել էլեկտրագնացքից...

Անցյալ տարվա մարտ ամսին «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ -ն հանրության ուշադրությանը ներկայացրեց Երեւանի կենտրոնը, մասնավորապես Բաղրամյան պողոտան ավտոտրանսպորտի հոսքերից բեռնաթափող նախագծի ընդհանուր գաղափարը, հանգուցային խնդիրները եւ իրականացման ուղիները: Այդ կարեւոր խնդրի լուծման համար առաջ քաշված գաղափարներից մեկն էլ այն էր, որ պետք է ապամոնտաժվի Երեւանի կայարան-Արաբկիրի կայարան-Հրաչյա Քոչարի փողոց հատվածում երկաթգիծը եւ երկաթուղին վերածվի ավտոմայրուղու...

Հայտնի է, որ 1924-1932 թթ. Թամանյանի կազմած Երեւանի հատակագծերում իր կարեւոր տեղն է գրավել Երեւանը երկաթգծային փակուղուց դուրս բերող եւ Քանաքեռով դեպի հյուսիս գնացող երկրորդ երկաթուղին (առաջինը կառուցվել է ցարական Ռուսաստանի օրոք եւ անցնում է Թուրքիայի հետ մեր սահմանի մոտով դեպի այսօրվա Արմավիր-Գյումրի եւ սահմանից հեռանալով դեպի Վանաձոր-Ալավերդի եւ այլն...):

Աղասի Խանջյանի ղեկավարության օրոք 1933 թ. Ավանի ձորում՝ այսօրվա Մյասնիկյան պողոտայի սկզբնամասում, կառուցվեց երկաթգծի խառակամար կամուրջը: Կյանքի կոչվեց Երեւանը երկաթգծային փակուղուց դուրս բերող երկրորդ երկաթուղու առաջին հերթը (որի համար խանջյանը խիստ քննադատվեց երիցս նզովյալ Բերիայի կողմից՝ որպես ժողովրդի միջոցները վատնող հանցագործ-ազգայնամոլ, ժողովրդի թշնամի... Հետագայում կանչվեց Թիֆլիս ու հայրենանվեր-համարձակ նախաձեռնումների համար գնդակահարվեց...):

Այս օրերին ընթանում են Երեւանի կենտրոնն ավտոմեքենաների հոսքերից բեռնաթափող պետական կարեւորության այդ մայրուղու մասշտաբային շինարարության աշխատանքները՝ երկաթգծի խառակամար կամրջից դեպի Կասկադ-Հրաչյա Քոչար հատվածում: Միաժամանակ շարունակվում են երկաթգծի ադամոնտաժման աշխատանքները դեպի կայարան...

Ամբողջաշրջանի պայմաններում կառուցվեց Երեւանը երկաթուղային փակուղուց դուրս բերող նաեւ երրորդ երկաթգիծը՝ Երեւան-Աշտարակ-Եղվարդ-Արզնի-Աբովյան երթուղով, որի Երեւանից դուրս եկող հատվածը գտնվում է կիսաավերված վիճակում:

Տանկալի կլիներ ընթերցողների ուշադրությանը ներկայացվեր «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ -ի մշակած այդ նախագիծն ամբողջությամբ:

Ինչն է մտահոգում

Վերը նշված հանգամանքները մեզ պարտադրել են՝ 2006-ի ապրիլին ՀՀ վարչապետին եւ Երեւանի քաղաքապետին, ինչպես նաեւ Արաբկիրի թաղային համայնքի ղեկավարին ուղղել առաջարկություններ, որոնցում որպես հիմնական խնդիր եղել է՝ պահպանել Երեւանը երկաթուղային փակուղուց դուրս բերող, ըստ մեզ՝ ռազմավարական կարեւորության Կայարան-Հրաչյա Քոչար հատվածի երկաթուղին: Որպես տարբերակ՝ Բաղրամյան պողոտան ատոմեքենաների հոսքից բեռնաթափող ուղի, ներկայացրել էինք նաեւ մեր նախագծի էսքիզը:

Մեր ձեռքի տակ եղած ինֆորմացիան եւ տարվող աշխատանքները թույլ են տալիս կարծիք հայտնելու, որ «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» -ը դեռ հակված չէ Երեւանը երկաթուղային փակուղուց դուրս բերող ռազմավարական կարեւորության հին երկաթուղին վերանախագծելու կամ այլընտրանքային նոր երկաթուղի նախագծելու ուղղությամբ...

Մեր «Գոյատեւության» հանգանակությունը, որի անդամները հիմնականում Պոլիտեխնիկի կադրերն են, գործում է 1986-ից (անհրաժեշտություն չենք զգում այն պատշաճաբար գրանցել): Մեզ համար խորթ է ֆանդելը, օրինակ՝ այդ երկաթգիծը...

Երկաթուղին պահպանելու մեր մտահոգումների հիմնական մոտեցումները հետեւյալն են.

1. Պահպանել 1933-ին կառուցված երկաթուղու խառակամար կամուրջը, օգտագործելով նրա նախագծային հնարավորությունները (կորության շառավղի երկու տարբերակներով...):

2. «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» -ի թիկունքում ժայռի մեջ փորվող ավտոմեքենաների թունելի փոխարեն կառուցել էսկալատոր, որը սկիզբ է առնելու Հերացու փողոցի վերջնամասից (այն կազատի այդ հյուսանց-ռեստորանը ավտոմեքենաների շրջանցող հոսքից...):

3. Մինչեւ երկաթգծի խառակամար կամուրջը, նախատեսել ավտոմեքենաների հոսքերի բաշխման էսկալատորներ, որոնք (որքանով որ մենք ինֆորմացված ենք...) կարող են լրիվ համադրվել ձեր մտահոգումների հետ:

Վերը շարադրվածից ելնելով

Դիմում ենք՝

1. ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը քննարկել՝ Երեւանը երկաթուղային փակուղուց դուրս բերող ռազմավարական կարեւորության խնդիրը (այսօր խանգվող երկաթգիծը, ասենք, փոխարինել արդիական, արագընթաց երկաթուղով):

2. «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ-ին կառուցվող մայրուղում, ասենք զուգահեռ, նախատեսել ռազմավարական կարեւորության արագընթաց երկաթգծի կառուցումը նույնպես, օգտագործելով այսօր կանգուն եւ արդեն պատմական-ինժեներական հուշարձան դարձած 1933-ին կառուցված խառակամար յուրօրինակ կամուրջը...

Այդ ուղղությամբ արված մեր մտահոգումների էսքիզները պատրաստ ենք սիրով տրամադրելու ձեզ:

Հարգանքով՝ ՌՈԲԵՐՏ ԴԱՇՏՈՅԵՆ,
«Գոյատեւության» ծրագրերի համակարգող

Ստորումներ Ջավախքի հուշարձաններ այցելելուց հետո

Փոք Գոնդուրայում պեղված-հանված տապանաքարը

էջից

Հուշարձանագետների դպրոց (շկոլա) Ջավախքում

Փոքր Գոնդուտա գյուղում հայրենակիցներս ցույց տվեցին գյուղի եկեղեցու մոտակայքից 2000 թ. պեղված-հանված ուրույն նախաբազարդ-խաչաքանդակով մի տապանաքար, ընթեռնելի հայերեն արձանագրությունով (շիրմագրով): Բնակիչները կարծիք հայտնեցին, որ դա հայատառ, բայց այլ լեզվով արձանագրություն է: Նման տարակուսանքների պատճառը եւ հասկանալի է. Վրաստանի մասնագետները տասնամյակներ շարունակ նման թյուր կարծիքներ են տարածել բնակչության մեջ, նույնիսկ ոչ մեծ դժվարությամբ կարդացվող «Հանգիստ... Հարություն քահանայի... հանգեց 1876 ԱՄ օգոստոսի 6-ին հասակ 68 Ամի...» շիրմագրին վերաբերում են տարակուսանքով: Ճիշտ է, արձանագրություն ընթերցելը մասնագիտական հմտություն է պահանջում, բայց այս դեպքում կանխակալ կարծիքը մթագնեցրել էր մարդկանց միտքը:

Ջավախքում շինարարական եւ հողագործական աշխատանքների ընթացքում շարունակվում են հայտնաբերվել նոր խաչքարեր ու արձանագրություններ (նոր օրինակ՝ Կարտիկամում Դումանյան Կոլյայի բակում): Դրանց ժամանակին տեր կանգնելու, արձանագրությունները ընթերցելու, ժողովրդին (հատկապես մատաղ սերնդին) տեղեկատվություն հաղորդելու, հուշարձաններին վերաբերող նրանց առաջադրած հարցերին գրագետ ու սպառիչ մասնագիտական պատասխաններ տալու համար անհրաժեշտ է Ջավախքում ունենալ հուշարձանների լավ գիտակ մասնագետներ (հուշարձանագետներ), ապա ստեղծել հուշարձանագետների դպրոց: Խնդիրները շատ-շատ են: Հարեւանները հարյուրամյա հաստատված ծրագրեր ունեն, մենք նույնիսկ մեկ տասնամյակի նախագծեր չունենք կազմած:

Բացի վերեւում նշած հարցերից հուշարձանագետները պետք է մասնակցություն ունենան վերանորոգվող ու նոր կառուցվող հուշարձաններին առնչվող խնդիրներ, Հայաստանի մասնագետների հետ կապի ապահովման, նորակառույցների ու նոր հայտնաբերված հուշարձանների մասին տեղեկատվության հավաքման եւ այլ հարցերում:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ նույնաբնույթ գործունեություն է ծավալել Նինոծմինդայի հեռուստակայանի աշխատակից, «Իմ Ջավախք» ֆիլմաշարի հեղինակ Մհեր Փութոյանը: Ջավախքում հուշարձանագետների դպրոց հիմնելու հարցում հարպաղել պետք չէ:

Դիմում եմ ՀՀ գիտության եւ կրթության, մշակույթի նախարարություններին, Վիրահայերի միության եւ «Ջավախք» ՀԲՄ-ի ղեկավարներին Հայաստանի համապատասխան բուհերում կազմակերպել ջավախքցի մի քանի ուսանողների նպատակային ընդունելություն:

Ջավախքի շրջանային ղեկավար մարմիններում մշակութային բաժիններին կից պետք է ստեղծել վերահսկիչ, ուղղորդող-համակարգող օղակներ, հուշարձանների վերանորոգումն ու խնամքը, նոր կառուցվողներին առնչվող հարցերը ղեկավարող ու կանոնակարգող բաժիններ: ■

Սխալքալաքի բերդի ավերակները

«Հայերը ոչ միայն fրդացել են կամ ալավի դարձել, այլեւ արաբացել են»

Կրոնափոխ հայերի հարցում Թուրքական պատմական ընկերության նախագահին հաստատում է Մալաթիայի համալսարանի պրոֆ. Ջյոհջեն

Օգոստոսի 18-ին, մասնակցելով «Ավշարները թուրքերի պատմության մեջ եւ մշակույթում» թեմայով Կեսարիայում հրավիրված գիտաժողովին, Թուրքական պատմական ընկերության նախագահ, պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն ամբիոնից հայտարարել էր, որ քրդերն իրականում ունեն «թուրմենական», իսկ քուրդ-ալավիները՝ «հայկական» ծագում: Նրա այս հայտարարությունը լայն արձագանք էր գտել թուրքական մամուլում, որին **«Ազգն»** անդրադարձել էր օգոստոսի 22-ի եւ 24-ի համարներում:

Արձագանքի հակազդեցության բնույթն ստիպել էր Հալաչօղլուին, որ օգոստոսի 21-ին ճշգրտումներ մտցնի, ասելով. «Ես չեմ հերքել քրդերի գոյությունը Թուրքիայում, սակայն իրեն քուրդ համարողների 30 տոկոսը ծագումով թուրմեն է: 1915 թ. տեղահանությունից խուսափելու համար որոշ հայեր, որոնք ներկայանում էին իբրեւ քուրդ-ալավի, մահմեդականություն են ընդունել: Կրոնափոխ հայերի թիվը 1920-ական թվականներին շուրջ 100 հազար էր: 1936-37 թթ. պետությունը տուն առ տուն բացահայտել է կրոնափոխ հայերին: Իմ ձեռքի տակ են նրանց ցուցակները: Կհրապարակեմ, եթե պետական իշխանությունները ցանկանան»:

Հալաչօղլուի այս ճշգրտումները պատճառ դարձան, որ նրան ռասայականության մեջ մեղադրողներն սկսեն մեղադրել նաեւ ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների վրա «դավաճանի» պիտակ կցնելու եւ «կրոնափոխության» հանգամանքի հետագա շահարկման համար քաղաքական նախադրյալներ ստեղծելու մեջ, պահանջելով միաժամանակ հրապարակել ձեռքի տակ եղած ցուցակները:

Սա ցույց է տալիս, որ Հալաչօղլուին հակազդողների խնդիրը ոչ թե կրոնափոխ հայերն են, որոնց առկայությունը նրանք չեն ժխտում, այլ կրոնափոխությունը որպես շանսաժի միջոց պետականորեն օգտագործումը: Հատկանշական է, որ կրոնափոխ հայերի մասին «Ափսիոնին» տված հարցազրույցում, որը հրապարակվել է այս հանդեսի 634-րդ համարում, արտահայտվել էր նաեւ Մալաթիայի «Ինյոնյու» համալսարանի պատմության ամբիոնի պրոֆ. Սալիմ Ջյոհջեն, մասնանշելով. «Թուրքիայում 80-100 հազար քրդարկված հայ կա: Հայերը գլխավորապես թաքնվել են քրդերի եւ ալավիների մեջ»:

Հալաչօղլուի հայտարարությունների լայն արձագանքն այժմեականություն է հաղորդել Ջյոհջեի հունվարի 19-ին, Հրանտ Դինքի սպանությունից անմիջապես հետո հրապարակված այս հարցազրույցին, ինչի ազդեցության տակ «Ափսիոնը» վերստին դիմել է նրան՝ հրապարակելով համալսարանի պրոֆեսորի պատասխաններն օգոստոսի 29-ին, որոնք տեղ են գտել նաեւ պոլսահայերի «Հայ թերթ» կայքէջում:

«Ափսիոնի» այս հրապարակումը կրոնափոխ հայերի առումով չափազանց հետաքրքրական է, որտեղ մասնակի կրճատումներով թարգմանաբար ներկայացնում ենք.

«Պրոֆ. Սալիմ Ջյոհջեն այս անգամ մեկ այլ թեզ առաջ քաշեց՝ ասելով. «Թուրքիայում կան նաեւ հազարավոր արաբացած հայեր: Յուսուֆ Հալաչօղլուի ասածները ճիշտ են եւ նորություն էլ չեն պարունակում: Մինչ այդ արդեն հայտնի էին, պարզապես ոչ ոք այդ մասին չէր խոսում: Քողարկված հայերի թեմայով տարիներ շարունակ աշխատանքներ ենք կատարել, որոնց մասին մինչ այս նշել էի: Այս ամենը մենք չենք հորինել: Նրանց մասին իրենց զեկուցագրերում հիշատակել են իրադարձությունների ժամանակակից ամերիկյան ներկայացուցիչները: Երզրումում քրդերը թաքցրել են 500 հազար հայի, նույնը կատարվել է Թունջելիում (Դերսիմ), որտեղ 50 հազար հայ ապավինել էր ալավիներին: Վերջիններս ալավի-քրդեր են: Այդպիսի դեպքեր եղել են նաեւ Վարդոյում (Վանի շրջան), Խնուսում եւ բազմաթիվ այլ վայրերում: 1841-1863 թթ. ամերիկացի միսիոներներն ուսումնասիրություններ են անցկացրել, որոնցում նշվում է, թե ով ով է եւ ճշտվում է ինքնությունը: Նույնիսկ ամերիկացիները (1950-ական թթ.) առաջարկել էին, որ Երզրումի Աթաթուրքի անվան համալսարանը հիմնադրվի Վանում, որպեսզի նոր ուսումնասիրությունները (կրոնափոխ հայերի մասին) հնարավոր լինի կատարել ավելի նպաստավոր պայմաններում: Հաթայում (Ալեքսանդրետի սանջակ), Սղերդում, Ուրֆայում, Մարդինում եւ համանման բնակավայրերում ապրողները քրդարկվել են արաբի ինքնությամբ: Նրանք ներկայումս արաբերեն են խոսում եւ ուրիշներին որպես արաբ մասնակի կրճատումներով թարգմանաբար ներկայացնում ենք.

«Պրոֆ. Սալիմ Ջյոհջեն այս անգամ մեկ այլ թեզ առաջ քաշեց՝ ասելով. «Թուրքիայում կան նաեւ հազարավոր արաբացած հայեր: Յուսուֆ Հալաչօղլուի ասածները ճիշտ են եւ նորություն էլ չեն պարունակում: Մինչ այդ արդեն հայտնի էին, պարզապես ոչ ոք այդ մասին չէր խոսում: Քողարկված հայերի թեմայով տարիներ շարունակ աշխատանքներ ենք կատարել, որոնց մասին մինչ այս նշել էի: Այս ամենը մենք չենք հորինել: Նրանց մասին իրենց զեկուցագրերում հիշատակել են իրադարձությունների ժամանակակից ամերիկյան ներկայացուցիչները: Երզրումում քրդերը թաքցրել են 500 հազար հայի, նույնը կատարվել է Թունջելիում (Դերսիմ), որտեղ 50 հազար հայ ապավինել էր ալավիներին: Վերջիններս ալավի-քրդեր են: Այդպիսի դեպքեր եղել են նաեւ Վարդոյում (Վանի շրջան), Խնուսում եւ բազմաթիվ այլ վայրերում: 1841-1863 թթ. ամերիկացի միսիոներներն ուսումնասիրություններ են անցկացրել, որոնցում նշվում է, թե ով ով է եւ ճշտվում է ինքնությունը: Նույնիսկ ամերիկացիները (1950-ական թթ.) առաջարկել էին, որ Երզրումի Աթաթուրքի անվան համալսարանը հիմնադրվի Վանում, որպեսզի նոր ուսումնասիրությունները (կրոնափոխ հայերի մասին) հնարավոր լինի կատարել ավելի նպաստավոր պայմաններում: Հաթայում (Ալեքսանդրետի սանջակ), Սղերդում, Ուրֆայում, Մարդինում եւ համանման բնակավայրերում ապրողները քրդարկվել են արաբի ինքնությամբ: Նրանք ներկայումս արաբերեն են խոսում եւ ուրիշներին որպես արաբ ներկայանում: Տեղահանությանը ենթարկվել են լուսավորչական հայերը: Դա մեծ ազդեցություն չի գործել բողոքական եւ կաթոլիկ հայերի վրա»:

Ըստ «Ափսիոնի», Ջյոհջեն ասել է, որ արաբացածների կողքին կան նաեւ ասորի դարձած հայեր, շարունակելով. «Որոշ շրջաններում ակնհայտ երեւում է հայերի եւ ասորիների քրդերի կարգը (խոսքը 1924 թ.-ի Դերսիմի, ինչպես նաեւ 30-ական թթ. Արարատ լեռան շրջանի ապստամբությունների մասին է): Նշված վայրերից գլխավորներն են՝ Թունջելին, Հոզաթը, Օվաջիքը, Ջեմիշգեզեքը, Մազկերտը, Փուլումուրը, Էյլազիգը, Թերջանը, Դիջլեն, Երզնկան եւ Սվազը: Դրանում իր դերն է խաղացել տեղահանության ընթացքում 20 հազար հայերի ապավինումը ալավիներով եւ ալավի-քրդերով բնակեցված Դերսիմի շրջանի աշիրաթներին: Հայերը մի քիչ էլ վրեժխնդրության զգացմունքներով են ակտիվորեն մասնակցել քրդական ապստամբություններին: Դերսիմի ապստամբության մեկնարկը տվող անձը հայ էր»:

Այնուհետեւ «Ափսիոն» հանդեսն ըստ խաղաթերթերի տալիս է քրդարկված հայերի թիվը եւ նրանց «պատշաճական» ինքնությունը, որի համաձայն Դիարբեքիրում բնակվում է 1000 հայ ընտանիք (քուրդ, ասորի եւ ալավի դարձած), Մալաթիայում՝ 3655 ընտանիք (ալավի-քուրդ), Կեսարիայում՝ 5000 (թուրք), Էյլազիգում՝ 1000 ընտանիք (քուրդ, ալավի), Վանում՝ 4000 ընտանիք (քուրդ), Ուրֆայում՝ 3500 ընտանիք (քուրդ, արաբ), Սղերդում՝ 1200 ընտանիք (արաբ, աննշան մասը՝ քուրդ), Հաթայում՝ 1100 ընտանիք (արաբ), Բիթլիսում՝ 200 ընտանիք (քուրդ), Երզրումում՝ 3000 ընտանիք (քուրդ, ալավի, աննշան մասը՝ թուրք), Երզնկայում՝ 1300 ընտանիք (ալավի, քուրդ), Մարդինում՝ 1500 ընտանիք (արաբ), Մարաշում՝ 3000 ընտանիք (քուրդ, ալավի), Ադիյամանում՝ 1600 ընտանիք (քուրդ), Թունջելիում՝ 2000 ընտանիք (քուրդ-ալավի), Ադանայում՝ 2000 ընտանիք (քուրդ, արաբ, ալավի):

Վերջում «Ափսիոնն» ավելացնում է. «Այս տվյալները քաղել ենք տարբեր հաստատությունների եւ ուսումնասիրողների առ այսօր շարունակվող հետազոտություններից: Ցուցանիշները կարող են փոխվել նոր բացահայտումներին համապատասխան:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

"JERUSALEM POST"

Իսրայելական մամուլը Հայոց ցեղասպանության ու ժխտման վտանգի մասին

Իսրայելական «Ջերուսալեմ փոստ» թերթի նախորդ օրվա խմբագրականը՝ «Բախվելով անցյալին» վերնագրով, նվիրվել է Հայոց ցեղասպանության թեմային, հարցը դիտարկելով ոչ թե իսրայելցիների կամ իսրայելաբնակ հայերի տեսանկյունից, այլ որպես նախազգուշացում աշխարհին սպառնացող նոր ցեղասպանություններից: Նշելով, որ օսմանյան Թուրքիայում 1915-1923-ին տեղի ունեցած 1, 5 մլն հայերի կոտորածները խորապես ուսումնասիրվել եւ որակվել են որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, վերստին փաստվում է, որ Թուրքիան առ այսօր շարունակում է իր ժխտողական քաղաքականությունը՝ կոտորածները համարելով քաղաքացիական պատերազմի հետեւանք: «Այս հարցը վերջին օրերին ու շաբաթներին նոր թարմություն ստացավ, քանի որ «Միություն ընդդեմ վարկաբեկման» հրեական կազմակերպությունը հայկական կոտորածները ճանաչեց որպես «հավասարազոր ցեղասպանության: Մինչդեռ Իսրայելը Թուրքիայի ներկայիս կառավարության հետ իր դաշնակցային հարաբերություններում շրջահայաց է ու զգայուն: Հրեական պետությունը, որն իրավացիորեն ըմբռնում է Հոլոքոստի ուրացման դեմ, որտեղ էլ որ դա տեղի է ունենում, չի կարող մասնակից լինել ցեղասպանության ժխտմանը՝ որեւէ այլ տեղում»: Խմբագրականում ասվում է, որ որպես Հոլոքոստի զոհեր հրեաները հետեւողականորեն հետազոտում են մինչ օրս տեղի ունեցած բոլոր ցեղասպանությունները եւ ի ցույց դնելով իր տեսակի հանդեպ մարդու դրսեւորված գազանությունները, փորձում են ամեն գնով կանխել աշխարհին սպառնացող նոր ցեղասպանությունները: Չնայած իրենց ջանքերին, տեղի ունեցան նոր ցեղասպանություններ, վերջին տարիներին՝ Դարֆուրում եւ Ռուանդայում: «Իսրայելը հազիվ թե ունի այնպիսի դիրք, որ կարողանա սպիտել Թուրքիային դեմառդեմ կանգնելու իր պատմության մութ դրվագների առջեւ, բայց միեւնույն ժամանակ նա չի կարող այդ հարցին հպանցիկ նայել: Հայոց ցեղասպանությունը դատապարտել չի նշանակում դատապարտել Թուրքիային ու նրա ներկայիս կառավարությանը: Կոտորածներն իրականացնողը այսօրվա թուրքական կառավարությունը չէ, բայց որպես ժառանգորդ նա է կրում պատասխանատվությունն ու չպետք է խուսափի դրանից»:

Փաստելով Դարֆուրի ցեղասպանության իրողությունը, խմբագրականում արծարծվում է այն միտքը, որ հաջորդ ողբերգությունը հասունանում է հենց իրենց աչքերի առջեւ: Խոսքը Իսրայելի ոչնչացման մասին Իրանի նախագահի անընդմեջ հայտարարությունների մասին է. «Ինչ է պահանջվում դեմն առնելու նրանց, ովքեր կարող են նոր ցեղասպանություն իրականացնել: Անշուշտ, կրթված ու լուսավոր միտք ունեցող ազգերի դաշնությունը՝ համաձայնեցված գործողություններով դուրս գալու նրանց դեմ, քանի դեռ նրանք գործի չեն անցել: Լավ ապագայի համար ջանքեր թափելը, այնուամենայնիվ, պահանջում է ճանաչել անցյալում կատարված հանցանքները»:

ՌՈՒԹԻ ՊՈՊՈՎԵՐ

ՉԺՀ փոխվարչապետը երկրորդն է ամենաազդեցիկ կանանց մեջ

«Ֆորբս» հանդեսի հերթական ամենամյա վարկանիշների ցանկում աշխարհի 100 ամենաազդեցիկ կանանց մեջ առաջին տեղում (ինչպես 2006-ին) հայտնվել է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը: Անցյալ տարի 2-րդ տեղը զբաղեցնում էր ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը, բայց այս տարի նա տեղում հայտնվել է ՉԺՀ փոխվարչապետ Ու Ին: 3-րդ տեղն զբաղեցնում է Սինգապուրի պետական ներդրումային ծրագրերի ղեկավար Հո Ցինը, որն անցյալ տարի չէր մտել նույնիսկ տասնյակի մեջ: Կոնդոլիզա Ռայսն այս տարի հայտնվել է 4-րդ տեղում:

«Ֆորբսի» վարկանիշների տվյալ ցանկը կազմվում է 4-րդ անգամ: Առաջին երկու ցանկերը գլխավորել էր Ռայսը, որին 2006 թ. 2-րդ տեղ էր մղել Մերկելը: ՉԺՀ փոխվարչապետը առաջին ցանկում զբաղեցրել էր 3-րդ տեղը:

2007 թ. ցանկում 5-րդ տեղն զբաղեցնում է «Պեպսիկո» ընկերության նախագահ Ինդրա Նուին: Նրան հաջորդում են Հնդկաստանի ազգային կոնգրես կուսակցության առաջնորդ Սոնյա Գանդին (անցյալ տարի 13-րդ տեղում էր), հանրադյունահանման Anglo American խոշորագույն ընկերության ղեկավար Սինթիա Քերոլը, «Արչեր» ընկերության նախագահ Պատրիցիա Ուտրցը, «Քրաֆթ ֆուդսի» գլխավոր գործադիր տնօրեն Իրեն Ռոզենֆելդը եւ «Ալկատել-Լյուսան» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Պատրիսիա Ռուսսոն:

Ներկայիս ցանկում Մեծ Բրիտանիայի եղիսաբեթ Բ թագուհին 46-ից բաձրացել է 26-րդ տեղը, իսկ սենատոր Հիլարի Քլինթոնը 18-ից իջել է 25-րդ տեղը: 2006 թ. 12-րդ եւ 14-րդ տեղերն զբաղեցրած Մելինդա Գեյթսը եւ հեռուստահաղորդավար Օփրա Ուինֆրին այս տարի զբաղեցնում են 24-րդ եւ 21-րդ տեղերը:

Հանդեսը նշում է, որ ցանկում հայտնված կանանց 2/3-ը հայտնի գործարարներ են, իսկ մյուսները՝ իշխանավորներ: 100 ամենաազդեցիկ կանանցից երկուսը թագուհիներ են (Մեծ Բրիտանիայի եւ Հորդանանի): Կան նաեւ 3 վարչապետ, 6 նախագահ եւ 2 առաջին տիկին:

Իրանը նոր մատակարար է փնտրում Բուշեհրի ԱԷԿ-ն ավարտելու համար

Իրանը թեկնածություններ է քննարկում Բուշեհրի ԱԷԿ-ի շինարարությունն ավարտելու համար ի դեպս, եթե տվյալ նախագծի հարցում ռուս-իրանական համագործակցության մեջ կրկին բարդություններ ծագեն: Այդ մասին հայտարարել է Իրանի նախագահի օգնական Ալի Ասքար Ջավանֆեքրը «Գազետա» ինտերֆեքսային հրատարակությանը տված հարցազրույցում:

Ջավանֆեքրը չի թվարկել հնարավոր նոր տարբերակները, սակայն նշել է, որ Իրանը անհրաժեշտության դեպքում անդամության կհրապարակի այդ երկրների անունները:

Բուշեհրի ԱԷԿ-ի շինարարության գլխավոր կապալառուն ռուսական «Ատոմստրոյէքսպորտ» ՓԲԸ-ն է: Անցյալում ենթադրվում էր, որ կայանը կարող է գործարկվել 2007 թ. աշնանը, սակայն մի շարք խնդիրների, այդ թվում ֆինանսավորման պատճառով ժամկետը հետաձգվեց եւ մինչեւ օրս անհայտ է:

2007 թ. մարտի սկզբներին «Ատոմստրոյէքսպորտի» ֆինանսների գծով փոխնախագահ Եվգենյա Նեյմերովեցը հայտարարեց, որ Իրանը գրեթե երկու ամիս Ռուսաստանին չի վճարում Բուշեհրի ատոմակայանի շինարարության դիմաց: Մարտի վերջերին Իրանի ատոմային էներգիայի կազմակերպությունը վճարեց պարտքի մի մասը: Թեհրանում քննարկվել է ատոմակայանի նախագծի հետ կապված պարտավորությունները չկատարելու համար Հաագայի միջազգային դատարանին Ռուսաստանի դեմ հայց ներկայացնելու հնարավորությունը: Ավելի վաղ Մոսկվան առաջարկել էր ԱԷԿ-ի մասերի մատակարարումը հետաձգել, մինչեւ կարգավորվի Իրանի միջուկային ծրագրի հետ կապված ճգնաժամը:

Փորձագետների մեծ մասը կարծում է, որ ատոմակայանի գործարկումը կարող է տեղի ունենալ եկող տարվա աշնանից ոչ շուտ: Միջուկային վառելիքը պետք է մատակարարվի գործարկումից կես տարի առաջ:

Կորեացի պատանդներն ազատվել են առանց փրկագնի

Երեկվա տվյալներով, Աֆղանստանում թալիբներն ազատ էին արձակել իրենց առեւանգած հարավկորեացի բոլոր պատանդներին: Մոսկվայում Հարավային Կորեայի դեսպանատանը ՌԻԱ գործակալության թղթակցին ասել են, որ պատանդների արձակման դիմաց փրկագին չի վճարվել: Տվյալ փաստը հերքել է դեսպանության մամլո ծառայության ներկայացուցիչը:

Հուլիսի 19-ին թալիբներն առեւանգել էին մարդասիրական առաքելությամբ Աֆղանստան եկած 23 հարավկորեացիների: Թալիբ գրոհայինները պահանջել էին Աֆղանստանից դուրս բերել հարավկորեացի զինծառայողներին, ինչպես նաեւ աֆղանական բանտերից արձակել իրենց զինակիցներին: Որոշ ժամանակ անց նրանք սպանել էին երկու պատանդների եւ սպառնացել էին մյուսներին եւս մահապատժի ենթարկել, եթե իրենց պահանջները չկատարվեն: Ավելի ուշ գրոհայիններն ազատ էին արձակել երկու պատանդ կանանց:

Օգոստոսի 28-ին Սեուլի եւ «Թալիբան» շարժման ներկայացուցիչների բանակցությունների ընթացքում համաձայնություն էր ձեռք բերվել պատանդների արձակման շուրջը: Հետագա երկու օրերին բոլոր պատանդները խումբ-խումբ ազատ էին արձակվել: «Ազգն» արդեն գրել է, որ փոխարենը մինչեւ տարեվերջ հարավկորեացի բոլոր զինծառայողները պետք է դուրս բերվեն Աֆղանստանից:

Պ. Բ.

«Թանգարանի ցուցադրությունը 68 թ-ի թանգարանագիտության մակարդակի է»

Նեղուրում է Ակսել Բակունցի տուն-թանգարանի տնօրենը

Գորիսի Մաշտոցի փողոցի վրա է գտնվում Ակսել Բակունցի տուն-թանգարանը: Փայտյա հին դռնով, երկթյա բոնակով, փաթաթած այգով շրջապատված տուն-թանգարանը չի կարող անթափույց մնալ անցորդների աչքից: Իսկ դռնից ներս՝ Բակունցի այգում, գրեթե միշտ հյուրընկալ մթնոլորտ է:

«Համեցեք, ներս եկեք, նստեք», մեզ դիմավորում է տուն-թանգարանի տնօրեն, գող **Քաջիկ Դոռունցը** (Միխայելյան), որ ընկերների հետ նստած այգում նարդի է խաղում: Ընկերներով խոսում են գրականությունից, Բակունցից, նրա գրական եւ ոչ գրական ընկերներից: Մի այնպիսի ջերմ մթնոլորտ է, որ տուն-թանգարան այցելողն իրեն ակամայից հարազատ միջավայրում է զգում: Հարցազրույց վերցնելու մեր ցանկությունը լսելուց հետո տնօրեն Քաջիկ Դոռունցն ասում է. «Ես ձեզ պետք է Բակունցի այգու վարդից պատրաստած հյութ հյուրասիրեմ: Պետք է անպայման փորձեք, թե չէ Բակունցը որ իմանար, շատ կնեղանար»: Այս պայմանն ընդունելուց հետո միայն տուն-թանգարանի տնօրենը մեզ այգուց ուղեկցում է Բակունցի տուն-թանգարան:

Մի ուշագրավ ջերմությամբ եւ արհեստիկությամբ բացելով գողի տան դռները՝ Քաջիկ Դոռունցը սկսում է ներկայացնել տուն-թանգարանի բաժինները, գույն ու ցուցադրությունները՝ մեր ուշադրությունը հրավիրելով առավել ուշագրավ պատմությունների եւ դրվագների վրա:

Դռնից անմիջապես հետո այցելուի աչքն է բացվում սենյակը Ակսել Բակունցի աշխատասենյակ-ննջարանն է: Համեստ կահավորմամբ գողի սենյակում գրադարան է, զգեստների պահարանը, նրա գրասեղանը եւ մահճակալը: Գողի սենյակի կահավորումը լրացնում են եւս երկու բան՝ Բակունցի մոր՝ Բախչագյուլի գործած գորգը եւ նրա դիմանկարը, որը նկարել է Մարտիրոս Սարյանը: Գույնը ցուցադրելուն զուգահեռ տնօրենը պատմում է Բակունցի մոր մեծադիր նկարի պատմությունը. «1935 թ. Մարտիրոս Սարյանը գալիս է Գորիս, իմանում, որ Բակունցն այստեղ է, այցելում է նրանց տուն: Տասն օր վայելում է Բակունցների հյուրամեծարությունը եւ ոգեւորվելով սյունյաց սովորույթներով, Բակունցի ընտանիքի հյուրընկալությամբ՝ առաջարկում է նկարել Բակունցի մորը: Բակունցն ու Սարյանը մի կերպ համոզում են Բախչագյուլին, եւ Սարյանը սկսում է նկարել: Նկարելու ընթացքում տեսնելով Բակունցի ուրախությունը՝ Սարյանը որոշում է նկարը նվիրել Ակսել Բակունցին: 35 թ-ից այս նկարն այս պատին կախված է»:

Տուն-թանգարանի հաջորդ սենյակը ճաշասենյակն է, որի պատերին կախված են Բակունցի կենսագրականին վերաբերող նկարներ, տվյալներ, նամակներ, իսկ ներքեւում ցուցադրված են Բակունցի գործերից, թարգմանություններից, իրերից: Քաջիկ Դոռունցի պատմելով, տկն. Բախչագյուլը 4 տղա է ունեցել, որոնցից երկուսին պատկերել է մեկ, մյուս երկուսին՝ մեկ այլ գորգի վրա: Երկու տղաներին պատկերող մի ուղեգորգը զցված է ճաշասենյակի հատակին, մյուսը՝ հացատանը: Ճաշասենյակի պատին աչքի է զարնում մի երկար նամակ՝ ստորագրված նորին վեհափառություն Մատթեոս Երկրորդ սրբազնագույն կաթողիկոսի կողմից: Տուն-թանգարանի տնօրենը մեր ուշադրությունը հրավիրելով կաթողիկոսի ստորագրությամբ նամակի վրա՝ հպարտությամբ պատմում է. «Բակունցի ծնողները, դպրոցի կոլեկտիվը Բակունցին Գետրգյան ճեմարանի գիշերօթիկ ընդունելու համար նամակ են գրում, որը ստորագրող 150 մարդկանցից է նաեւ կաթողիկոսը: Քաղաքագլխից մինչեւ քահանա բոլորը ստորագրում են նամակը եւ Բակունցին ընդունում են»: Ցուցադրությունների շարքում է նաեւ ՃՍԷ (նշանակում է՝ ճեմարան Սուրբ Էջմիածին) մակագրությամբ մի կավե ափսե, որը տնօրենի խոսքով, Բակունցը իր հետ ճեմարանից է բերել եւ որը նրա մայրը պահել է մինչեւ իր կյանքի վերջը:

Տնօրենը պատմում է նաեւ Բակունցի Ակսել անվան առաջացման մասին. «Գորիսում հիմնվում է գրական եւ թատերական խմբակ, որտեղ Բակունցը խաղում է Ակսել Բիեռնսոնի դերը: Այդտեղից էլ նրա անունը մնում է Ակսել»: Ցուցադրություններում մեծ տեղ են գրավում նաեւ Բակունցի գրքերը, դրանց օտարալեզու թարգմանությունների նմուշները՝ չեխերեն, ուկրաիներեն, իսկ վերջերս նաեւ իտալերեն, որի պատճենը տուն-թանգարանի տնօրենին են տրամադրել Իտալիայից եկած զբոսաշրջիկները: Ճաշասենյակի ցուցադրության մի հատված էլ Բակունցի՝ ազգային-ազատագրական պայքարին մասնակից լինելու մասին է հուշում: Քաջիկ Դոռունցը թվարկում է Բակունցի մարդկային արժանիքները, գրելու տաղանդը. «Երբ մարդիկ Ստալինին նվիրված երգեր էին երգում, Բակունցը գրեց իր «Մթնաձորը»՝ հայ գրականություն բերելով հայ մարդու բացառիկ կերպարը»:

Իսկ Բակունցի մասին Երեւանում հիշեցնում է Նալբանդյան փողոցում գտնվող այս ցուցանակը...

Բակունցի տուն-թանգարանի մյուս երկու բաժիններն էլ ծնողների ննջարանն ու հացատունն էին: Ծնողների ննջարանում ուշագրավ էր Բակունցի մոր տարազը, որը տուն-թանգարանի տնօրենի խոսքով, այդ ժամանակվա կանանց ունեցած երկու հագուստներից մեկն է. «Այդ ժամանակ կանայք երկու հագուս էին ունենում՝ ամենօրյա եւ տոնական: Բակունցի մորը թաղեցին տոնական հագուստով, իսկ ամենօրյա հագուստն այստեղ է»: Հացատանն էլ պահպանվել էին թոնիրը եւ Բակունցների ընտանիքի սպասը:

Քաջիկ Դոռունցը նշեց, որ իրեն հրավիրել են 1968 թ-ից ղեկավարելու տուն-թանգարանը: Տնօրենը ստանձնում է, որ մինչեւ այսօր տուն-թանգարանի նմուշները չեն թարմացվել, միջոցներ էլ չկան. «1968-ին թանգարանագիտության մակարդակի ցուցադրություն է, որը ոչ մի անգամ այս տարիներին չի փոխվել, չի թարմացվել»: Տնօրենը հույս ունի, որ պետությունը անպայման միջոցներ կհատկացնի տուն-թանգարանի ցուցադրությունը թարմացնելու համար: «Գորիսի նման չնչող քաղաքը Հայաստանի զբոսաշրջության երթուղու մեջ չկա, բայց Եվրոպայից, Ճապոնիայից, ամեն երկրից մարդիկ գալիս են Բակունցի տուն-թանգարան եւ հիանում, որ այսպիսի գող կա, այն էլ այսպիսի չչնչող քաղաքում է ծնվել», հպարտությամբ ասում է Քաջիկ Դոռունցը:

ԳՈՌԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գորիս-Երեւան

Բարի երթ ուսումնական տարվան

Այսօր հանրապետության մոտ 1400 դպրոցներում կինչի 2007-08 ուսումնական տարին ազդարարող զանգը: Վաղ առավոտից գեղեցիկ հագնված կես միլիոն դպրոցականներ կհաճախեն դպրոց, ուր իրենց անհամբեր սպասում են հարազատ ուսուցիչներն ու երկրորդ տուն դարձած օջախը: Շնորհավորելով թե դպրոցականներին, թե մանկավարժներին եւ թե ծնողներին նոր ուսումնական տարվա առիթով, մաղթում ենք, որ նրանց երեխաների կրթությունը լինի խորը, գիտելիքների ծարավը՝ հագեցած:

Երեկ նախադպրոցական աշխուժ եռուզեռ էր նաեւ Վահան Թեքեյանի անունը կրող չորս կրթօջախներում, որոնք հատուկ ծրագիր էին մշակել դպրոցի սաների առաջին ուսումնական օրը հիշարժան դարձնելու համար:

Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքում գտնվող Վահան Թեքեյանի անվան կրթօջախի տնօրինուհի **Անահիտ Խալաթյանը** տեղեկացրեց, որ նախորդ օրը կայացել է վերջին մանկավարժական խորհրդի նիստը, որի ընթացքում «քննարկվել է ուսումնական պլանի հաստատումը, դասղեկների, մեթոդ միավորումների, դպրոցական բաղադրիչների հաստատումը, նաեւ մի շարք կազմակերպչական հարցեր՝ սեպտեմբերի 1-ի միջոցառումների հետ կապված»: Այս տարի կրթօջախ առաջին անգամ ոտք դրած 60 սաները կստանան նվեր՝ գրենական պիտույք, դասագրքեր: Ճիշտ ժամը 9-ին դպրոցի զիլ զանգի կանչով կազդարարվի ուսումնական տարվա սկիզբը եւ կրթօջախի 890 սաներին ողջույնի, բարեմաղթանքի խոսքեր կհղի տնօրինուհի Անահիտ Խալաթյանը մաղթելով. «Թող ձեր գալը բարի լինի ու ողջ ուսումնական տարվա ընթացքում որեւէ խոչընդոտի չհանդիպեք, գիտցեք, որ միշտ ձեզ օգնության հասնող մանկավարժները, մոր պես ուշադիր ու նվիրված են: Թող Աստծո ողորմածությունը բոլորիս հասնի ու գիտցեք, որ պարտավոր եք Վահան Թեքեյան մեծ բանաստեղծի անունը բարձր պահել»: Տկն Խալաթյանից տեղեկացանք, որ շրջանավարտների 90 տոկոսը արդեն բուհերի ուսանողներ են, որը հրաշալի ցուցանիշ է: Կրթօջախում ամռանը մեկ շաբաթով հյուր էին Կանադայի Թեքեյան մշակութային միության երիտասարդական թեւի 12 անդամներ, որոնց ուժերով վերանորոգվել է 3-րդ հարկը: Բացի այդ կրթօջախի մի մասնաշենի կրթօջախում սանհանգույցները ու տանիքը վերանորոգվել են ամբողջությամբ Աժ պատգամավոր Սամվել Ալեքսանյանի աջակցությամբ, որի համար էլ հատուկ շնորհակալություն հայտնվեց պատգամավորին: Իսկ Մալաթիա-Սեբաստիայի թաղապետարանը իր շնորհավորական ուղերձի հետ դպրոցին նվիրել է գնդակներ:

Արագածոտնի մարզի Կարբի գյուղում գտնվող Վահան Թեքեյանի անվ. դպրոցում, ինչպես տեղեկացրեց տնօրեն **Արսեն Օհանյանը**, «Ուրախ ենք, որ ուսումնական տարին սկսում ենք վերանորոգված շենքում: Անց է կացվել բնական գազ, ունենք լոկալ ջեռուցում, փոխվել են դպրոցի ամբողջ պատուհանները պետբյուջեից հատկացրած (140 միլիոն դրամ) գումարներով»: Առաջին զանգից ու ողջույնի խոսքերից հետո դպրոցի 800 սաները, որոնցից 73-ը առաջին անգամ են ոտք դնում դպրոց, իրենց շնորհակալական խոսքը կհայտնեն բարեկարգ ու վերանորոգված դպրոց իրենց «նվիրելու» համար:

Ստեփանավանի Վահան Թեքեյանի անվան դպրոցի տնօրեն **Վարդա Մարտիրոսյանը** տեղեկացրեց, որ մանկավարժական խորհրդի նախորդ օրվա նիստում քննարկվել է 12-ամյա կրթության, դասագրքերի ու նաեւ դասաժամերի բաշխման հարցերը: Այսօր դպրոցն ունի 342 սան, որից 30-ը առաջին դասարանցիներ են ու դեռ ընդունվողների հոսքը շարունակվում է: Ուսումնական տարվա բացման առիթով մանկավարժներին ու դպրոցականներին շնորհավորելու են նաեւ համայնքի ղեկավարները:

Գյումրիի Վահան Թեքեյանի անվան կրթօջախում սեպտեմբերի 1-ի տոնակատարությունը տպավորիչ է լինելու: Ամենուր ծաղիկներ, փուչիկներ: Գեղեցիկ ու կոկիկ հագնված դպրոցականները հենց կրթօջախի բակում կշարվեն տոնական տողանի ու ուրախությամբ կվայելեն տնօրեն **Անուշ Փիլոյանի**, մարզի ղեկավարների ողջույններն ու շնորհավորանքները: 952 սան ունի կրթօջախը, որից առաջին անգամ դպրոց ոտք կդնեն 88-ը (66-ը հայկական դասարաններում, 22-ը՝ ռուսական): Պրն Փիլոյանը նշեց, որ «նոր դասագրքերով զինված ենք: Առաջին դասարանցիներին ու 20 անապահով ընտանիքի երեխաներին պայուսակներ ու գրենական պիտույքներ կնվիրեն Սամվել Բալասանյանը ու նրանց կմաղթի բարի երթ»:

Վահան Թեքեյանի անունը կրող չորս կրթօջախների տնօրենները միմյանց շնորհավորելուց զատ, իրենց շնորհավորանքի ջերմ խոսքերը **«Ազգի»** միջոցով ցանկացան փոխանցել բոլոր մանկավարժներին, դպրոցականներին ու ծնողներին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Շամպայն սառեցնենք սեպտեմբերի 2-ին

Կյանքում այդքան նեղաբնակ քիչ բան է ուղվագծվում իմ մտքի պատասխանին:

Անունը-դեմքը-ձայնը-խոսքը-կերպարը այնքան համեստաբար, որ թվում է, թե մեծ բեմերն էլ բնականոն շարունակությունն են այսպիսի գոյության: Իսկ դրանք Հասմիկ Պարոյանի կյանքում որքան հաճախ են վառագույր բացում, այնքան աշխարհի ազդեցիկ լրատվամիջոցներում հաջողություն բառի հոմանիշներն են շատանում:

Ամեն ինչ չէ, որ նրա կյանքում ժամացույցի ճշգրտությամբ է աշխատում: Ուղարկած փոստն ու խոսքերը երբեք չեն ուշանում, բայց ժամանակացույցը մեկ էլ տեսար հանգստի պատճանը փոխարինեց բեմական հրավառությամբ: Այսպիսի օրինակ էր տարիներ առաջ Ամստերդամի նրա Նորման, որի տրված՝ DVD օրինակը կարող է փաստել՝ քանի՛ երգչուհի կարող է առանց փորձի բեմ մտնել, խաղընկերների հետ երգել այնքան դաշն, որ աղեստի ֆնարդասներին առիթ տա զարմանալու: 2007-ի հունիսին հարավֆրանսիական Մոնպելիեում էլ հիվանդ երգչուհուն փոխարինելու նրա այդպիսի «ցատկը» տեղական մամուլը՝ «Midi Libre»-ն անկրկնելի հաջողություն որակեց՝ շեշտելով առանց փորձի գերազանց երգելու նրա կարողությունը:

Նրա ընթացքին հետեւողները կհակադարձեն՝ ինչ կա զարմանալու՝ չէ՞ որ խոսքը «առաջնակարգ վոկալ» ունեցող երգչուհու մասին է, ինչպես նրան բնութագրել էր 2007-ի ապրիլյան համարում գերմանական «Opernwelt» ամսագիրը: Բայց միայն սա չէ, որ զարմացնում է..

Հայաստանը, հայրենիքը սիրելու այդքան մեծ շնչառություն դեռ ոչ մի երգչից չեմ զգացել՝ ամենամեծ արացույցը թերեւ հայրենի այն բացառիկ բառագանձն է, որի կողքն է աշխարհի որ անկյունում էլ լինի՝ հարցազրույցներում, թե առօրյա խոսքում, նամակներում, թե հեռախոսային կարճ զրույցում դրա հենքն այնքան ամուր է, այնքան լի թարմ շերտերով, որ թվում է, թե օտար միջավայրում՝ հյուրանոցներում, օդանավերում ու գնացքներում «Հայկազյան բառգիրքը» նրա սեղանի պարտադիր առարկան է:

Միշտ մեզանից հեռու է՝ մենք դահլիճում ենք, մենք ծափահարողն ենք, ինքը խոնարհվողը: Ի դեմ վերջինի մասին. տեսնել եք, թե մեր հոնկայաս կեցվածքին ինքն ինչպիսի՛ ոնց է մասուցում..

Անդիմադրելի մի ցանկությամբ ուզում ես գտնե տարեդարձի օրը՝ սեպտեմբերի 2-ին իր կողքին լինել. որտե՞ղ՝ Ամստերդամի Concertgebouw-ում, ուր փորձում է Օդաբելլայի դերերգը՝ սեպտեմբերի 8-ին կայանալիք «Աթիլլայի» համերգային տարբերակում, ինչը հեռաստվելու է ուղիղ եթերով: Գրեթե անկարելի է՝ փորձից հետո գնացք է նստելու, հասնելու Վիեննա, բոլորովին նոր ու տարբեր դերակատարման՝ սեպտեմբերի 3-ին իր 6-ամյա Սիրանուշին առաջ անգամ դպրոց կուղեկցի, հետո էլի գնացք կնստի ու Ամստերդամ կվերադառնա:

Ուրեմն լույսի արագությունը գերազանցող մեր միտքը՝ բազում պահարան օրհնանքներով ու դեռ չարտասանած բառերով թող վահան լինեն նրա ճանապարհներին՝ դեբյուտների սեպտեմբերն էլ շամպայնի շատրվանով թող ցողվի:

ԼՈՒԻԶԱ ՀՈՎԱՆԵՍՅԱՆ

Գերմանիա

ՀԱՕԿ-ի նախագահը պարգեւատրեց կարատեիստներին

Վախճանվել է օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Իգոր Նովիկովը

Արդեն գեղեցիկ ավանդույթ են դարձել միջազգային մրցասպարեզներում մեդալներ նվաճած հայ մարզիկների պարգեւատրման արարողությունները ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի կողմից: Երեկ էլ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում ՀԱՕԿ-ի նախագահը հերթական դրամական պարգեւները հանձնեց հայ կարատեիստներին: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, օրերս Բուենոս Այրեսում կայացած կարատեի աշխարհի գավաթի խաղարկությունում Հայաստանի շոտոկան ոճի կարատեիստները պարզապես փայլուն մրցելույթներ էին ունեցել: Եզրափակիչում հաղթելով ԱՄՆ-ի կարատեիստներին, մեր հավաքականը չորրորդ անգամ անընդմեջ նվաճել էր աշխարհի գավաթը: Մեր կարատեիստներն ընդհանուր առմամբ արժանացել էին 15 ոսկե, 8 արծաթե եւ 3 բրոնզե մեդալի:

Ողջունելով կարատեիստներին, Գագիկ Ծառուկյանը նշեց, որ շաս ուրախ ու հպարտ է նրանց մարզական սխրանքի համար, որոնք բարձր են պահել Հայաստանի մարզական պատիվը, հաղթանակի կամք ու վճռականություն են դրսեւորել: Եվ թեեւ կարատեն օլիմպիական մարզաձեւ չէ, սակայն Գագիկ Ծառուկյանը հավաստիացրեց, որ այսուհետեւ բոլոր մարզաձեւերն էլ լինելու են թե ՀԱՕԿ-ի, թե սպորտի եւ երիտասարդության նախարարության ղեկավարության ուշադրության կենտրոնում, անհրաժեշտ աջակցություն են սպանալու, որպեսզի Պեկինի օլիմպիական խաղերում անպայման հայ մարզիկները պարգեւների արժանանան:

Այնուհետեւ ՀԱՕԿ-ի նախագահը դրամական պարգեւներ (500-ական դոլար) հանձնեց 2-ական ոսկե մեդալ նվաճած Մարիամ Մարտիրոսյանին, Էդմոնդ Բուլդուլյանին, Դավիթ Ոսկանյանին, Հրաչյա Վարժապետյանին, Տիգրան Մուրադյանին, աշխարհի մյուս չեմպիոններ Նարեկ Միքայելյանին, Արա Գասպարյանին, Մհեր Աղեկյանին, Սամվել Առաքելյանին, Արմեն Գասպարյանին, արծաթե մեդալակիրներ Թամարա Մարտիրոսյանին, Վազգեն Հարությունյանին, Ռեմա Հակոբջանյանին, Մելսոն Եփրեմյանին, Հարություն Ալեքսանյանին, 3-րդ մրցանակակիրներ Դավիթ Օհանյանին, Ռազմիկ Սահակյանին: Իսկ Ֆեդերացիայի նախագահ եւ հավաքականի գլխավոր մարզիչ Գրիգոր Միքայելյանը պարգեւատրվեց 1000 դոլարով: Վերջինս Ֆեդերացիայի անունից իր շնորհակալությունը հայտնեց ՀԱՕԿ-ի նախագահին եւ նրան սուր նվիրեց: Նա նաեւ նշեց, որ մրցումների մասնակցելու երկար տարիների ընթացքում երեւի թե առաջին դեպքն էր, որ կարատեիստներին աջակցել են թե նախարարությունը, թե ՀԱՕԿ-ը, իսկ Բուենոս Այրեսում՝ Արգենտինայում ՀՀ դեսպանատան աշխատակիցները, տեղի հայ համայնքի ներկայացուցիչները: Գրիգոր Միքայելյանը հավաստիացրեց, որ այսուհետեւ հայ կարատեիստները կաշխատեն հաջող մրցելույթներով ուրախացնել իրենց երկրպագուներին:

Երբ միջոցառումը մոտենում էր ավարտին, մարզական լրագրողների Ֆեդերացիայի նախագահ Յուրա Ալեքսանյանը տեղեկացրեց, որ լուսադեմին Սանկտ Պետերբուրգում 78 տարեկանում վախճանվել է օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն, հնգամարտի աշխարհի հնգակի չեմպիոն Իգոր Նովիկովը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին աշխարհահռչակ մարզիկի հիշատակը:

Կական կրկնակի դափնեկիր

Մոնակոյում անցկացված Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի վիճակահանության ժամանակ տեղի ունեցավ նաեւ նախորդ խաղարկության արդյունքներով լավագույնը ճանաչված ֆուտբոլիստների պարգեւատրման հանդիսավոր արարողությունը:

Ամենամեծ մենարանի արժանացավ Չեմպիոնների գավաթակիր իտալական «Միլանի» բրազիլացի ֆուտբոլիստ Կական: Նա արժանացավ երկու պարգեւի՝ որպես Չեմպիոնների լիգայի նախորդ խաղարկության լավագույն ֆուտբոլիստ եւ լավագույն հարձակվող: Ավելացնենք, որ Կական 10 գոլով ճանաչվել էր նաեւ մրցաշարի լավագույն ռմբարկու: Այնպես որ իրոք բրազիլացի ֆուտբոլիստը գերազանցեց մրցակիցներին: Կական դարձավ «Միլանի» առաջին ֆուտբոլիստը եւ 3-րդ բրազիլացին, որ արժանանում է Չեմպիոնների լիգայի լավագույն ֆուտբոլիստի կոչմանը: Բրազիլացիներից նման պատվի էին արժանացել նաեւ Ռոնալդինյոն (2006 թ., «Բարսելոն») եւ Ռոնալդոն (1998 թ., «Ինտեր»): Իսկ 2005 թ. Կական «Միլանի» ֆուտբոլիստներից առաջինն էր, որ խաղային իր օրակում (կիսաեզրափակություն) ճանաչվել էր լավագույնը: Կական նշել է, որ Չեմպիոնների լիգայի մրցաշարն իր սրտում հատուկ տեղ ունի եւ անհամբերությամբ է սպասում խմբային մրցաշարի մեկնարկին:

Լավագույն դարպասապահի մրցանակին է արժանացել «Չելսիի» չեխ դարպասապահ Պետր Չեխը: Վերջին 3 տարում նա 2-րդ անգամ է նման պատվի արժանանում: Առաջին անգամ Չեխը լավագույնի կոչմանն է արժանացել 2005 թ.: Իսկ առավել հաճախ՝ 4 անգամ լավագույնի մրցանակին է արժանացել «Բավարիայի» դարպասապահ Օլիվեր Կանը 1999-2002 թթ.: Վերջերս Չեխը Պրեմիեր լիգայում 100-րդ անգամ դարպասը պահել էր անառիկ եւ 3-րդ անգամ անընդմեջ ճանաչվել էր Չեխիայի լավագույն դարպասապահը:

Լավագույն պաշտպանի մրցանակին արժանացել է «Միլանի» 39-ամյա լեգենդ Պաոլո Մալդինին, որի համար նախորդ մրցաշրջանը 22-րդն էր եվրագավաթներում: Մալդինին դարձավ պարգեւի արժանացած ամենատարեց ֆուտբոլիստը: «Մենք վերջին 20 տարվա Իտալիայի, Եվրոպայի եւ աշխարհի լավագույն թիմն ենք եւ այդ փուլը դեռեւս չի ավարտվել», հայտարարել է Մալդինին: Ի դեպ, մինչ Մալդինիին պարգեւատրելը, ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին «Սեւիլիայի» 22-ամյա պաշտպան Անտոնիո Պուերտայի հիշատակը:

«Միլանի» երրորդ ներկայացուցիչն էլ՝ 31-ամյա փորձառու ֆուտբոլիստ Կլարենս Չեդորֆն արժանացավ լավագույն կիսապաշտպանի տիտղոսին: «Կարեւոր է շարունակել տվյալները եւ կատարելագործվել, թեկուզ եւ վեսերան լինես: Այժմ խաղիցս ավելի մեծ բավականություն եմ ստանում», նշել է Չեդորֆը:

Խմբերի կազմը հայտնի է

Մոնակոյում կայացած վիճակահանությամբ Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մասնակից 32 թիմերը բաժանվեցին ութ խմբի: Ահա խմբերի կազմը:

«A» խումբ

«Լիվերպուլ» (Անգլիա)
«Պորտո» (Պորտուգալիա)
«Մարսել» (Ֆրանսիա)
«Բեշիքթաշ» (Թուրքիա)

«B» խումբ

«Չելսի» (Անգլիա)
«Վալենսիա» (Իսպանիա)
«Շալկե-04» (Գերմանիա)
«Ռոսենբորգ» (Նորվեգիա)

«C» խումբ

«Ռեալ» (Իսպանիա)
«Վերդեր» (Գերմանիա)
«Լացիո» (Իտալիա)
«Օլիմպիակոս» (Հունաստան)

«D» խումբ

«Միլան» (Իտալիա)
«Բենֆիկա» (Պորտուգալիա)
«Սելթիկ» (Շոտլանդիա)
«Շախտյոր» (Ուկրաինա)

«E» խումբ

«Բարսելոն» (Իսպանիա)
«Լիոն» (Ֆրանսիա)
«Շտուտգարտ» (Գերմանիա)
«Գլազգո Ռեյնջերս» (Շոտլանդիա)

«F» խումբ

«Մանչեսթր Յունայթեդ» (Անգլիա)
«Ռոմա» (Իտալիա)
«Սպորտինգ» (Պորտուգալիա)
«Դինամո» (Կիեւ, Ուկրաինա)

«G» խումբ

«Ինտեր» (Իտալիա)
ՊՍՎ (Հոլանդիա)
ԲԿՄԱ (Ռուսաստան)
«Ֆեներբահչե» (Թուրքիա)

«H» խումբ

«Արսենալ» (Անգլիա)
«Սեւիլիա» (Իսպանիա)/ԱԵԿ (Հունաստան)
«Սյաուլա» (Ռումինիա)
«Սլավիա» (Չեխիա)

Խաղերը տեղի կունենան սեպտեմբերի 18-19-ին, հոկտեմբերի 2-3-ին, 23-24-ին, նոյեմբերի 6-7-ին, 27-28-ին եւ դեկտեմբերի 11-12-ին:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

Հեղինե Եփրեմյանն էլ նվաճեց Եվրոպայի փոխչեմպիոնի տիտղոսը

Իտալիայի Պավիա քաղաքում ընթացող ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում Հայաստանի հավաքականին 2-րդ արծաթե մեդալը պարգեւեց 17-ամյա Հեղինե Եփրեմյանը, որը Սմբատ Մարգարյանից (50 կգ) հետո դարձավ հայազգի Եվրոպայի երկրորդ փոխչեմպիոնը:

13 ծանրորդուհիներ էին դուրս եկել մրցահարթակ՝ վիճարկելու մինչեւ 58 կգ քաշային կարգում առաջնության պարգեւները: Հայաստանը ներկայացնող Հեղինե Եփրեմյանը հաջող հանդես եկավ եւ դարձավ մրցանակակիր: Պոկում վարժությունում նա բարձրացրեց 82 կգ, իսկ հրումում իրեն ենթարկեց 100 կգ-անոց ծանրաձողը: Երկու վարժություններում էլ Հեղինեի արդյունքը երկրորդն էր եւ նա արժանացավ արծաթե մեդալների: Երկամարտի 182 կգ արդյունքով էլ հայ մարզուհին գրավեց 2-րդ տեղն ու արժանացավ Եվրոպայի փոխչեմպիոնի տիտղոսին:

Իսկ ուժեղագույն ճանաչվեց ռուսաստանցի Նատալիա Կավերինան, որը երկամարտում ցույց տվեց 192 կգ (87+105) արդյունք: Բրոնզե մեդալը 170 կգ (80+90) արդյունքով նվաճեց հույն մարզուհի Կոնստանտինա Լադոուն:

Մինչեւ 63 կգ քաշային մարզուհիների մրցավեճն ավարտվեց գերմանուհի Քրիստին Ուլրիխի հաղթանակով: Նա երկամարտում ցույց տվեց 191 կգ (85+106) արդյունք: Երկրորդ տեղը գրավեց Օխսանա Կուլովան (Ռուսաստան)՝ 183 կգ (83+100): Բրոնզե մրցանակակիր դարձավ բելառուսցի Մարինա Շերոնկովան՝ 180 կգ (82+98):

Մինչեւ 69 կգ քաշային ծանրորդների մրցավեճի մասնակիցների թվում էր Հոլանդիան ներկայացնող 17-ամյա Կարեն Թուվմասյանը: Նա 21 ծանրորդների մրցավեճում գրավեց 13-րդ տեղը՝ ցույց տալով 222 կգ (102+120) արդյունք: Իսկ չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Ալբերտ Սայախովը, որը երկամարտում ցույց տվեց 290 կգ (128+162) արդյունք: Նրան ընդամենը մեկ կգ-ով զիջեց լեհ ծանրորդ Կրժիստոֆ Զվարիչը: Իսկ ահա բրոնզե մեդալակիր, բուլղարացի Կրասիմիր Ռենկովը բավական զիջեց առաջատարներին՝ ցույց տալով 265 կգ (115+150) արդյունք:

«Միկան» դուրս մնաց պայքարից

Աշտարակի «Միկայի» ֆուտբոլիստներին չհաջողվեց պահպանել Սլովակիայի «Արմենիայի» նկատմամբ Երեւանում հաստած առավելությունը (2-1): Պատասխան խաղում «Միկան» անհաջող հանդես եկավ եւ մրցակցին զիջելով 0-2 հաշվով, դուրս մնաց հետագա պայքարից: Արդեն 5-րդ րոպեին օգտվելով մեր պաշտպանների ու դարպասապահի անհամաձայնեցված խաղից, Օրժերան բացեց հաշիվը: 1-0 հաշիվը ձեռնտու էր «Արմենիային», ուստի դաշտի տերերը խփած գոլից հետո հիմնականում մսահոգված էին սեփական դարպասի պաշտպանությամբ: Իսկ ահա «Միկան» ցավոք այդպես էլ չանցավ վճռորոշ գործողությունների: Ճիշտ է, ողջ խաղի ընթացքում գնդակով ավելի շատ «Միկայի» ֆուտբոլիստներն էին գրոհում, սակայն դրանք զարգացնում էին դանդաղ եւ փոքր ուժերով: Դա էր պատճառը, որ «Միկային» այդպես էլ չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին:

Հյուրերը միայն մեկ անգամ գոլային իրական պահ ստեղծեցին, երբ 64-րդ րոպեին Արմեն Շահգելդյանը հիանալի փոխանցումով մենամենակ դուրս բերեց Կլեբեր Նասիմենտոյին, սակայն վերջինս չկարողացավ գրավել դարպասը: Պաշտպանն ու դարպասապահը համատեղ ուժերով սպառնալիքը չեզոքացրին:

Իսկ ահա դաշտի տերերը կարողացան զարգացնել հաջողությունը: 72-րդ րոպեին կորնիս փնալ թույլ տվեց «Միկայի» դարպասապահ Ֆելիքս Հակոբյանը, որը չկարողացավ որսալ մրցակցի հարվածը՝ անհաջող հեռ մղելով գնդակը: Առաջինը գնդակին հասավ Օրժերան եւ կրկնապատկեց հաշիվը:

Տավալին այն է, որ «Միկան» պարտվեց իրեն ոչնչով չգերազանցող մրցակցին: Դեռեւս Երեւանում «Միկան» հիանալի հնարավորություն ուներ լուծելու հաջող փուլի ուղեգրի հարցը եւ խոշոր հաշվով հաղթանակ տոնել, սակայն ավելորդ զգուշավորություն դրսեւորելով, չօգտագործելով գոլային մի շարք պահերը, սեփական հարկի տակ կարողացավ հաղթել ընդամենը 2-1 հաշվով: Իսկ հյուրընկալվելիս «Միկայի» գործողություններում պակասում էր հաղթանակի հասնելու վճռականությունը:

Թեեւ թիմը պարտվում էր, սակայն այդպես էլ «Միկայի» գործողություններում չտեսանք համարձակ ու վստահավոր գրոհների կազմակերպում, հարվածներ դարպասին, առանց որի դժվար է գոլ խփել: Այնպիսի տպավորություն էր, կարծես «Միկան» շահում էր հանդիպումը: Նման խաղաոճով, իհարկե, դժվար էր հաջողություն ակնկալել:

Մրցանակակիրները որոշվեցին փորձերի քանակով

Օսակայում ընթացող թեթեւ atլետիկայի աշխարհի առաջնությունում բավական համառ ու հետաքրքրական պայքար ծավալվեց տղամարդկանց ձողացատկի հատվածում: Պայքարի լարվածությունն իր գագաթնակետին հասավ 2 մ 35 սմ բարձրությունը հաղթահարելիս: Առաջին իսկ փորձից այդ բարձրությունը հաղթահարեց Բահամյան կղզիների ներկայացուցիչ Դոնալդ Թոմասը: Ռուսաստանցի Յարոսլավ Ռիբակովը եւ կիպրոսցի Կիրիակոս Իոանուն միայն երկրորդ փորձից հաջողության հասան, իսկ ահա օլիմպիական չեմպիոն Ստեֆան Հոլմը այդպես էլ չկարողացավ հաղթահարել բարձրությունը եւ դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից:

Այսպիսով, երեք ձողացատկողները ցույց տվեցին միեւնույն արդյունքը եւ պատվիրեցին 2մ 37 սմ: Բայց նրանց բոլոր 3 փորձերն էլ անհաջողության մատնվեցին: Արդյունքում չեմպիոն հռչակվեց Թոմասը, որը 2 մ 35 սմ բարձրությունը հաղթահարել էր առաջին իսկ փորձից: Արծաթե մեդալը նվաճեց Ռիբակովը, բրոնզե մրցանակակիր դարձավ Իոանուն:

Սկավառականետման հատվածում ինչպես եւ սպասվում էր, չեմպիոնական տիտղոսին արժանացավ գերմանուհի Ֆրանկա Դիսցը՝ 66,61 մ: Երկրորդ ցուցանիշը պատկանում է ռուսաստանցի Դարյա Պիշչալնիկովային՝ 65,78 մ: Բրոնզե մեդալը բաժին հասավ Կուբայի մարզուհի Յարելիս Բարիոսին (63.90 մ): Տղամարդկանց 5000 մ վազքում առաջինը վերջնագիծը հատեց ամերիկացի Լագաթը՝ 3 ր-ոպե 34,77 վրկ.: Կանանց 400 մ վազքում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Օխուրուգուն 49,61 վրկ. արդյունքով արժանացավ ոսկե մեդալի:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Բնապահպանական խնդիրները Հայաստանում դժվար լուծելի են

Համակարգն է պատճառը

Բնապահպանական խնդիրները Հայաստանում դժվար լուծելի են համակարգի, այլ ոչ միջոցների կամ ջանքերի պակասի պատճառով: Կարծիքն այս արտահայտեցին Հայաստանի մի շարք բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք երեկ ժուռնալիստների միությունում ասուլիս էին հրավիրել տեղեկացնելու վերջին ամիսների իրենց գործունեության արդյունքներն ու անհաջողությունները: ՀԿ-ներն անդրադարձան երեք խնդրի, որոնք ներառվել են նրանց գործունեության շրջանակում:

Իրան-ԱՄՆ հարաբերություններում Հայաստանը կարող է դերակատարություն ունենալ

Հայաստանյան շուրջ 40 ՀԿ բաց նամակով դիմել է Միացյալ Նահանգների, Իրանի Իսլամական Հանրապետության, Հայաստանի Հանրապետության ղեկավարներին եւ Միջազգային կազմակերպություններին, որում ասված է. «Մենք դեմ ենք մեր տարածաշրջանում միջուկային զենքի տարածմանը: Դեմ ենք խորհային ռումբերով հզոր կեցային ռմբահարումների միջոցով այս հարցի լուծման ռազմավարությանը: Պրոբլեմն առկա է, լուծում է պահանջում: Հենց այդ նպատակով էլ դիմում ենք ՀՀ ղեկավարությանը եւ կոչ ենք անում սանձել խաղարար միջնորդական առաքելություն մեզ բարեկամ երկու երկրների միջեւ պայթյունավտանգ կոնֆլիկտի հնարավոր հարթեցման հարցում: Հույսով, որ այդ կերպ համատեղ ուժերով կկանխենք հնարավոր գլոբալ էկոլոգիական աղետը, որի կենտրոնում անկախ իր կամքից կարող է հայտնվել Հայաստանի Հանրապետությունը»:

Իսկ աղետը անխուսափելի կլինի Իրանի տարածքում խորհային ռումբեր գործադրելու դեպքում, քանի որ դա կբերի տարածաշրջանի սեյսմիկ ռեժիմի անոմալ շեղումներ պայթյունից 1000 կմ շրջագծով, ինչը կներառի ՀՀ ողջ տարածքը, անխուսափելի կլինեն մեծ թվով երկրաշարժերը: Դրանք հնարավոր կլինեն երկրագնդի նաեւ այն գոտիներում, որտեղ բնական երկրաշարժեր երբեւէ չեն գրանցվել: Ռմբակոծման բերած խախտումների հաղթահարման համար անհրաժեշտ կլինի առնվազն մեկ տարի եւ ավելի: Այս մասին խոսեց ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ **Մանե Հակոբյանը՝** հիմք ընդունելով հատուկ ուսումնասիրության արդյունքները:

ՀԿ-ների առաջարկությունը գնահատելի են համարել ու նախաձեռնողներին ընդունել են Եւ ԱՄՆ, Եւ ԻԻՀ դեսպանատներում: Ինչպես տեղեկացրեց «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախագահ **Կարինե Դանիելյանը,** առաջինում առաջարկը կարետրելով ասել են. «գուցե այդկերպ Հայաստանը նպաստի ԱՄՆ-ԻԻՀ անմիջական շփումներին, ինչը վաղուց տեղի չի ունենում», երկրորդում նույնպես գնահատելի են համարել ՀԿ-ների առաջարկը:

Եվրոինտեգրումը կարող է նպաստել

18 հասարակական կազմակերպություններ էլ հայտարարությամբ 6 կետով մահոգություն են արտահայտել «Եվրոպա-նոր հարեւաններ» շրջանակներում իրականացվող ծրագրերի առնչությամբ: Ողջունելով հանդերձ Հայաստանի ինտեգրումը եվրոպական կառույցներին, նրանք հույս են հայտնել, որ դա ԵՄ մակարդակում առավելագույնս կնպաստի մահոգության հիմք հանդիսացած բացասական երեւույթների հաղթահարմանն ու երկրի կողմնորոշմանը դեպի կայուն զարգացում: Վերջինիս, ՀԿ-ների կարծիքով, մեծապես խոչընդոտում են բնապահպանական օրենսդրության թերակատարումը, բնապահպանական եւ հաղթահարական նորմերին հակասող հաղթահարական գործունեությունը, երկրի բնական ռեսուրսների վրա մարդու ազդեցության էական աճը եւ այլ խնդիրներ: Ինչպես փաստեց WWF կազմակերպության ղեկավար **Կարեն Մանվելյանը,** այսօր Հայաստանի ընդերքի հետազոտման լայն աշխատանքներ են կատարվում եւ առավելապես կատարվում է բիզնես շահույթը, մինչդեռ բնապահպանական ապահովության կարետրումը պատշաճ մակարդակում չէ:

Երեւանի էկոլոգիական վիճակը դեռ երկար կմնա անբարենպաստ

Մայրաքաղաքի էկոլոգիական վիճակի անբարենպաստությունն ապահովող գործոնները շատ են, բայց մեծ բազմազանություն չեն ապահովում: Հիմնական պատճառը բիզնես գնահատականով եւ էկոլոգիական խնդիրները հաշվի չառնելով քաղաքաշինական ծրագրերն իրականացնելն է: Այս ուղղությամբ ՀԿ-ների կատարած աշխատանքը անբավարար չէ, բայց եւ արդյունավետ համարելն անհնար է: Այսպես է գտնում Կարինե Դանիելյանը եւ իրականությունը բացատրում պետական մոտեցմամբ, որում բնապահպանական աշխատանքները կատարվում են փաստաթղթային, լսումների մակարդակով, բայց ոչ մի կերպ չեն վերածվում գործի:

Հերթական բաց նամակով էկոլոգիական հասարակական դաշինքը (32 ՀԿ) դիմել է ՀՀ նախագահից մինչեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ ասելով. «Խախտելով քաղաքաշինական եւ էկոլոգիական նորմերը՝ շարունակվում է Կենտրոնի ինտենսիվ «կեցային» կառուցապատումը՝ հիմնականում կանաչ գոտիների ոչնչացման, պատմաճարտարապետական հուշարձանների Կենտրոնի մշտական խցացման հաշվին»: Իհարկե, այս տեղեկացումն այն իրականացնող իշխանությունների համար որպես նորություն չի հնչում եւ անսպասելի չեն նաեւ բաց նամակում բերված անվանական դեպքերը, սակայն արձագանքը պահանջվածի ճիշտ հակառակն է: Անդրադառնանք մեկ օրինակի՝ Գետառը Հերացու փողոցից մինչեւ Սայաթ-Նովայի փողոց փակելու որոշմանը բնապահպանները կտրականապես դեմ են արտահայտվել՝ տալով անհրաժեշտ մասնագիտական բացատրություն, սակայն որոշումը կայացվել եւ իրականացվում է ընդլայնված ծավալներով (ներառվել է նաեւ խանջյան փողոցի հատվածը), այն էլ առանց դրական փորձաքննության: Զուգահեռաբար շարունակվում է նախապես կանաչ գոտիները անխնամ թողնելով չորացնելու, ապա դրա բացակայությունը փաստելով կառուցապատելու քաղաքականությունը:

ՆԱՆՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ,

Հ.Գ.-Բնապահպանների լիովին բացատրված ու տեղին արտացայտությունն ասուլիսի ավարտին տրամաբանական ընթացքից անցավ զգայական դաշտ ու կարծիք բարձրաձայնվեց, որ հայ ժողովրդի մենթալիտետում փոփոխություն է կատարվել՝ ծառ տնկելու փոխարեն կտրում ենք: Փաստենք, որ կտրողը ակնհայտորեն ժողովուրդը չէ:

«Շիրակէքսպո» հերթական ցուցահանդես

Մասնակիցներ նաեւ Լոռու մարզից

«Շիրակի մրցունակության կենտրոն» հիմնադրամի նախաձեռնությամբ, ԱՄՆ ՄԶԳ եւ «Դիվիլոփմընթ Օլտերնըթիվզ Ինկ.» կազմակերպության աջակցությամբ երեկ Գյումրիում կազմակերպվել էր արդյունաբերական արտադրանքի եւ ծառայությունների երրորդ մասնագիտացված ցուցահանդեսը: «Շիրակէքսպո-2007» ցուցահանդես-վաճառքին մասնակցության հայտ էին ներկայացրել թեթեւ, քիմիական արդյունաբերության, սննդամթերքաբերության, խաղողագործության, հրատարակչական ոլորտի, մեղվաբուծական ձեռնարկություններ, տպագրական օբյեկտներ ու ծառայություններ, ընդհանուր առմամբ մասնակցեցին մոտ երկու եւ կես տասնյակ տնտեսվարող սուբյեկտներ ինչպես Գյումրի քաղաքից ու Շիրակի մարզից, այնպես էլ, առաջին անգամ, Լոռու մարզից: Բացման ժամանակ ելույթ ունեցան ու ցուցահանդեսը ողջունեցին Շիրակի մարզպետ **Լիդա Նանյանը,** Գյումրու փոխքաղաքապետ **Գագիկ Մանուկյանը,** ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի գրասենյակի տնօրեն **Ջեյմս Կարլսոնը,** Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի տնօրեն **Իշխան Կարապետյանը:**

«Շիրակի մրցունակության կենտրոն» (ՇՄԿ) հիմնադրամը վերջին տարիներին բավական հետեւողական աշխատանք է կատարում մարզի արտադրական ներուժն ու գործող ծառայությունների առկա պատկերը լայնորեն ներկայացնելու, մրցունակ արտադրատեսակների համար հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս ճանապարհ հարթելուն աջակցելու ուղղությամբ: Մարզի արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ սպասարկման ոլորտների ներկայացուցիչները ՇՄԿ-ի աջակցությամբ ոչ մեկ անգամ մասնակցել են նաեւ Երեւանում կազմակերպված «Էքսպո» միջազգային ցուցադրություններին: «Շիրակէքսպո» ցուցահանդեսները կազմակերպվում են 2005 թվականից, տարին մեկ: Կարծում ենք՝ արդեն նաեւ միջմարզային դառնալու հավակնող այս կարեւոր ձեռնարկման արդյունքն առավել մեծ կլինի, եթե դրան շահագրգիռ մասնակցություն հանդես բերեն հանրապետության համապատասխան գերատեսչություններն ու դրանց ղեկավարները:

Գ. Մ.

Հայաստանի ամերիկյան համալսարանի
Հատուկ դասընթացների բաժինը
2007թ.-ի սեպտեմբերին առաջարկում է
հետեւյալ դասընթացները

Հանրային կապեր (PR), սկզբունքներ եւ պրակտիկա
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 10-ից մինչեւ 2007թ. դեկտեմբերի 05-ը
Դասընթացի վարձը՝ 100 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

TOEFL iBT նախապատրաստական դասընթաց
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 17-ից մինչեւ 2007թ. հոկտեմբերի 27-ը
Դասընթացի վարձը՝ 75 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

Գործարար հաղորդակցության դասընթաց
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 17-ից մինչեւ 2007թ. նոյեմբերի 08-ը
Դասընթացի վարձը՝ 100 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

Թարգմանության դասընթաց
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 17-ից մինչեւ 2007թ. նոյեմբերի 08-ը
Դասընթացի վարձը՝ 100 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

Անգլերենի դասընթաց բժիշկների համար
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 12-ից մինչեւ 2007թ. հոկտեմբերի 26-ը
Դասընթացի վարձը՝ 75 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

Ընդհանուր անգլերենի դասընթացներ յոթ փուլով
Յուրաքանչյուր փուլի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 12-ից մինչեւ 2007թ. նոյեմբերի 06-ը
Դասընթացի վարձը՝ 90 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

Թռչունների ճանաչման դասընթաց
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 10-ից մինչեւ 2008թ. ապրիլի 28-ը
Դասընթացի վարձը՝ 29 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

GIS Geographical Information Systems
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. հոկտեմբերի 01-ից մինչեւ 2007թ. հոկտեմբերի 25-ը
Դասընթացի վարձը՝ 60 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

UNIX համակարգերի կառավարում
Դասընթացի տեւողությունը՝ 2007թ. սեպտեմբերի 17-ից մինչեւ 2007թ. նոյեմբերի 03-ը
Դասընթացի վարձը՝ 80 000 դրամ (ներառյալ ԱԱՀ)

Դիմորդները պետք է հանձնեն անգլերեն լեզվի քննություն **սեպտեմբերի 3-ին ժամը 11:00-ին** ՀԱՀ-ի մեծ դահլիճում (2-րդ հարկ): Քննության վարձն է 2500 դրամ:

Դասընթացների գրանցման պայմաններին ծանոթանալու համար դիմել
ՀԱՀ-ի Հատուկ դասընթացների բաժին՝ 19ա սենյակ, 40 Մ. Բաղրամյան պող., Երեւան, 0019
Աշխատանքային ժամերն են՝ 09:00-ից մինչեւ 17:30, երկ-ուրբ.: Հեռ. 51-27-06
E-mail: extension@aua.am; http://www.aua.am/extens.htm

www.azgdaily.eu

Առանց կանխավճարի ակցիան՝ մինչեւ հոկտեմբերի 1-ը

Ընդառաջելով բնակչության բազմաթիվ դիմումներին, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն մինչեւ ***2007թ. հոկտեմբերի 1-ը*** երկարաձգում է իր նախաձեռնած ակցիան հետեւյալ պայմաններով՝

այն բնակիչները, որոնք մինչեւ 2007թ. հոկտեմբերի 1-ը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կներկայացնեն դիմում գազաֆիկացման մասին, դիմումի ներկայացմանը հաջորդող 30 օրերի ընթացքում կկնքեն գազամատակարարման ցանցին միացման պայմանագիր եւ այդ պայմանագրով նախատեսված ժամկետում կվճարեն շինհավաքակցման աշխատանքների իրականացման համար հաշվարկված վճարի 80 տոկոսը, կազատվեն գազաֆիկացման համար 40 000 դրամ կանխավճարի մուծման պարտականությունից:

Կորել է

Անժելա Մհերի Սոլոմոնյանի միջնակարգ դպրոցի A-073490 համարի ավարտական վկայականը: Համարել անվավեր:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 31.08.2007 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	336.45
EUR	1	ԵՎՐՈ	457.91
RUR	1	Ռուս. ռուբլի	13.12
GEL	1	Վրաց. լարի	202.38

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄԱՐԵԼ՝ 58-28-60

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ալեքսիերան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 31.08.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: